




3437-3439

491.99-8  
7-38





Handwritten text at the top of the right page, possibly a title or header, written in a cursive script.

Handwritten text below the top line on the right page.

Faint, illegible handwritten text in the upper middle section of the right page.

2010



11941

Printed in Turkey

### ՅԱՌԱԶԱԲԱՆ


Սոյն Հատընտիր Հաւարածոյն՝ զոր պատրաստելով ՚ի լոյս կ'ընծայենք, կրնայ իբր առաջնորդ ծառայել մարուք եւ ընտիր աշխարհաբար գրելու ի պէտս դեռավարժ ուսանողաց, որ քաղցր հաճոյքով կը պարապին սորվելու իրենց մայրենի լեզուն — յաւետ նուիրական եւ պարտաւորիչ — :

Յարենք սակայն քէ ի նոյն յաջողելու համար անհրաժեշտ պայման է ուսանիլ զգրաբարն, վասն զի կանոնաւոր աշխարհաբարն ծնունդ է գրաբարի, որում քաջահմուտ եղողն կրնայ մարուք աշխարհաբար գրել, ըստ որում աշխարհաբարն առանց գրաբարի օժանդակութեան՝ կանոնաւոր լեզու չէ :

Շատ ցաւայի է, որ մեր ազգային վարժարանաց մեջ՝ յարգելով հագուստէպ բացառութիւնները, գրաբարի մըշակութեան հոգ չտարուիր պէտք եղած կերպով, մինչդեռ մեր վարժարանաց մեջ՝ որ լոկ ազգային են, պարտ է առաջնակարգ տեղը տալ ուսմանց ծանրաբեռնեալ ծրագրին մեջ գրաբարի ուսուցման, որ շատ բան կ'արժէ վասն զի իր մեջ կը պարունակէ մեր կրօնքն եւ Հայազգային կեանքը :

Երկու խօսք ալ ընենք մեր պատրաստած այս գործի մասին :

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Պ. ՅԱԿՈԲԵԱՆ  
Թարգմարչար փողոց, Սասնը խան ; 3, 5



2069  
39

1882

Հաւաքածոյիս նիւթերը կը կազմեն ազգային յարգելի Հեղինակաց եւ Գրագիտաց գործեր, յորոց ընտրանօք քաղած ենք՝ գլխաւորաբար ուշադրութիւն նուիրելով պարզ, մաքուր եւ ընդիր գրուածոց, որոց ընթերցումը նորահաս ուսանողաց մեծ դիւրութիւն կուտայ հետեւելու կանոնաւոր եւ մաքուր աշխարհաբարի, եւ կը ծառայէ կրթելու եւ ազնուացնելու ուսանողաց ոճն ու ճաշակը :

Մեր ուսանողք եք կը փափաքին պարզ, մաքուր եւ ընտիր աշխարհաբար գրել, պարտին նախ գրաբարը սորվիլ, եւ խնամով ու ընտրութեամբ շատ կարգալ, իրենց մտացը մեջ բազում գաղափար շտեմարանել, եւ այնու գրելու փորձուիլ : Ահաւասիկ ասոնք են գլխաւոր պայմանք գրելու արուեստին :

Հաւաքածոյիս երկրորդ մասը՝ որ ընդ մամլով է, ընդ հուպ պիտի հրատարակուի. բաց այլոց կը պարունակէ գրագիտական ճիւղին վերաբերեալ կարեւոր գիտելիք եւ նշանաւոր հեղինակաց կենսագրութիւնք :

Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

Հ Ա Տ Ը Ն Տ Ի Ր

Հ Ա Ի Ա Ք Ա Ծ Ո Յ

Ա Ր Զ Ա Կ Ե Ի Ո Տ Ա Ն Ա Ի Ո Ր

Ը Ն Տ Ի Ր Գ Ր ՈՒ Ա Ծ Ո Յ

Ա Ռ Հ Ա Յ Մ Ա Յ Ր Ե Ր

Մտիկ ըրէ՛ք, ապագային ծոցէն ճիչ մը, ձայն մը կը լսուի, անմեղութեան ճիչն է, նոր սերնդեան ձայնն է : Ի՞նչ կը ճչէ, ի՞նչ կը ձայնէ. բառ մը զոր անտարակոյս Աստուծով ուսած է, բառ մը զոր քաղցր և սրտաուռչ<sup>1</sup> կ'արտասանէ, զոր տազնապալիր<sup>2</sup> կը գոչէ, « մա՛յր, մայր » և դողդոջուն բազուկները զայն կը վնտռեն, և աղերսական<sup>3</sup> նայուածք մը կը նետէ որ կարծես ըսել կուզէ « գթա՛ յիս, և վրկէ զիս » :

Մտիկ ըրէ՛ք և գթացէ՛ք այդ անմեղութեան վրայ, որ ձեզ միայն կը գոչէ, մայրեր :

Կաթ կուզէ :

Ճշմարտութեան կաթով լցուած ստինքներ պատրաստեցէ՛ք իրեն :

Համբոյր կուզէ :

Սիրոյ և առաքինութեան սրբաջերմ հրով այրող շուրթներ պատրաստեցէք իրեն :

Ձեռք կուզէ :

Մին մարդը , և միւսն ճշմարիտ և կատարեալ յաւիտենական էակը ցուցնող ձեռներ պատրաստեցէք իրեն :

Սիրտ և հոգի կուզէ :

Գեղեցիկն և բարւոյն , վեհին և վսեմին , ճշմարտին և կատարեալին զգացմամբ պճնեալ<sup>1</sup> սրտեր և հոգիներ պատրաստեցէք իրեն :

Կաղաչեմք — վերջին անգամ — խնայեցէք այդ անմեղութեան , այդ վառաց սերնդեան վրայ և յարատեւեցէք :

Իրաւ է որ դուք այսօր քրտինք կը թափէք , դուք այսօր ձեր աչաց լոյսը գիշերին կը ծախէք անկէ մտածութեան վայրկեաններ գնելու համար :

Դուք այսօր ձեր կենաց թանկագին վայրկեանները , ժամերը ու օրերը մութ և լռին սենեակներու կը դատապարտէք , հոն ձեր զաւակաց մտաւորական և հոգեւոր հասցը աւելի կանուխ և առաւել դիւրին հայթայթելու միջոցներ փնտռելու համար :

Դուք այսօր կը զոհուիք մէկ խօսքով :

Սակայն գիտցէք որ ձեր այդ հեղած քրտամբը , ձեր սպառած աչաց լոյսով , ձեր ծախած թանկագին վայրկեաններով , և վերջապէս ձեր անձին զոհողութեամբն է որ օր մը , շատ մօտ օր մը , ձեր անմահութիւնը պիտի գնէք :

**Ե . Տեմիրխայաւեան**

Քառք.—[1] Սրտաշարժ , կարօտած : — [2] Հոգով լի : — [3] Աւազական : — [4] Զարգարեալ :



**ՅԻՍՈՒՍ Ի ԲԵԹԵԼԱՅ ՍԱՐ**

Ձոհիդ ժամ հասաւ . և դու հասար Բեթելայ սարին գլուխ , Յիսուս , խաչդ ի դեպին դիր , ո՛վ դու խաչի մշակ , արեւակէզ<sup>1</sup> ճակատիդ քիրտն սրբէ , զաչերդ ի վեր ա՛ռ , տե՛ս ահա կուգայ անառակ որդին , մարդկութեան թշուառ զաւակ , վեց հազար տարի է երկրիս վերայ կը թափառի , և այժմ ի սպառ չքաւորեալ անօթի քաղցած կը վերադառնայ հայրենի տունը . զքեզ Գողգոթային գլուխը գտաւ և դու երկինքէն մինչեւ Բեթլէհէմի մուտ և անտի մինչեւ այսր՝ զայն կորոնէիր<sup>2</sup> և ահա գտեր : Գիրկս ա՛րկ<sup>3</sup> , համբուրէ՛ , զի դու երկնից Հօր գորովոյն բազուկներն ես . զքեզ երկինքէն մինչեւ յերկրի պարզեց որ գրկես անառակ որդին , յուսիդ վերայ բառնաս մալորեալ ոչխարը : Տե՛ս , Տէր կորսուած դրամն ևս ոտքիդ տակն է , ժանգոտած եղծուած<sup>4</sup> բոլորովին , կը ճանչես<sup>5</sup> արդեօք , ա՛յդ է քո տիրական պատկերն ու կնիքը :

Տէր , դու այս անգին գիւտերուդ համար զի՞նչ գին կը վճարես . արդէն գիտես Հօրդ կամք , դու նորա ի յաւիտենից<sup>6</sup> պահեալ պարարակ<sup>6</sup> եղն ես , նա կը հրամայէ որ անառակ որդւոյն դարձին համար գենուն<sup>7</sup> զքեզ , խնճոյից սեղան կազմուի , հրեշտակներ ու մարդիկներ առհասարակ հրաւիրուին , երկինք և երկիր զիրար գրկախառնեն , հաշտութեան աղեղն\* Գողգո-

(\*) Ձրնեղեղէն յետոյ Աստուած հաշտութեան նշան դրած էր զժամանը , նոյնպէս ալ Քրիստոսի Տեառն մերոյ փրկագործութիւնը նշան եղաւ մարդկային ազգի փրկութեան և տղատութեան ի գերութենէ սատանայի :

Թայլի գլխէն ճգէ դէպ երկինք , և հասնի Աստուած-  
պետական աթուին առաջ . խռոված Հայրն հաշտուի  
աշխարհին հետ :

Փրկութեան աւուր երրորդ ժամն եհաս , տարածիր՝  
Յիսուս , պարզէ՝ ամենազօր բազուկներդ քառաթեւ  
սեղանին՝ վերայ , թոյլ տուր , որ զենուն զքեզ ,  
լուռ ու մունջ բերանդ մի՛ բանար , դու անխօս որոջ՞  
մի ես քո կտրիչներուն առաջ . ճիշդ այնպէս կա՛ց  
ինչպէս գուշակեց Յսային :

Զմուսեալ գինի կուտան քեզ , չգիտեմ , քեզ կը կա-  
րեկցի՞ն<sup>10</sup> , որպէս զի թմրիս և սաստկագոյն ցաւ չըզ-  
գաս . թէ վասն այն կարբուցանեն քեզ , որ անագան  
մեռնիս , ընդերկար ողջ մնաս խաչին վերայ , թշնա-  
միներդ վա՛շ վա՛շ կարգան քո դէմդ և զքեզ աւելի  
ևս զկծեցուցանեն<sup>11</sup> : Այսպէս վարեցան ընդ քեզ կա-  
տաղի ոխերիմներդ<sup>12</sup> , չգիտնալով թէ դու մարդոյն  
սիրով արբեալ՝ կամուզ անզգայեալ ես :

Սարեկայ խաչի ծառէն կախուած , ո՛վ ճշմարիտ  
զոհ , քանի՛ անուշահոտ է ծուխդ որ կը ծաւալի և կը  
ծառանայ դէպ երկինքը , աշխարհ բովանդակ զոհիդ  
փրկութեան հոտով լցաւ : Եւ ահա քո Հայր Աստուած  
Երկինքէն իջեր է Գողգոթային գլուխը , հրեշտակներ  
ու մարդիկ խաչիդ սանդուղէն ելեւէջ կառնեն<sup>13</sup>  
հաշտութեան կամար կապեր է մէկ ծայրն յԱստուած ,  
միւսն ի մարդիկ , երկինք և երկիրը ի հաշտութիւն կը  
կապէ : Եւ այսպէս կը լրանայ և կաւարտի , Տէ՛ր ,  
փրկաւէս զոհիդ մեծահրաշխորհուրդ :

Խորմեան Հայրիկ

Բառք . — [1] Արեւէն այրած : — [2] Կը փնտէիր : — [3] Գիր-  
կրս ա՛րկ , գրկէ : — [4] Աւրուած : — [5] Ի սկզբանէ (Գ.) : —  
[6] Պարստ : — [7] Մորթեն : — [8] Քառսքեւ սեղան , կը նշա-  
նակէ՝ խաչ : — [9] Էգ գառնուկ : — [10] Մեղքնայ : — [11] Տանջել : —  
[12] Թշնամի : — [13] Ելեւէջ կառնեն , կենեն կիչնեն :

ՀՕՐԸ ՏՈՒՆԸ

Ա . Որչափ ընդարձակ է աշխարհս , գիւղեր , քա-  
ղաքներ , լեռներ ու դաշտեր բազմամարդ են բնակ-  
չօք . բայց ինձ համար միմիայն տեղի , յորում օտար  
չըլլամ՝ իմ հօրս տունն է :

Բ . Սիրելի է ինձ զամէնքը ուրախ տեսնել իմ  
չուրջս , իցի՛ւ<sup>1</sup> փոքր ազայք , գեղեցիկ և կայտառ ,  
իւրեանց ծնողաց խնդութիւնն ըլլան . երիտասարդք  
նոցա նեցուկը<sup>2</sup> , ծերունիք խնդալից գգուեն իրենց  
բազկաց մէջ իրենց թոռնեակներն և բնութիւնը ամե-  
նուն ժպտի՛ սակայն ինձ համար միմիայն տեղի յորում  
ուրախ կարենամ ըլլալ , միշտ հօրս տունն է :

Գ . Տե՛ս սա ծիծառները որոց բոյնը մեր տանեաց  
քիւին<sup>3</sup> անկիւնն է . ի՛ նչպէս խնդալից են . ամբողջ  
ընտանիք մ՛են նոքա , բարի հայրը կանուխ կ'երթայ  
պարէն փնտռելու մինչ մայրիկը կը խնամէ ի բնի իւր  
սիրուն ձագերը . ահա անոնցմէ մին որոյ թեւք արդէն  
զօրաւոր ըլլալու են զի կ'երթայ կը թառի մօտաւոր  
ծառին մի ճիւղին վրայ ուր իւր հասակակից թռչնիկք

կրջէն զինքը գեղգեղանօք<sup>1</sup>, հոն վայրիկ մի կ'երգէ անոնց հետ. յետոյ իւրաքանչիւրը կը վերադառնայ առ մայր իւր: Այն սիրուն էակներուն համար իրենց բոյնը իրենց տունն է:

Դ. Այո՛, մենք ալ այդ պզտիկ արարածներուն պէս ենք, որովհետեւ կ'ըսուի թէ, մենք ալ անոնց պէս հիւր ենք յաշխարհի: Ահա՛ մեր հայրը գնաց իւր աշխատութեան պարսպելու մեզի համար, մինչդեռ մեր մայրիկ առտնին հոգն ունի իրեն բաժին, նա կ'զբաղի օրն ի բուն պատրաստելու ինչ որ պէտք է իւր զաւակաց համար, նոյն միջոցին ես պիտի ընեմ, ինչպէս կ'ընեն այն նորատի ծիծուռնք որոնք առ ընկերս իւրեանց երթան, իբրեւ ի ժամադրեալ տեղի մտաւոր ճիւղին վրայ: Այո՛, ես ալ ունիմ գեղեցիկ ճիւղ մը ուր սիրելի է ինձ յաճախել. այդ մեր դպրոցն է, ուր ընկերքս արդ իսկ ինձ կ'սպասեն: Աշխարհիս մէջ այդ է միմիայն ընտանեաց յարկէն դուրս ասպհով տեղի իբրեւ իմ հօրս տունը:

Ե. Հոն կայ անձ մը պատկառելի իւր հասակաւը և աւելի ևս իւր իմաստութեամբը և առաքինութեամբը, կին մը ամենէն քաղցրագոյնը ու ամենէն համբերատարը յաշխարհի. սոքա ծնողք են աշակերտաց և աշակերտք իբրեւ անոնց զաւակունք. հոն կան ամէն տեսակ կտրիճ ուսուցիչներ, որչափ լաւ բաներ կուսանին անդ. մանաւանդ յառաջ քան զամենայն կուսանին սիրել զամենաբարին Աստուած, զծնողս, և զամենեսին իբրեւ եղբայր և քոյր: Ո՛հ, որչափ գոհ կ'ըլլան ուսանողք, երբ իրենց պարտականութիւնը լաւ կատարեն. յայնժամ կ'ոստոստեն<sup>3</sup> նոքա և կ'երգեն, և յետոյ յերեկոյին լի ուրախութեամբ իբրեւ թռչնիկք ի բոյն, իւրաքանչիւրը կը դառնայ իւր հօրը տունը:

Զ. Իցի՛ւ, երկնից օրհնու թիւնը տարածուի աշխարհիս վրայ իբրեւ ցօղ ՚ի մարմանդի<sup>6</sup>, իցի՛ւ հեռանան և ի բաց երթան բոլոր ձախողակի և բօթարեր<sup>7</sup> ամալք, որպէս զի առատ հունձք և կութք<sup>8</sup> իրար յաջորդեն և փոխարինեն մշակին աշխատութեանը, ինչպէս բարի և ջանասէր ուսանողք իրենց ուսուցչաց խնամոցը. իցի՛ւ այսպէս բարի տղայք կարենան ըստ կարգի նեցուկ ըլլալ իրենց բարի ծնողաց, և մէն մի պատանեակ օգտակար ըլլալով իւր նմանեաց՝ իւր բարի վարմունքովը պատուէ իւր հօրը տունը:

Թ. Ոսկան

Թաւ. — [1] Երանի՛ թէ: — [2] Օգնական: — [3] Տակեաց ֆիւ, տանեաց — [4] Երգք: — [5] Յատկատել: — [6] Հովասուն տեղուանք: — [7] Գութարեր: — [8] Այգեկուծք:

Չ Ա Տ Ի Կ

Չատիկ է այսօր, միտքս կը բերեմ հին օրերը, մեր ատենի Չատկի օրերը, երբ սղջ էին մեր հայրերն ու մայրերը: Առջի գիշերուընէ կսկսէին հնչել ուրախութեան ձայները, վառ ձայնը կոչնակին, ու դուռերնուս առջև դաշն<sup>1</sup> ու որոտ<sup>2</sup> ձայն մը որ մեզ եկեղեցի կը հրաւիրէր, վեր կը ցատկէինք. ի՛նչ զուարթ է զարթնումը, և այր ու կին, ծեր ու ու տղայ, ամենքն ալ

եկեղեցի կը վազէին, տուները կը պարպուէին, եկեղեցիները կը լենային. ու կը սկսէր ժամերգութիւնը բարձր ու խորհրդաւոր շեշտերով և հանդիսաւոր նուագօք, որ կարծես թէ ընդ տիեզերս համայն պիտի հընչէին, և այն սեւցած կամարներուն ներքեւ կը գոռային ալիւլուք և օրհնութիւնք ու փառաբանութիւնք, և տաղք ու շարականք իրարու կը յաջորդէին մին քան զմիւսն աւելի հոգեւոր՝ աւելի սրտառուչ<sup>5</sup>, և կ'երգէին դպիրք ու մեր սրտերն ալ կ'երգէին: Ո՛չ մէկ աւետեաց ձայն որ փողերով տաւիղներով<sup>1</sup> հռչակէ մի վեհապանծ թագաւորի յաղթութիւն կամ ազգերու երջանկութիւն, այնչափ հզօր և այնչափ քաղցր չէ հնչած որչափ այս բառերը « Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց », որուն ազդդակը Եկեղեցւոյ գմբէթն ալ կը պատուէր կ'անցնէր: Ու խուռն բազմութիւն մը հեւալով կը մնար ի խոր զմայլման՝ լուսով ու խուռնկով ողորուն եկեղեցւոյն մէջ: Եւ ահա կը դառնայինք եկեղեցիէն ու կը բազմէինք նահապետական սեղանի մը շուրջ: Մեր հայրը կը փառաւորուէր այն օրը, աւելի փառաւոր էր քան աշխարհակալ թագաւոր մը և մեր սիրտերը լի էին անպատուով ուրախութեամբ ու բնութիւնն ալ կը խայտար մեզի հետ որ նա ալ իր վերածնութեան տօնը կը կատարէ այս օրերս: Մարդիկ ամէն օրուան մարդիկը չէին, տարւոյն մէջ այն օրը միայն այն օրն ալ ըլլար, մեծ և երջանիկ կ'զգային զիրենք: Ա՛լ մեղաւոր չկար ի միջի, ամենքն ալ առաքինի, և էր որ առյապապայն<sup>5</sup> ալ պիտի մնար առաքինի. զի եթէ մարդիկ կան որ բարի կը ծնին և այնպէս կը մնան, ինչ որ են ի բնէ, այլ կրօնքն է միայն որ բարի կ'ընէ զմարդ ետքէն ինչ որ չէ ի բնէ, որ յուր<sup>6</sup> ծնած է կամ յուր եղած: Ոչ խեղ<sup>7</sup> մնացած էր, ոչ

ատելութիւն, այլ ընդհանուր եղբայրասիրութիւն: Իրարու կ'երթային, իրար կը շնորհաւորէին, կը համբուրէին: Անհուն սիրոյ ծուղակի<sup>8</sup> մը մէջ բռնուած մոռցեր էին առջի օրուան վիշտերը, հետեւեալ աւուր հոգերը և ինչ որ բոս աշխարհի կիրք է ու շահ՝ զայն ի բաց թողեր էին: Աստուծոյ կիրքը միայն ունէին:

Ա՛հ, ի՛նչ մեծ օր է այս օրը ուստի կը բղխին մըշտահոս ալիքներով մխիթարութիւնք ու ներշնչմունք անձնուիրման, սիրոյ, նահատակութեան. և ոչ միայն Քրիստոնէին, այլ ամեն տեսակ հաւատացելոց համար՝ որոնք ի վերացականն ու ի մտացականն յառեալ են, որոնց առջեւ կը պարզի անկապտելի և անկործանելի՝ անհուն իտէականը<sup>9</sup>: Ի՛նչ կ'ըլլար, դարէ դար ու թէ հազարաւոր ու բիւրաւոր ամաց չըջաններ իրարու յաջորդէին, քանի որ հոսէր ժամանակը անսպառելի՝ մնար նաև խանդն հրաբորբօք՝ մեր հարցն ու նախահարց, և ամեն տարի, միեւնոյն օրին, աշխարհի ամեն կողմը, ուր մարդիկ կը բնակին, Աստուածորդւոյն չարչարանաց ու խաչելութեան յիշատակը նորոգուէր, ինչպէս կը նորոգուին քիչ-չատ ամեն կեանքի մէջ, ու յարութեան օրն ալ ըլլա՛ր ընդհանուր ուրախութեան օր, աւետաբեր յարութեան և փրկութեան հոգւոյ՝ տառապեալ մարդկութեան:

Աւա՛ղ, մնաց արդեօք այն մեր օրերուն հաւատքը: Այո՛, հիմա ալ կ'երթան շատեր եկեղեցի, կը մտնան՝ կ'ելլան. ոմանք կը ձանձրանան այն նուագները, այն շարականները լսելով. կամաց կամաց կ'ուծանան<sup>10</sup> կը հեռանան, և օր օրի վրայ կը բազմանայ անոնց թիւը որք եկեղեցի չեն երթար: Ուրիշ տեսակ տաճարներ կը կանգնին հիմա, ուր իրար կը խաբեն, իրար կը կո-

զօպտեն, ուր մարդոց բոլոր կարողութիւնքը կը ճըգտին<sup>11</sup> մի ևեթ նպատակի, և որոնց մէջ քահանայներն ու քահանայապետները նոյն Իսրայէլի զաւակներն են որ ատենօք Սինայի ստորոտը ոսկի հորդքը պաշտեցին: Այլ ո՞ւր Մովսէս, ո՞ւր մարգարէք, ո՞ւր որոտմունք ներշնչմանց: Մարդիկ որ երբեմն գիտէին բարձրանալ հիմա թաւալիլ<sup>12</sup> կը սիրեն: Յուրա ձեռք մը հպաւ<sup>13</sup> այն հրավառ ճակատուց, բան մը սողոսկեցաւ այն կուրծքերուն մէջ զոր մեծ մտածութիւնք ու սուրբ զգացմունք վեր կը հանէին երբեմն: Ուրիշ բաներու համար կը սկսին վառուիլ մարդիկ քան այն բաներուն համար որ մարտիրոսներ, գիւցազուններ կը յարուցանէին: Յախշտակութիւն՝ եռանդ՝ անձնուիրութիւն, յիմարութիւն կը համարուին ասոնք. դրականը վերացականին վրայ յաղթանակ կը կանգնէ: Հրեայք անգամ մըն ալ զՔրիստոս ի խաչ կը հանեն և երեսուն արծաթի կը վաճառուի ամեն օր արքայութիւնն Աստուծոյ որ ի ներքս ի մեզ է:

Գ. Ս. Օսեան

Բառք. — [1] Մերմ: [2] Որոտման պէս զոչոյ: — [3] Կարօտած: [4] Քնար: — [5] Ապագային: — [6] Գէշ: — [7] Կոխ: — [8] Որոգայթ: — [9] Անհուն իսկական, կը նշանակէ՝ Աստուած: — [10] Պսղի: — [11] Հասնելու ջանալ: — [12] Գլորիլ: — [13] Դպչիլ:



Զ Ա Ն Գ Ա Կ Ն

Ա՛հ, զանգա՛կն, ի՛նչ գործի բանաստեղծական. զանգակն որ հո՛ս, վե՛րն կը կախուի օդոց մէջ՝ անշունչ՝ բայց կենդանի, բայց պերճախօս. անձնիւր<sup>1</sup> մարդոյ մտաց մէջ ի՛նչ և ո՛րպիսի յիշատակներ կապուած են իւր ծննդավայր գլուղին կամ թաղին զանգակին հետ. մինչ մանուկն էր՝ ի թինդ<sup>2</sup> այդ սրբազան պղնձոյն կը զարթնոյր, նորա ձայնով կ'աղօթէր ձեռնամած իւր մօրկան քով ի ծունր, կամ կը գիմէր տաճարն՝ զոր այնքան կը սիրեն մանուկն և կիճն, այդ ձայնն աւելի աշխոյժ, կ'աւետէր կիւրակէն և տօնն, երջանկութիւնքն մանուկին. զիա՞րդ կը տխրէր իւր մատաղ ու քնքոյշ<sup>3</sup> հոգին, երբ զանգակն, արտոմաճայն օդոց մէջ կ'ողբայր մահն. կը յիշէ այն գիշերներն ուր զանգակին տազնապարիոյթ<sup>4</sup> զանչիւնն<sup>5</sup> ընդօստ զարթուցած էր տունն ու թաղն « Հրգե՛հ » դուժեկով, և իւր արհաւիրքն, և իւր արցունքներն. լացա՛ւ իւրեան հետ այդ պղինձն՝ երբ իւր հայրն կամ մայրն, եղբայրն կամ քոյրն կը յուզարկաւորէր վերջին անգամ Աստուծոյ տունն և անտի մեր ամենուն վերջին տունը. հուշակեց նաեւ իւր կենաց մէջ այն երջանիկ օրն, ուր նոր փեսայ, սեղանին ոտքը տարաւ իւր հոգւոյն և կենաց ընկերն: Այս ամէն յիշատակներն և նոցա յարակցութեամբ<sup>6</sup> անցած դացած օրերու և դիւպաց բոլոր զուարթ ու տխուր պատկերներն կը վերակենդանանան յիշողութեան մէջ. մանաւանդ, երբ մարդ, երկար մի բացակայութենէ յետոյ, կը դառնայ իւր ծննդավայրն և ի հեռուստ կը նշմարէ իւր գիւղին

կամ քաղաքի զանգակատանց մէջէն իւր թաղին զանգակատունն . այդ առարկայն մի հոգի է , մի բարեկամ հոգի , որ գոգցես<sup>7</sup> իւրեան կ'սպասէր , որ ամենէն առաջ կը գիմաւորէ զինքն միջոցին մէջէն , որոյ ձայնն կը ձանաչէ բազմաթիւ տարիներէ յետոյ և բազմաթիւ զանգակաց մէջ , զոր գտնելով պանդուխտն կը կարծէ գտնել վերստին բոլոր իւր սէրն , բոլոր իւր երազները , բոլոր իւր յիշատակներն , իւր մանկութեան մանաւանդ որ՝ որչափ ասլըինք այնքան աւելի մարած օրերու ծուխին մէջէն կ'ընծայէ մեր աչաց իբրեւ երանաւէտ գարնանազարդ Ովասիս<sup>8</sup> անապատին փոթորկայոյզ աւազին մէջէն :

ՈՒՆՆԵՐԻ ԳԵՂԱՐԵԱՆ

Քառ. — [1] Ամէն մէկ , — [2] Թնդալով , — [3] Փափուկ , — [4] Անասարելու : — [5] Չանգակի ձայն : — [6] Կապ : — [7] Կարծես : [8] Անաստաներու մէջ գտնուած բարերեր տեղուանք :

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Երբ որդին մեռնի՝ հայրը կուլայ ծանրաթախիծ<sup>1</sup> , այլ ժամանակը անոր այս ցաւը միւս ցաւերէն աւելի չ'յարգէր . բայց տարիներով ետքը նայէ՝ մօր սիրտը՝ դեռ նոյն վէրքն արիւնահոս է : Արարչագործութեան մէջ այն սիրոյն նմանող բան մը չ'կայ . մէկ վայրկենի մէջ կը ծնանի սուրբ՝ անհուն՝ աննուաճ<sup>2</sup> . այնչափ

բուռն որ զայն չ'գիտցողը կը տանի անդր քան զնիւթական բնութիւն , որ ցաւն իրեն հեշտութիւն կ'երեւցնէ , զրկումը՝ վայելք , և այս ոչ թէ գիպուածով անցողական իմն՝ այլ անդուլ՝ անյեղի<sup>5</sup> . անոր համար ոչ նուազիլ կայ՝ վասն զի այսպիսի փոփոխութիւնք անկատարութեան նշաններ են : Եւ այն զգաց իւր Արեւայ անշունչ մարմնոյն վրայ փարելով՝<sup>4</sup> ինչ որ Հեկաբէ\* տեսնելով իւր Հեկտորին գետնաքարը դիակը , և ինչ որ ի կատարած անդր աշխարհի պիտի զգայ վերջին մայրը : Արբահամու հաւատարմութիւնը պանծացնելու համար՝ երէց մը կը պատմէր թէ երբ Աստուած իրմէ մինչեւ իսկ իւր միամօր որդին խնդրեց՝ սուրբ նահապետը զայն չ'զլացաւ . « Ա՛հ , ազաղակեց , ունկնդրաց մէջէն մայր մը , Աստուած այսպիսի զոհ մը չէր կրնար մօրմէ մը խնդրել » : Այդ սիրոյն մէկ հրաշքն է ամբողջովին կերպարանափոխ ընել զկին . այնու թեթեւ ազդիկը՝ լուրջ կըլլայ , անկանխատեսը զգոյշ և խնամուտ , կարծես մանկիկը յերկնից իջնելով՝ երկփեղկեալ՝ թողուց անոր մէկ գուռն և երկնաւոր լուսոյ հոսանք մը կ'ողողէ<sup>6</sup> մայրենի ճակատը :

ՈՒՆՆԵՐԻ ԳԵՂԱՐԵԱՆ

Քառ. — [1] Մեծ տրամուծեամբ : — [2] Անյաղձելի : — [3] Անփոփոխ : — [4] Փամթուիլ : — [5] Բաց : — [6] Թրջել :



(\*) Հեկաբէ՝ Տրոյացոց Պրիամու Սագաւորին կնոջ անունն է :

### ՊԱՆԴԻՏԻՆ ԿԵԱՆՔԸ

Առ Արխիսակես Վ. Տէր Սարգսեանց

Նժդեհ՝ վարդապետ, գուք եւս նժդեհ լինելով՝ նժդեհին ցաւերը կ'զգայք, տեսնալով նոցա տառապեալ կեանքն ու վիճակը: Կը չըջիք ի մայրաքաղաքս և կը մտնէք պանդուխտներու մէջ, աչքով կը դիտէք, ձեռքով կը շօշափէք նոցա ամենադառն կեանքին բոլոր հանգամանքները: Յիշելով Աւետարանին բանը պանդուխտ հիւանդին ի տես գնացէք: Հովիւ ու հայր էք, մի՛ դարչիք<sup>2</sup>, դնացէք, մտէք մի ժահահոտ<sup>3</sup> սենեակի մէջ. կը տեսնէք հոն կտրիճ ու քաջալանջ<sup>4</sup> նորահասակ, նորապսակ մի երիտասարդ՝ մահճին մէջ հիւանդ ինկած կը հեծէ<sup>5</sup>. Ընտանի հոգացող մտերիմներէն ոչ զոք ունի շուրջ. ոչ գորովասիրտ<sup>6</sup> ծնողք, ոչ անձկալի<sup>7</sup> ամուսին, ոչ քոյր, ոչ եղբայր, ոչ բարեկամ, ոչ ազգական: Նա այնպէս ի վերջոյ կը մեռնի՝ անխնամ, անդեղ, անդարման: Հոգեվարքի պահուն մարած աչերն աչար անդր կը յածէ<sup>8</sup>. Երեւակայէ դու թէ զո՞վ տեսնել կուզէ: Հոն չեն զինքն լացող ընտանիքը՝ որ մի կաթ արտառք թափեն մեռած պանդխտին մահճին վրայ:

Ո՛հ, ո՞վ կը լինի պանդխտին յուղարկաւոր: Գնա, տես դու, դադաղին առաջ կերթայ մի պանդուխտ քահանայ, և ետեւէն քանի մը պանդուխտ եղբայրներ լուռ կերթան, խակի<sup>9</sup> չի լսուիր ողբ ու կոծ. պանդուխտներն զպանդուխտը կը տանին օտար երկրի ու հողին կաւանդեն<sup>10</sup>:

Կը տեսնե՞ս նաեւ հրօղարակաց անկիւնները կոյս կոյս<sup>11</sup> նստած մեր բեռնակիր եղբայրներն՝ որոց բազմոցներն իրենց համեաններն<sup>12</sup> են: Միթէ դուքա դաշտերուն այն խոնջեալ<sup>13</sup> մշակներն են՝ որ բանթողի<sup>14</sup> ժամանակ աղբիւրներու գլուխ և ցորենի բրգածեւ դէզերուն հովանեաց տակ նստած կը հանգչին և մանգաղները կը սրեն, մերթ եւս իրենց գլուխ նոցա տակ դնելով՝ անուշ քուն կը քաշեն:

Վա՛հ, հաղար վահ, այժմ ո՞վ կը վարէ դոցա տեղ, ո՞վ կը ցանէ, ո՞վ կը հնձէ: Դաշտերն ամայի մնացած են. նոցա հողառէր վաստակաւոր մշակներն ինչպէս կը տեսնաք օտարութեան մէջ մաշուելով՝ կսպառին՝ և կը մեռնին՝ ընտանեաց կարօտով, հողին կարօտով, սիրելեաց ու բարեկամաց կարօտով: Ո՞վ կը պատմէ և կը տանի պանդխտին մահուան լուր. ո՞վ կը գրէ նոցա գուժալից սեւ գիրը: Գուցայք սեւ թուղթերուն դպրին ես, որ մի կողմէն պանդուխտներու մահ կը պատմես, միւս կողմէն ընտանեաց ողբն ու կոծ, որդեկաց որբութիւնն, այրի մնացած ամուսնոյն սեւ բաղդ կ'ողբագրես:

Հայրիկ

2069  
39

Բառք. — [1] Պանդուխտ: — [2] Գանիլ: — [3] Գէշ հոտ ունեցող: — [4] Կուրծքը տնկած: — [5] Տքալ, լալ: — [6] Փափուկ, զթած սիրտ ունեցող: — [7] Սիրելի, փափաքելի: — [8] Կը պտտցընէ, կը դարձնէ: — [9] Բնաւ, (քառ գաւառակաւ): — [10] Կուտան, կը յանձնեն: — [11] Վրայէ վրայ, խումբ խումբ: — [12] (Սեւեր): — [13] Հոգնած: — [14] Յերկուան հանգիստ:



### ՍՏԵՂԾՈՒՄՆ ՄԱՐԴՈՅ

Իսկ հրաշագործ ճարտարապետն՝ իբր թէ պահ մը իսկատար թողլով իր ամենէն զարմանալի շէնքը՝ կու գլտէ անոր չափակցութիւնը, և ծանրութեամբ ու մտածմամբ կուզէ այդ կաւեղէն պատկերին ազդել ուղորկութիւն<sup>1</sup>, գոյն, շարժումն, շունչ, կեանք, զգացումն, բան և հոգի, և այս ամէն ըսածներս՝ իր գիտելուն և հաճելուն ատեն կ'ազդին, կերեւին իր ձեռակերտին<sup>2</sup> վրայ: Տե՛ս, ի՞նչ շուտ այդոր արտաքին երեւոյթն կակղած կոկած սկսաւ փայլիլ, հետզհետէ մտմագոյն, մոխրագոյն, շուշանագոյն, ծիրանագոյն, վերջապէս մարմնագոյն, և այնքան բարակ ու փափուկ, որպէս թէ թափանցիկ մաշկ<sup>3</sup> մը միայն ծածկեր էր ներքին զարմանալի մեքենայն, և իբրեւ սպակւոյ մը տակէն ցուցընէր կապուտաթեւ ջղեր և երակներ: Ահա յանկարծ բարակ գլխէն ինչուան ուսերը ընձուեցան<sup>4</sup> արձրկեցան գունդ գունդ խոպ խոպ փունջեր, բայց իբրեւ պղնձի անդրիլի<sup>5</sup> մը վրայ՝ անշարժ են. աղօտ աղօտ արշալուսէ մը ծագած առաւօտու պէս յանկարծ կ'երեւին բարակ թարթափք և յօնից<sup>6</sup> կամարք, որոց ներքեւ երկու մարգարտափայլ գոգք կան, մէջ տեղուանքը սեւ ադամանդ. — անշուշտ ճանչցար աչքերը. բայց անոնք գքեզ չեն ճանչեր, քեզի չեն նայիր, չեն շարժիր, սառնամած լճակներ են, ծածկուած ակունք են, որ կուզեն լոյս առնուլ և լոյս տալ: Եղիցի՛ ուրեմն լոյսն, անհամբերութեամբ կանչես. եղիցի՛ լոյս ի վերայ այդ սքանչելի դաստակերտիդ<sup>7</sup>. եղիցի՛ դա կեն-

դանի պատկեր Ասաուծոյ: Եւ ահա եղև լոյսն կենդանի: — Կու տեսնե՞ս, անդրին մարդ կ'ըլլայ. կ'ըլլայ ըսելու չմար, կաւէ կաղապարն՝<sup>8</sup> Ադամ եղաւ. ի՞նչպէս եղաւ, ո՞ւսկից եկաւ այն ճառագայթն, այն գոյներն, այն շարժումն. դեռ վայրկեան մը, բոպիկ մը, պիկ մ'առաջ՝ պատկեր էր. հիմա անձն է: Վասն զի հրաշագործն՝ աստուածային երագութեամբը դպաւ այդոր ճակտին, և մէկէն արձանին մեքենայներն սկըսան շարժիլ: Դիտէ՛ դա գանգուր<sup>9</sup> գիսակներն՝<sup>10</sup> ի՞նչպէս բարդ բարդ կու ծփան, նայէ՛ դա շիկորակ շըրթանց շարժմունքը, դա զմրուխտէ<sup>11</sup> աչաց հրեղէն թաւալմունքը, երկխորշեայ ռնգանց բարակ շնչառութիւնը, դա գեղեցիկ գլխոյն հեզիկ պտոյտքը, դա ջաջուռ թեւոց թափ տալը<sup>12</sup>, դա դոպթ<sup>13</sup> տուող ոտից դոփիւնը<sup>14</sup>, որ ոչ միայն անդրին ի պատուանդանէն կտրեցին, այլ բոլոր անձին ներքին ազդուածքէն ուժ առած՝ այնպէս սաստկութեամբ մը գետնին թունդ կու տան, որ օդապարիկ գունդէն աւելի շոյտ և բարձր պիտի ցատկէր յերկնից միջոց, թէ որ դեռ ճակտին վրայ դրուած չըլլար մատն աստուածային, որ իբրեւ ամեհի երիվար մը՝ սանձով, կամ ծխով հողմով զինուած պատրաստ նաւ մը՝ խարսխով, դեռ բռներ է զայն, բայց այնպէս մը կ'երեւի՝ թէ հաղիւ և ոչ ընդերկար կրնայ համբերել բռնուածն: Իսկ աստուածպետականն յետին հաճութեան ժպիտ մ'ալ տալով, իր անքննելի ծոցէն կու փչէ նորաչէն պատկերին վրայ շունչ մ'այլ. շունչ բանական, աննիւթ և անառական, որով բոլորովին կ'ըլլայ կու կատարուի մարդն, և հաղորդ աստուածային զօրութեան, աստուածային երագութեամբ մը ճանչնալով ինքզինքը, ինչպէս և ուստի

ըլլալն, միանգամայն աչքով և շրթամբ, թեւօք և ծնդօք, սրտիւ և բանիւ և հոգւով կու կանչէ՝ Աստուած իմ:

Հ. Ղ. Ալիբան

Բառք. — [1] Փափկութիւն, շիտակ լինելը: — [2] Ձեռքին շինածը: — [3] Մորթ: — [4] Ընձուիկ, բուսիկ, ժլիկ: — [5] Արձան: [6] Յօնք, (է+է): — [7] Շէնք: — [8] Կաղապար (հաւա): — [9] Ոլորած, (եւէլ): — [10] Երկայն մազ: — [11] (Ձէ-է-է-է): — [12] Ոյժ տալով՝ զարնել: — [13] Վկագել: — [14] Ոտից ձայն:

ՀԱՅ ՕՐԻՈՐԴ ՄԻ


Հազիւ տասն և վեց տարեկան, Սաթինիկ կը թողւր դպրոցը, բայց ոչ շատ ուրախութեամբ: Յորմէ հետէ խելահաս եղած էր, իւր օրուան կեանքն երկու մասերու կը բաժնուէր, մին գոհութեան, միւսը դժգոհութեան: Զուարթ էր, դպրոցէն երբ ներս մտնէր, ձանձրոյթ կ'զգար տան մէջ: Բնութենէն օժտեալ ընտիր ձիրքերով, Սաթինիկի համար դպրոցն այն գեղաժպիտ դաշտն էր ուր արեւը, օդը կը նպաստէին նմա անձիւ և ուսձանալ: Կը սիրէր գրագիտութիւնը, կը սիրէր գեղարուեստները, կը սիրէր ընկերները, կը սիրէր ուսուցիչները:

Բայց դպրոցէն երբ տուն կը վերադառնար, դժ-

ուարութեամբ կը շնչէր: Ինչպէս գարնան աղւոր օրերը շատ անգամ թեթեւ մէգ մը կը սլափէ իրիկունները Վոսթորն և կ'արգելու շնչառութիւնն ու մենք մեզ կը հարցնենք. « Ի՛նչ, միթէ այս իրիկունս շարունակութիւնն է այս աւուր առաւօտուն » . նոյն տարրերութիւնը կը գտնէր Սաթինիկ իւր առաւօտեան և երեկոյեան կեանքին միջեւ: Գորովը բուն դրած էր այդ աղջկան սրտին մէջ, և սակայն պարտաւոր էր չներել որ իւր սրտէն խանդաղատանաց թուիչ մը սլանայ: Իւր հայրն և մայրը թէպէտ երկար ատենէ ի վեր ի Պոլիս, այլ սակայն գաւառացի էին, և գիտենք թէ գաւառացիք, մինչեւ մէկ սերունդ, ո՛րքան պնդութեամբ հաւատարիմ կը մնան իրենց ընտանեկան աւանդութեանց, սպասելով որ իրենց որդիքն անխնայ ամեն ինչ յեղաշրջեն: Ընտանեկան կենաց մէջ Սաթինիկի ծնողք հաւատարիմ աւանդապահներ էին արեւելեան սովորութեանց: Ձենք կարող ըսել թէ չունէին սէր իրենց զաւակաց համար, բայց միթէ խոհեմութիւնն էր գուրգուրալ անոնց վրայ գգուանօք, սիրակաթ<sup>2</sup> համբոյրներով: Ձէ՛, այդ տունը չէր պարտէզ մը ուր տըղայք ուրախ զուարթ թուչախէին, ճուռողէին<sup>2</sup>: Այդ տունը զօրանոց մ'էր ուր կը տիրէր խիստ կարգապահութիւն: Գէմքերն անժպիտ էին անդ: Եւ սակայն Սաթինիկ անձկակարօտ էր ազատ օդոյ, սիրոյ և գրգուանաց:

Ա. Արփաբեան

Բառք. — [1] Անի: — [2] Սիրալիր: — [3] Թռչնոյ ձայն հանել:





իառքերովը պերճացեալ Սողոմոն՝ այս տխուր դադաղին մէջէն՝ « Ունայնութիւն ունայնութեանց » կը պոռայ : հոս՝ այս ցուրտ շիրմին տակէն՝ մեծն Արտաշէս՝ « Աւա՛ղ փառացս անցաւորի » կաղաղակէ : Ո՛հ , այս յաւիտենական դրան մուտքին մէջ մարդս ո՛րչափ կը սղտիկնայ . այս կէտին ամեն ինչ որ Աստուած չեն՝ կոչնչանան : Աստուած միայն է մեծ , եղբա՛րք , և միայն անվախճան : Երանի՛ այն քրիստոնէից՝ որ Աստուծոյ նման մեծ ըլլալու երջանկութիւնն ունին : Այո՛ , այս տկար մահացուն , այս հողազանգուած<sup>1</sup> մարմինը , որ աշնան հողմերէն տարուբերեալ ազաղուն<sup>2</sup> տերեւի մը կը նմանի , որուն օրերը ստուերի սէս կանցնին կերթան , որ իր բաղձանքներուն ծայրը գերեզմանին ցուրտ քարը կը գտնէ , որ ուրախութիւն փնտուելով՝ այս սեւերը և տրամութիւնները կը գտնէ , այս մահկանացուն ալ մեծ է :

Երանի՛ այն մարդոց՝ որ աշխարհէս շատ մեծ են : Այո՛ , ո՛վ Քրիստոնեայ , աշխարհս քու մեծութեանդ առջին ոչինչ է , նայէ՛ որ սա յաւիտենական դռնէն անցած ատենդ փոքրկացած չըլլաս , քու ազնուականութեանդ կնիքն ճակտէդ սրբուած չըլլայ :

Քրիստոս մեծ էր . անոր սիրտը ահաւոր ժայռ մը էր աշխարհիս արկածներուն մէջտեղը զեռեղեալ՝ որուն վրայ ամեն ալիք ձախողութիւն և յաջողութիւն , հարքսութիւն և աղքատութիւն կը փշրուէին ու կը խորտակուէին , ինքն անշարժ և անխախտ կեցած : Սնոր աստուածային աչքերը անմահութեան կայծակներ կը ցոլացնէին , ու այն կայծակնացայտ աչքերը միայն տառապեալ մարդկան հոգեւոր և մարմնաւոր թշուառութեանց վրայ արտասուաց կաթիլներ կը թափէին ,

անմահ արտասուք՝ որ իր դժուարընտել խաչին վրայ գլխին փուշ սրակէն , և ձեռացն ու ոտից բեւեռներէն թափթփած պատուական արեան կաթիլներուն հետ խառնուելով՝ շողին երկինք Հօր Աստուծոյ գահը բարձրացաւ , ուր մեր կորստեան ձեռագիրն եղծեց :

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԿ ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆԸ

Ռաւբ. — [1] Հողէ շինուած : — [2] Չորցած , դեղնցած :

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Բնութիւնը՝ որ սոխակին տուաւ անոյշ գեղգեղանք՝ վարդենեաց ճապուկ<sup>1</sup> ոտերուն վրայ իր հեշտալուր դայլայլիկներն<sup>2</sup> յօրինելով վարդին գեղեցկութիւնը երգելու և իր սիրոյն խանդակաթ<sup>3</sup> զեղմունքը<sup>4</sup> հնչեցընելու համար , կը կարծե՞ս թէ՛ մարդս անմասն թողուցեր է այնպիսի փառաւոր ձիրքէ մը<sup>5</sup> , կը կարծե՞ս թէ՛ մարդուս սիրտը՝ որ աւելի վսեմ բարձրութեան մը կը ձկտի՞<sup>6</sup> բոլորովին դատապարտուած է մեռեալ ծովի մը սէս հանդարտ մնալով իր կարկաջատահ ալիքը չհոսեցնելու : Զննենք մեր սրտերը , երբոր յստակ զգացմամբ կսկսինք համատարած բնութեան սքանչելեաց վրայ յառիլ<sup>7</sup> , երբոր վայրկեան մը այս ստորին

մառախլապատ նահանգներէն մեր ոգւոյն թռիչք բարձրացնենք դէպի վեր, այն ի՞նչ քնար է՝ որ անպատում երգոց մրմունջներ կը հնչեցունէ ի մեզ, եթէ, աւա՛ղ, անոր լարերը թուլացած չեն երկրաւոր հոգերով՝ կամ բոլորովին կտրուած չեն վայրաքարչ<sup>8</sup> կիրքերով:

Երբ աշխարհ դեռ եւս նոր բացուած ծաղկանց հետ արեւուն առաջին ճառագայթիցը կը ժպտէր, երբ իր կոյս դալարեաց վրայ գառներն և ուլիկները արձակ համարձակ կ'արածէին, և երբ մարդուս միտքը իր նախնական սարգութեան մէջ ըլլալով՝ լեցուած չէր տակաւին բլրաւոր խառնաշփոթ գաղափարներով՝ ա՛յն ատեն ծնաւ բանաստեղծութիւնը, մարդուս առաջին և ազնիւ դայլալիկը, անմեղ հովուաց ներդաշնակաւոր սրինգներուն ձայնովը:

Սակայն բանաստեղծութիւնը ամեն դայլալիկներէ և ամեն ներդաշնակութիւններէ ալ գերազանց է. անոնք միայն մարդուս ականջը կզմայլեցնեն և վայրկեան մը ետքը օդին մէջ կը ցնդին անհետ կըլլան. մինչդեռ բանաստեղծութիւնը մեր սրտին կը խօսի և մեր ոգին կը դիւթէ<sup>9</sup>:

Թող ծանրաբարոյ փիլիսոփայները տղայական համարին զայն, այլ իրենց խոհուն<sup>10</sup> գլուխը մեր համակրութիւնը չգրաւեր բանաստեղծին փափուկ սրտէն աւելի: Բանաստեղծութիւնը բնութեան նկարիչն է գրականութեան մէջ՝ ինչպէս որ նկարիչը բնութեան բանաստեղծն է՝ արուեստից մէջ, մէկն ընտիր խորհուրդները ընտրելագոյն լեզուով կը ձագռէ, իսկ միւսը գեղեցիկ տեսարանները գեղեցիկագոյն պատկերներով կը նկարէ, բայց զուգահեռին<sup>11</sup> մէջ դարձեալ չկրնար բանաստեղծութեան հաւասարիլ:

Ոչ թէ միայն բնութեան՝ այլ և մարդուս կենաց հաւատարիմ<sup>12</sup> նկարիչն է բանաստեղծը և անոր գըրուածներուն մէջ կը պարունակուի իր դարուն ոգին, քաղաքակրթութիւնը, կրօնքը՝ սովորութիւնները և լեզուն: Ամեն դար և ամեն ազգ իր բանաստեղծներն ունեցեր է, այլ ճշմարիտ տաղանդը<sup>13</sup> հազուադիւս գոհարներէն աւելի նուազ է:

Պ. Պատճառան

- Բառք. — [1] Կակուղ: — [2] Անոյ ձայն թռչնոց: — [3] Սիրով լի: — [4] Չափազանց եռանդուն զգացում, փսփաք: — [5] Ձիտ, ունեցած յատուկութիւն, յարմարութիւն՝ ինչպէս են, երաժշտութեան, նրկարչութեան, փարտաւարութեան ևն: — [6] Կաշխատի: — [7] Աչք տնկած նայիլ: — [8] Ստորին: — [9] (Պէտք) կընէ: — [10] Ծանր, լաւ խորհող: — [11] Բաղդատութիւն: — [12] Ճշգրիտ, բուն: — [13] Բանի մը կարողութիւն, մեծ հմտութիւն:



Հ Ա Յ Գ Ր Ա Գ Է Տ Ն

Իր բարձր կոչման հետեւելով, իր սուրբ ուխտին հաւատարիմ մնալով՝ կոչեցեալ էակը կը պատրաստուի ամեն տեսակ զոհողութիւններ ընելով: Կը գործէ ցերեկը՝ մատենագրելով ու քարոզելով ու դասախօսելով:

լով, կը հսկէ գիշերը՝ խորհելով ու երազելով: Աչքերը կը տկարանան տժգոյն թերթերու վրայ նայելով — քանի՛ լոյսն աճի մտքին մէջ, նոյնքան լոյսը կը մարի աչքին մէջ, կը տկարանայ մարմինը տքնութեամբ ու տարապայման<sup>1</sup> աշխատութեամբ, դիւցազնի մը գործ կատարելով ու թռչունի մը սնունդն հազիւ առնելով: — Ու կը խորհի մերթ ընդ մերթ. երբ շուրջը կը նայի ու հին օրերուն յիշատակը սրտին մէջ կը նորոգի, երբ կը կարծէ տեսնել իւր հայրիկ կամ անոր ձայնը լսել քաղցրիկ, այն ատեն կը խորհի թէ հայրիկն՝ այն տարիքին մէջ՝ ուր ինք կը գտնուի՝ կը ճարէր իւր ասլրուստն, իր ու ընտանեաց ասլրուստն անտաղտուկ աշխատանք կը հայթայթէր, առանց տքնելու գիշերը, առանց տառապելու ցորեկը: Ար խորհի թէ իւր հայրը՝ դեռ երիտասարդ՝ քանի մը զաւակաց տէր, ու տունի տէր, ու գործարանի տէր եղած էր ու զինքը՝ վառվռուն պատանեկիկ՝ մայրիկովն ու եղբայրիկներով հանդերձ՝ ամեն կիրակի դրօսանքի կը տանէր ու շաքար կառնէր, քաղցրաւենին ալ սեղանին վրայ մերթ կը բուրէր ու կը կարմրագունէր: Հիմակ՝ ինքը կորաքամակ<sup>2</sup> արդէն՝ թէեւ անզուակ տակաւին, զրկուած դրօսանքէ, զրկուած սիրտանքէ, իր բոլորտիքը սրտուկով գրած թերթերը, երբ հովն ալ անդին կը թափթըփէ ծառոց անդիր թերթերը. տօն օրերը գլխահակ<sup>3</sup> իւր գրասեղանին վրայ, երբ համատիք երիտասարդք ու երիտասարդուհիք թեւ ի թեւ կը շրջին, կառքով ու շոգեկառքով կը շրջագային, կոհակէ կոհակ<sup>4</sup>, պուրակէ պուրակ<sup>5</sup>, վայելքէ վայելք կը թռչին, կը բաշխեն արծաթ՝ որով իրենց գրպանը լցուած է, ու փոխարէն արծաթին՝ իրենց ոտից ներքեւ ծաղկափունջեր կը սիւսուին՝ որոնց վրայէն կը քայլեն բերկ-

րագին՝ արբենալով բոյրերով<sup>6</sup> ու երանութիւններով անդին: Այն պահուն ի՞նչ կ'ընէ ինքը, գրագէտը, ազգին երախտաւորը, «այն կէս մարմնով և անհամար հոգիներով» էակը որուն անուրանալի ծառայութիւնները կը պաղարբերին ամէն օր՝ թէպէտ օր մ'ալ վարձատրութիւն չընդունին. որուն եռանդուն դասախօսութիւններով կը պատրաստուի նոր սերունդն ազգին, որուն ոգելից ու խմաստալից գրութիւններն ծիծաղներով կ'ընդունուին, — այն գրութիւններն զորս արհամարհանօք կարդացողները կը լուսաւորուին օրէ օր՝ կարծելով որ ինքնիրեն այդ բարեփոխութիւնն անձերնուն վրայ կը կատարուի. հէ՛գ<sup>7</sup> գրագէտը՝ կ'ըսեմ՝ ի՞նչ կ'ընէ, երբ իր հասակակիցները իշխաններուն, սեղանաւորներուն, վաճառականներուն զաւակները քսակնին ոսկով ու սրտերնին ուրախութիւնով լի՝ կը պտտին ծիծաղներու<sup>8</sup> տակ ու ծաղիկներու վրայ: Հէ՛գ գրագէտն՝ ո՞ւր կը շրջի, ո՞ւր կը նայի հէգ գրագէտն:

Ե. Տեմբրիսպետի

Բառք. — [1] Չախազանց, — [2] Գամակը ծուած: — [3] Գլուխը խոնարհած: — [4] Մեծ ալիք: — [5] Անտառ: — [6] Անուշահոտութիւն: — [7] Թշուառ: — [8] Ծիրանի գօտի:




Լ ՈՒ Ղ Ա Կ

Կը պատմուի թէ թագաւոր մ'իւր դրանկաց<sup>1</sup> հետ Ովկիանոսի մը եզրն գտնուելով ժայռի մը գագաթին վերայ՝ ոյր ի ստորեւ արիք կը մռնչէին կատաղութեամբ՝ ուզեց փորձել իւր դրանկաց և պաշտօնէից քաջասըրտութիւնն։ Առաւ ի ձեռին ոսկեղէն բաժակ մը՝ թանկագին քարերով զարդարեալ, յաղթական նշան մը զոր իւր քաջութիւնն ստացած էր վերջին պատերազմին ժամանակ, և նետեց զայն Ովկիանոսին մէջ։ « Պիտի տամ զայն, աղաղակեց, այն մարդոյն որ համարձակի երթալ բերել զայն։ » Բաժակն աներեւոյթ եղաւ և ոչ ոք կը համարձակէր։ « Ի՛նչ, ըսաւ թագաւորն, բազումք ի ձէնջ դիմագրաւեցին մահուան՝ յանդիման թշնամուոյն, և այժմ ո՛չ ոք կը համարձակի խիզախել արեաց բարկութեան դէմ։ » Սակայն անշարժ բազմութեան մէջէն դուրս ելաւ դեռատի մանկլաւիկ<sup>2</sup> մը որոյ գեղեցկութիւնն հրապուրեց բոլոր նայուածքներն․ վրտանդին հետաքրքիր՝ ինչպէս բնական է անգէտ հասակին՝ մօտեցաւ դողալով և գողցես կը շառագունէր իւր քաջասրտութեան վերայ։ Թագաւորն սրտապնդեց զայն շարժմամբ մը՝ և նշան ըրաւ նմա մօտենալ եզերքին․ մանկլաւիկն յառաջացաւ, և առանց նկատելու անդունդին խորութիւնը ուր պիտի ընկղմէր՝ գահավէժ խորասուղեցաւ և աներեւոյթ եղաւ։ Ո՞վ կրնայ նկարագրել հանդիսականաց անձկութիւնն երբ ծովն կարկատեցաւ անոր վերայ, և երբ կը լսուէր սովորական շառաչիւնն արեաց որ կը խորտակուէին ընդդէմ

քարածայռից․ ի՛նչ եղաւ արդեօք այն ձեռներէց<sup>3</sup> երիտասարդն որ գնաց դանձ մը փնտուել ի խորս ջուրց։ Արդեօք իւր մարմինն յօշոտեցա՞ւ<sup>4</sup> սրածայր խութերու դէմ զոր ծովը կը ծածկէ իւր ծոցին մէջ, անծանօթ յորձանքներ վարեցի՞ն զնա ծովափնէն հեռու, կամ զո՞չ եղաւ արդեօք ծովային նհանգներու<sup>5</sup> որք կը խուսան<sup>6</sup> անդունդին խորն։ Կորուսեալ կը կարծէին զնա և արդէն կ'ողբային նորա երիտասարդութիւնն ու քաջութիւնն՝ երբ յանկարծ ցողակայլակ մազեր դուրս երեւցան կոհակաց մէջէն, յետոյ բազուկ մը որ զարիս կը հերձոյր<sup>7</sup> և յետոյ բազուկ մ'ալ որ բաժակն կը բարձրացունէր արիքներէն վեր։ Որպիսի՛ երջանկութեամբ կը խայտար երիտասարդին դէմքն ջուրերէն դուրս ելած պահուն, ի՞նչ հրճուանօք վերստին կը տեսնէր լոյսն և կը շնչէր ծովափին օդն, և ի՛նչ հպարտութեամբ կը սեղմէր իւր գրկաց վերայ այն բաժակն որ մրցանակ եղած էր իւր յանդանութեան։ Դրանիկներն ստիպուած էին շնորհաւորել մանուկ մը՝ ի ներքուստ յանդիմանելով իրենց տկարութիւնը։ Տիկնայք որ ներկայ էին այս նորատեսակ խաղին, չէին դադրեր զարմանալէ այս մատաղատի յաղթականին վերայ։ « Քա՛ջ է, ըսաւ թագաւորն, ես ալ կը գովեմ քու քաջասրտութիւնդ իմ դրանկացս հետ, բայց հարկ է տեսնել թէ այդ արիութիւնդ հասակիդ տկարութեան արդիւնքն է թէ արդարեւ վեհանձն սրտի մը ներշնչումն․ վասն զի ով որ միանգամ եւեթ կը խիզախէ վտանգին քաջասիրտ չէ այն․ նա՛ միայն դիւցազն է որ վտանգն մօտէն տեսնելէ յետոյ՝ յայն կը դիմէ դարձեալ։ Տղա՛յ, կը համարձակի՞ս անգամ մ'ալ մտնել ահագնադոչ անդունդին մէջ։ » Թագաւորը երկրորդ բաժակ մ'ալ նե-

տեց Ովկիրանոսին մէջ: Գողաց մանկլաւիկն, իւր զօրութիւն սպառած էր. « Հայրիկ, աղաղակեց թագաւորին աղջիկը՝ որ արքունի տիկնայց մէջ կը փայլէր իւր շնորհօք ու գեղեցկութեամբն, մի՛ փորձէք կրկին անգամ իւր քաջութիւնը, բա՛ւ է որ օրինակն տուաւ նա, թող ուրիշներն եւս խոյանան<sup>3</sup> նորա բացած ճանբուն մէջ: » — Հապօ՛ն, ըսաւ թագաւորը, եթէ երկրորդ անգամ մխրճիւ<sup>4</sup> և բերես այս բաժակն, քե՛զ պիտի տամ ո՛չ միայն բաժակն և անոր ականակալ զարդերն, այլ և արքունեացս ամենաթանկագին գանձն, իմ աղջիկս՝ որոյ ձայնն զքեզ պաշտպանեց: » Մանկլաւիկն ամօթահար եղած էր զի վայրկեան մը իւր քաջութեան վերայ տարակուսեցան այլք, և գահավէժ սուղաւ աւելի եւս անդեամբ քան զառաջինն: Բայց ի զօր սպասեցին անոր վերադարձին, իւր դիակն անգամ չը մերձեցաւ ծովափին ուստի նետուած էր:

Քառ. — [1] Պալատական: — [2] Թագաւորի սենեկապան: — [3] Յանդուզն: — [4] Կտոր կտոր ընել: — [5] Ծովու զազան: — [6] Վխտալ, խաղալ (անասնոց): — [7] Պատուել, հղբել: — [8] Յարձակիլ, վազել: — [9] Զուրին խորը մտնել:



### Խ Ա Ի Ա Ր Ո Ւ Մ Ն

Արդի նաւապետաց առաջինն՝ որոյ հանձարն գուշակած էր նոր աշխարհն և ոյր համբերութիւնն յաջողեցաւ գտնել զայն՝ Քրիստափոր Գոլումպոս՝ գիտէր պահել ամենէն վտանգաւոր պարագայից մէջ անզգայ պաղարիննութիւն մը և մտաց զարմանալի արթնութիւն մը: Զորորդ և վերջին ուղեւորութեան ատեն՝ յոր ձեռնարկեց Սպանիոյ նոր երկիրներ տալու համար, մինչ Սպանիա զինքն զրկած էր իւր տիտղոսներէն և պատիւներէն, ստիպուեցաւ կռուիլ մարդոց նենգութեան և սպառնալից տարերաց դէմ: Կորոյս նա իւր նաւերէն մին ապառաժուս ծովեզրի մը վերայ՝ զոր անուանեց Զովեչը հակաակոնիեանց. իւր քով գտնուած երեք նաւերն փոթորկի ժամանակ իրարու բաղխեցան և ծովակալն ինկաւ ճամայիքի ափանց վերայ: Այս կզուոյն բնակիչներն՝ որոց արդէն այցելած էին Սպանիացիք՝ նախ իբրեւ եղբայր հիւրընկալեցին նաւարեկեալներն, Քրիստափոր Գոլումպոսի կամաց կը հնազանդէին իբրեւ տեսառն իւրեանց և կը մեծարէին զնա իբրեւ հայր. բայց ընդհուպ տաղտկացան օտարները հաշորդակից ընելէ իրենց երկրին բնական հարստութեանց: Ազատամբեցան ընդդէմ Սպանիացւոց և սպառնացան սպանանել զնոսա: Գոլումպոս չունէր կարողութիւն կզկեցւոց դիմադրելու, անբաւական քանի մը զինուորներ ունէր միայն, իւր ընկերներէն բազումք դացած էին ի Ս. Գոմինիկ նաւ մը գտնելու համար որպէս զի տանէր զիրենք ի հայրենիս: Գոլումպոս չը կա-

րենալով բռնութիւն գործածել իւր անձին պաշտպանութեան համար, խորամանկութեան և գիտութեան գիմեց՝ որ զէնք մ'է վայրենեաց դէմ: Իւր աստղաբաշխական ծանօթութիւնք յայտնած էին նմա լուսնոյ խաւարման մերձաւորութիւնն: Այն օրն իսկ յորում տեղի պիտի ունենար այս խաւարումն՝ Գոլումպոս իւր շուրջ հաւաքեալ ամբոխին այսպէս խօսեցաւ: « Սպանիացւոց Աստուածն իւր սիրելի զաւակաց նկատեամբ ձեր բռնած ընթացքին վերայ զայրացած՝ իւր պաշտպան ձեռքն կը հանէ ի ձէնջ: Այս գիշեր ի ժամ 12՝ դժգոյն և առկայծեալ պիտի տեսնէք այն աստղն որ արեւին լուսոյն թերին կը ընու: Բնութիւնը պիտի խորասուզի մթութեան մէջ, պիտի մատնուիք այն պատժոյն որում արժանացած էք ձեր ոճիրներով: » Բնիկներն քրքիջ բարձին այս խօսքերուն վերայ և սպառնալիքներ ուղղեցին ծովակալին: սակայն ո՛չ ոք համարձակեցաւ մտել ի նա ձեռն, թշնամանելով հանդերձ՝ կ'երկնչէին ի նմանէ և ամենէն քաջասիրտներն իսկ նախապաշարուած երեկոյեան կ'սպասէին: Բայց ի գալ գիշերոյ երբ տեսան լուսինն որ յամբընթաց կը բարձրանար ջինջ երկնից մէջ և ի հեռուստ անապատաց վերայ կը հեղոյր արծաթափայլ լուսոյ հեղեղներ, յայնժամ զանձինս փրկուած կարծելով՝ ուրախութեան աղաղակներ արձակեցին և պարեր յօրինեցին իրենց երկրին ցուցքերն (խաղ, հօօօ) երգելով: Զայրոյթ և ատելութիւն կը զարթնուին ընդդէմ Սպանիացւոց, ցորչափ վտանգին գաղափարն կը ջնջուէր իրենց մտքէն: « Աղետից մարգարէ, կը դոչէ ձայն մը, պիտի կրես ստախսուութեանդ պատիժն: Բարեկա'մք, զարնենք զանի նոյն իսկ այս գիշեր այն աստղին լուսովն զոր ինքն անիծեց: »

Այս խօսքերն հազիւ արտասանուեցան և ահա թեթեւքօղ մը գոգցես տարածուեցաւ օդին մէջ, լուսինն՝ որ այնքան կենդանի փայլ մը կ'արձակէր՝ տփգունեցաւ և սկսաւ խաւարիլ տակաւ առ տակաւ: Յորչափ մթութիւնն կը ծածկէր ամէն ինչ՝ երգոց շուրջներն կը նուազէին, պարուց աշխոյժն կ'անհետանար: Վերջապէս երբ մթութիւնն կատարեալ եղաւ՝ բոլոր կղզեցիք անձայն և անչարժ մնացին: այս տխուր լուսութեան յաջորդեցին վշտի և յուսահատութեան ճիչեր, կը թափառին աստ և անդ մոլորամիտ և խելայեղ, որպէս թէ մեծ Ոգին արտասանած էր իրենց մահապճիռն, և իրենց կղզին ոչնչութեան մէջ պիտի ընկղմէր: Ամենեքին միաձայն հաւանութեամբ ընթացան դէպ յայն խրճիթն ուր կը բնակէր Քրիստափոր Գոլումպոս, կ'աղաչեն զնա ներել իրենց, բարեխօսել իրենց համար և ամոքել աստուածային զայրոյթն: Մովակալն փոքր ինչ անողորքելի մնաց: յետոյ տեղի տալով նոցա թախանձանաց և արտասուաց, « Եթէ ինձ կը խոստանաք, ըսաւ անոնց, ապագային մէջ հաւատարիմ մնալ Սպանիացւոց, բարի և մարդասէր լինիլ առ օտարականս զոր Աստուած իբրեւ ձեզ եղբայր ստեղծած է, պիտի ազաչեմ զնա գթալ ձեր վերայ և մէկ ժամու մէջ ձեզ պիտի գառնայ այն աստղին լոյսն յորմէ զրկուած էք: » Լուսինն վերստին երեւեցաւ արդարեւ որոշեալ վայրկենին: Ճամայիքի բնակիչներն Սպանիացւոց հլու գերիներ եղան, և Գոլումպոս յարգուեցաւ կղզւոյն մէջ ո՛չ թէ միայն իբրեւ թագաւոր այլ և իբրեւ գերագոյն էակ մը որ կը հրամայէ բնութեան և տարերաց:

### ԶԿՆՈՐՍԻՆ ԿԻՆԸ

Գիշերն տարածուած է Ուրկիանոսին վերայ: Երկինք մթին են և ամպամած, և սա ծովեզեր վերայ՝ ուր ժայռեր ու խութեր կան ցանուած, մթութիւնն կատարեալ պիտի լինէր եթէ չ'գտնուէին աստ և անդ լուսոյ նշոյլներ որք կ'ցոլանային ծովեզերեսոյ հիւղակաց մէջ: Այս վայրկենին ձկնորսք խոյս տալով ծովուն վտանգներէն՝ երեկոյեան ճաշն կ'ընէին իւրեանց մատաղատի ընտանեաց հետ, և յառաջ քան զլինելն ի քուն կ'հաշուէին կրակարանին շուրջ օրուան վաստակն: Բայց մինչդեռ մարդիկ կ'ուրախանան բոլոր այն խորձիթներուն մէջ, կին մի արտասոււածքին նստած է ծովափին վերայ, ունկն դնելով խորտակող ալեաց շառագման և ջանալով բան մի որոշել զՈւրկիանն ծածկող մթութեան մէջ: Իւր ամուսնոյն կ'սպասէր նա, որոյ նաւակն մեկնած էր այգուն այլոց նաւակաց հետ և դեռ չէր վերադարձած: Ընդ երկար սպասելէ վերջ՝ դարձաւ կինն իւր բնակարանը, տուաւ իւր զաւակաց երեկոյեան համբոյրն, և տեսնելով նոցա փակեալ արտեւանունքն՝ գաղտագողի դուրս ելաւ հիւղակէն և մագլեց այն բլուրն ի վեր ուր կը բարձրանար Ս. Կուսին մատուռն: Ո'րպիսի գործով և քանի՜ եռանդեամբ կ'խնդրէր յերկնից ալեաց վերայ մոլորող ձկնորսին կեանքն: Բայց մինչդեռ կ'աղօթէր՝ հողմն յարեաւ, ծովն կրկնակի հարուածներով կ'բաղխէր փոռնքը, կայծակն կ'ճեղքէր ամպերն և լուսոյ հետք մի կը թողուր հեռաւոր կոհակաց վերայ, ամպերն կ'որոտային խուլ գունամբ: Խեղճ կինն սարսափահար

կ'իյնայ ի դետին, և իբր նուաղեալ կ'մնայ քանի մը վայրկեաններ: Ապա՝ երբ փոքր ինչ փոթորիկն կ'ցածնու, կ'հասնի իւր խորձիթն, կ'գտնէ իւր զաւակներն նոյն վիճակին մէջ, ա'յնքան խաղաղիկ և խորին էր նոցա քունն: Ինքն իսկ տեղի տալով երկարածիզ պարտաման՝<sup>1</sup> ննջեց. այլ իւր քնոյն մէջ հոգին կը տանջուի մի և նոյն գաղափարով, կ'կարծէ տեսնել զիւր բացակայ ամուսինն: Կ'զարթնու, ուրախութեան ճիչ մ'արձակելով, բայց ինքզինք միայնակ կ'գտնէ. դեռ կ'քնանային իւր զաւակներն. պայծառ լոյս մը ամենուտ կ'թափանցէր հիւղակին ծերպերէն<sup>2</sup> ներս: Դժբաղդ կինն վայրկեան մ'իսկ նիրհելուն վրայ ցաւած՝ կ'ընթանայ ի ծովեզրն, անդ կ'նշմարէ նաւակի մը բեկորներն զոր դէպ յափունս մըրած էին գիշերուան ալիք: Կ'սարսափ տեսնելով զայս, բայց իւր թշուառութեան խելամուտ լինելու հարկէն վարեալ՝ յառաջ կ'երթար, մարդ մի կայ իւր ոտից տակ, անշարժ և սաղեալ, դէմքն ծածկուած աւազին մէջ: Նորա հասակէն և հանդերձից պատառներէն ճանչցաւ իւր ամուսինն: Սակայն դեռ կը տարակուսի, կը բարձրացունէ ա'յն գլուխն՝ զոր մահն ծանրացոյց իւր ձեռաց մէջ: Ո'վ կրնայ նկարագրել ինչ որ զգաց նա այսպիսի վայրկենի մը մէջ. վասն զի վշտեր կան զորս Աստուած միայն կրնայ ամոքել, և զորս չ'կրնար արտայայտել ո'չ մի բարբառ մարդկեղէն:

Բառք. — [1] Յոգնութիւն: — [2] Բացուած ծակ, ճեղք:



### ԳԹԱՍԻՐՏ ԳՈՂԸ

Գեկտեմբերի տխուր երեկոյ մը՝ որ կանուխ կ'յա-  
 ջորդէ ցերեկուան, ձիւնն կը տեղար Աստուրեանց լե-  
 րան ստորտն հաստատուած փոքրիկ գիւղի մը վերայ :  
 Մարդ մի՝ գորչագոյն վերարկուաւ պարածածկեալ՝  
 կրկնակի բաղխումներով կ'զարնէր խորթի մը դուռն որ  
 շինուած էր գիւղին առաջակողմը՝ միւս բնակարաննե-  
 րէն փոքր ինչ հեռաւորութեամբ : Գուռն բացուեցաւ  
 վերջապէս, և ծերունի կին մը երեւցաւ սեմին վերայ :  
 « Բարի մայրիկ, ըսաւ օտարականը, կը հաճի՞ս ապաս-  
 տանարան մը շնորհել ինձ քանի մը ժամուան համար,  
 վասն զի անկարելի է որ պարկեշտ ձիււոր մը՝ այս  
 օդին՝ դաշտէն անցնի » : « Բարի եկի՛ք, պատասխանեց  
 պառաւն, որ թագուռն վիշտ մ'ունենալ կը թուէր .  
 դեռ կրնամ այսօր ապաստանարան մը տալ ձեզ, բայց  
 երանի՛ թէ ես ալ վաղը ապաստանարան մ'ունենայի » :  
 Ուղեւորն նստաւ կրակին քով և ջեռոյց իւր պողեալ  
 անդամներն : « Շատ տխուր կ'երեւիս ինձ, բարի մայ-  
 րիկ, ըսաւ, կրնամ հարցունել վշտիդ պատճառը » :  
 — Աւա՛ղ, տէր իմ, իրաւունք ունիմ արտասուելու .  
 վեց ամիսէ ի վեր կորուսի ամուսինս յեա երկար հի-  
 ւանդութեան՝ որ սպառեց բոլոր ստացուածքս : — Զա-  
 ւակներ չունի՞ս որ կարենան օգնել քեզ : — Երկու  
 մանչ զաւակներ ունէի, մին մեռաւ բանակին մէջ,  
 միւսն գաղթականութեան մէջ կ'ապրի . միայնակ եմ,  
 բոլորովին միայնակ . վաղը պարտիմ տարեկան վարձք  
 վճարել այս խորթին տիրոջ՝ 100 դահեկան : Բարի պա-

րոնս, ես այս պահուս դահեկան մ'անգամ չունիմ,  
 թախանձեցի պարտապէրոջս որպէս զի պայմանաժամ  
 մը շնորհէ ինձ, մերժեց խնդիրքս տմարդութեամբ,  
 ինքն որ քսան ագարակի տէր է, և եթէ վաղը կէս  
 օրին չ'վճարեմ ամբողջ գումարն, այս խորթէն պիտի  
 վանէ զիս : — Ո՛ւր կը բնակի այդ անգութ մարդն,  
 հարցուց օտարականն : — Լերան միւս կողմը : — Ու-  
 րեմն իւր տունը երթալու համար՝ պէ՛տք է որ անցնի  
 նա սա՛ նեղ ճամբէն, որ օձապտոյտ կ'երկարի քարա-  
 ժայռից շուրջ : — Այո՛, ճիշդ այդպէս, և ուրիշ ճամ-  
 բայ չկայ : » Այս խօսակցութիւնն հոս զկայ առաւ .  
 ձիւնն ալ դադրած էր . անծանօթն հազաւ իւր վե-  
 րարկուն, ծածկուեցաւ իւր լայնեզր գլխարկով և  
 քսակ մը նետելով սեղանին վերայ՝ ըսաւ . « Առէ՛ք,  
 ահաւասիկ, բարի կին, 100 դահեկան, վաղն վճարե-  
 ցէք, բայց չմոռնաք ընկալագիրն առնուլ » : Խեղճ կինն  
 չէր կրնար հաւատալ իւր աչաց, խորին յուսահատու-  
 թենէ մ'անցաւ յանկարծ անբացատրելի ուրախու-  
 թեան, բռնեց իւր բարեբարին վերարկուէն և համ-  
 բուրեց զայն ցնծութեամբ : « Ո՛հ, տէր իմ, հրեշտակ  
 մ'ես դու յերկնից առաքեալ՝ զիս ազատելու համար,  
 թող դրախտին բոլոր սուրբերն յաջողեն ձեռնարկ-  
 ներդ » : Նա՛ առ որ կ'ուղղուէին այս սրտագին շնոր-  
 հակալութիւններն՝ ժպտեցաւ, և հեռանալու ատեն  
 կրկնեց բարի կնոջ . « Մի՛ մոռնար ընկալագիրն » : Հե-  
 տեւեալ օրն երբ կէս օրն կը հնչէր գիւղի ժամացոյցին  
 վերայ, ահա ագահ տանուտէրն երեւցաւ, և բնաւ  
 չ'յուսալով թէ վճարումն պիտի լինէր իրեն, ըսաւ  
 խստութեամբ . « Աղէ՛, պառաւ, կա՛մ ստակ կամ աւ-  
 կէ դուրս » : — Այդչափ մի՛ սաստէք, պարոն, զձեզ  
 դ ո՛հ պիտի ընեմ, բայց նախ ինձ ընկալագիր մի տուէք » :

Տանուտէրն բոլորովին ապշած թէ վայրասպար չէր յոգնած, հանեց իւր գրպանէն գրչաման մը՝<sup>2</sup> զոր իւր հետ ունէր, և անմիջապէս գրեց ընկալագիրն: Պառաւն համարձակութեամբ հաշուեց նմա հարիւր դահեկան և յաղթական դէմքով ընկերացաւ նմա մինչեւ խրճիթին դուռը: Բայց հազիւ թէ տանուտէրն լերան դադաթն հասած էր՝ և ահա մարդ մի վերարկուաւ ծածկեալ երեւեցաւ յանկարծ իւր առջեւ և ցոյց տուաւ նմա հրացանին ծայրը՝ այս ահաւոր խօսքերն ըսելով, « Քսակդ կամ կեանքդ »: — Վրաս ստակ չունիմ, պարոն գող, ըսաւ դողալով հարուստն: — Ունի՛ս, պատասխանեց աւազակը, որոտընդոստ ձայնիւ. դեռ նոր չ'կողոպտեցի՞ր այրի կին մը. անգութ մարդ, չո՛ւտ ստակ, ապա թէ ոչ՝ մեռած ես »: Այս խօսքերն ըսելով մօտեցաւ տանտիրոջ պարպելու համար անոր գլուխը պաններն: Անշուշտ յայտնի է թէ լերան աւազակը խրճիթին բարերարն էր, դարանի նստած<sup>3</sup> էր վերստին առնլոյ համար հարուստէն ի՛նչ որ տուած էր աղքատին:

Բառք. — [1] Դաղրեցաւ: — [2] Կաղամար գրիչ. Տճկ. (տէլէր) —

[3] Պանուրտած էր:



### Ֆ Ի Ի Ք Է Ն

Չինաստանի Քիանկ գաւառին մէջ արդարութեան գործոց պաշտօնեայ մի կար որ իւր իշխանութեամբ զեղծանելով օրէնքն՝ մեծամեծ չարիքներ կը գործէր: Այնպիսի երկիւղ մը ներշնչած էր որ ամենէն քաջասիրտք անգամ չէին համարձակեր բողոք բառնալ նորա դէմ, և իւրաքանչիւր ոք Աստուծոյ կը յանձնէր նորա պատիժն իւր եղերանց համար: Ամէն օր որբեր կը թողուր անմեղներու մահն հրամայելով, որոց ստացուածքն իւր նախանձն կը շարժէր: Նրբեմն կ'զրկէր այրիներ իրենց ժառանգութենէն, երբեմն չարիք ընելու միակ հաճոյքով տանջանաց կ'դատապարտէր եղկելի մարդեր որ բնաւ յանցանք չ'ունէին: Վաճառական մի որ յոյժ կը համակրէր իւր քաղաքակցաց, արդարութեան գործոց պաշտօնէին ընթացից համար զայրացած՝ կառավարչին սպարանքն գնաց տրտունջ բառնալու տէրութեան եղեռնագործ պաշտօնէին դէմ: Ոչ ոք ուզեց ունկն դնել<sup>1</sup> նմա. նոյն իսկ վանեցին զնա բանտ դնելու կամ սնանկացնելու սպառնալեօք՝ եթէ երկրորդ անգամ փորձէր ձայն հանել ամբաստանելու համար զնա՝ զոր կը համարձակէր ժողովրդեան բռնաւորն կոչել: Հոանկ, այս էր վաճառականին անունն, հետեւեցաւ իւր տան ճամբուն, արդար բարկութեամբ վառուած ընդդէմ այնոցիկ՝ որք չէին ուզեր օգնական լինել անմեղներու և զերծուցանել<sup>2</sup> զանոնք այնպիսի մեծ ոճրագործէ մը: Հոանկ փողոցի մը անկեան մէջ դժբաղդաբար հանդիպեցաւ արդարութեան չար պաշ-


տօնէին որ ընդ քարչ կ'ածէր՝ չուառ ծերունի կին մի, ոյր յուսահատ ճիչերն կ'ամուքէին ամենէն սպառուս սրտերն անգամ: Առաքինի քաղաքացին սպանդանոցի մը առջեւ կը գտնուէր՝ երբ ոճրագործն կ'անցնէր իւր զոհին հետ. յայնժամ վաճառականն իւր զայրութի բերմամբն յափշտակեց դահնայն՝ որ մարանին վերայ էր, զարկաւ պաշտօնէին և յետոյ անձնատուր եղաւ: Ի զուր իւր բարեկամք ջանացին արդարացնել զնա: Հոանկ դատաւարտեցաւ մահապարտից տանջանաց: Հայր էր նա բազմաթիւ ընտանեաց, և իւր զաւակներէն մին Ֆիւքէն անուն՝ որ գրեթէ տասն և չորս տարեկան էր, երբ լսեց իւր հօր դատաւարտութիւնն՝ գնաց ուղղակի ինքնակալին պալատն ունկնդրութեան մը շնորհն խնդրելու համար: Ձինացի միապետն բարեհաճեցաւ կատարել նորա խնդիրքն: Ֆիւքէն ծնրադրելով կայսերական գահոյից առջեւ, ըսաւ՝ թէ շնորհ մի խնդրելու եկած էր. — « Ի՞նչ շնորհ, հարցուց ինքնակալն. — « Իմ հօրս տեղ մեռնելու շնորհն. վասն զի մեր ընտանիքն պաշտպանի մը պէտք ունի, և փոխանակ իմ մօր նեցուկ լինելու՝ ես աւելորդ բեռ մ'եմ: Մեք վեց եղբայր եմք յորոց երէցն եմ ես, ուստի կ'տեսնէք որ ոչ ոք ի մէնջ ունի կարեւոր ոյժն ու տարիքն աշխատելու և անուցանելու իւր եղբայրներն և իւր փոքրիկ քոյրն: Որպէս զի արդարութիւնն կատարուի, կ'բաւէ որ իմ արիւնն փոխանակուի դատաւարտելոյն արեան հետ, կ'նուիրեմ արիւնս, կ'աղաչեմ մի՛ մերժէք զայն »: Ինքնակալն այս տարօրինակ անձնանուիրութեան վերայ հիացած՝ զրկեց մանուկն արդարութեան գործոց նախարարին առջեւ՝ որպէս զի սա հարցաքննէ զնա, զի կ'կասկածուէր թէ թելադրած էին զնա դատաւարտելոյն բարեկամք ա՛յսպէս խօսե-

լու, այսինքն՝ որդիական ոիրոյ կեղծ՝ նմանութեամբ մը յուզելու միապետին գուլթը: Երբ Ֆիւքէն նախարարին առջեւ ելաւ, հարցուց նախարարն: « Ո՞վ թելադրեց քեզ կեանքդ նուիրելու խորհուրդն »: Ո՛չ ոք, այլ նա միայն յորմէ կուգան ամէն բարի խորհուրդք » պատասխանեց տղայն: — Անխոհեմ և յիմար ես դու, եթէ ենթակայ կ'ընես զանձնդ մահուան՝ անմեղ և մատաղ լինելով, վասն զի դեռ չես գիտեր կենաց արժէքը: — Ներեցէք ինձ, յարեց Ֆիւքէն, գիտեմ կենաց արժէքը. բայց վայելած կեանքս հօրմէս ընդունեցի. և որովհետեւ իւր կեանքն պահպանելու այս միջոցը կայ միայն, կ'կատարեմ պարտքս զոհելով այն օրերն՝ զորս յիւրմէ եմ ընդունած: — Բայց չե՞ս խորհիր որ, առարկեց նախարարն, մայրդ այրիանալով կրնայ ուրիշ ամուսին մի գտնել: — Բայց պիտի գտնե՞ս արդեօք իւր կորուսածին նման մէկը, և ի՞նչպէս իմ մատաղատի եղբարքս ու փոքրիկ քոյրս՝ որ դեռ հազիւ երեք տարեկան է, պիտի գտնեն հայր մի կարող զմեզ սիրելու ա՛յնչափ որչափ նա կ'սիրէ զմեզ »:

Տղայն այսպէս խօսելէ վերջ՝ նախարարն դուրս ելաւ ծածկելու համար ի նմանէ իւր յուզումն: Մեկնած պահուն ըսաւ. « Ընոս կեցի՛ր, ի դարձիս պիտի կատարուի խնդիրքդ »: Ֆիւքէն կարծեց թէ պիտի ընդունէին զոհին փոխանակութիւնն զոր առաջարկած էր: Երբ նախարարն ներս մտաւ՝ տղայն նորա ոտից փարելով շնորհակալ եղաւ իրեն եղած շնորհին նկատմամբ: « Ո՛չ, ըսաւ նախարարն, քու դատաւարտութիւնդ չեմ բերեր ես, այլ քու հօրդ շնորհն: Նա որ այսպիսի վեհազն մանուկներ կարող է դատախարակել՝ յանցապարտ մի չ'կրնար լինել:

ինքնակալն ուզեց արձան մը կանգնել ի յիշատակ որդիական անձնանուիրութեան այս գեղեցիկ օրինակին : Ֆիւքէն մերժեց զայն . « Վասն զի , ըսաւ , այդպիսի արձան մը պիտի յիշեցունէ նաեւ հօրս զատապարտութիւնն » :

Քառւ. — [1] Մտիկ ընիլ , — [2] Ազատել : — [3] Քաշկուտել : — [4] (Սուրբ) : — [5] Մեծ դանակ :



Ի ՅԻՇԱՏԱԿ ՍԻՐԵՅԵԱԼ ՄՕՐՍ

ՏԻԿԻՆ ՆԱԶԼԸ ՎԱՀԱՆ

Ողջ էիր , մայր , յորժամ գրեցի գգրքոյկս այս զՍիրանոյշ : Զքեզ ընդերկար ուսումնասիրելէ և քու վրադ անհուն հիացմամբ<sup>1</sup> զարմանալէ վերջը երբ զքեզ տիպ<sup>2</sup> կ'ընտրէի ճշմարիտ մօր , և երբ ի Տիկին Հայնուռ ոչ թէ քու լուսաւորեալ գաղափարներդ կը ջանայի անձնաւորել , այլ միայն մայրենի սիրոյդ գերագոյն բարձրութիւնը , և անձնուիրութեանդ անհուն վսեմութիւնը , ո՞վ կրնայ հաւատալ թէ օր մի այս նոյն գրքոյկը անմեռ յիշատակիդ պիտի նուիրէի , ո՞վ կրնար հաւա-

տալ , մայր իմ : Եւ սակայն ծուեր դրած յայն վայր իսկ ուր շունչդ աւանդեցիր բազկացս մէջ , և հանդէս սրբանուէր կենդանագրիդ , կը ձօնեմ քեզ , ո՞վ մայր իմ , ինչ որ որդիական գորովս կրնայ նուիրել սուրբ յիշատակիդ՝ այսինքն սրբազնագոյն սուրբս առ ճըմարտութիւն : Այո՛ , քեզմով ճանչցայ ինչ որ մայրութիւնն յինքն կը պարունակէ վսեմութիւն . զի մէն մի օրդ , մէն մի վայրկեանդ , բոլոր կեանքդ վերջապէս քու երկու որդւոցդ պարգեւեցիր ամբողջապէս : Զգիտեմ եթէ քունիդ մէջ անգամ միտքդ կը հեռանա՞ր վայրիկ մի մեղսէ :

Ո՛հ , եօթն օրէ ի վեր բաժնուեցար դու մեզմէ , և այն աղետալի օրէն ի վեր կը մոռնամ թէ մայր եմ ես ինքնին , յիշելու համար անընդհատ թէ ոչ եւս մայր ունիմ : Ո՛չ եւս մայր ունիմ :

Մահն յօշոտեց սրտիս գրքին ամենէն թանկագին և ամենէն գեղեցիկ էջերէն մին , ի՛նչ դատարկութիւն : Գուցէ հայեցուածքս վարժի օր մի վերջապէս այդ զարհուրելի դատարկութեան . բայց սիրտս պիտի վարժի՞ արդեօք , պիտի ուզէ՞ վարժիլ , պիտի կարողանա՞յ երբէ՛ք , երբէ՛ք :

Մեկնեցար , մայր , ոգիս պատառելով , և թողուցիր ինձ ի փոխարէն օրինակը քու անբիծ կենացդ՝ զոր գովելի և մեծ գործեր զարդարեցին : Դու գծեցիր ինձ ուղին<sup>3</sup> ուր կը մտնեն աշխատելու , լուսաւորելու , օգնելու և ներելու համար : Իցի՛ւ թէ կարողանայի , մայր , յառաջանալու այդ գեղեցիկ ճամբուն մէջ՝ ուր դու ընթացար անխոնջ յարատեւութեամբ : Իցի՛ւ թէ հո՞ն ամբապինդ կենայի և օր մի յելանելս կենաց

դռնէն վայրիկ մի հո՛ն կանկ առնելով և անունդ հնչելով՝ հարցնէի քեզ « Հոգի՛դ դու սուրբ, ստո՞յգ չէ արդեօք որ քու դուստրդ բոլորովին քեզ անարժան չեղաւ : »

Մրցուի Տիւար

Բառք. — [1] Մեծ զարմանք, — [2] Օրինակ. — [3] ձամբայ,



ՇՈՒԵՏԱՅԻ ԼՈՒՂՈՐԴՔ

Բայց Շուետացիք չեն շատանար մտաւորական և բարոյական կրթութեամբ միայն, այլ կուզեն որ երկրին զաւակունք ըլլան միանգամայն չարքաշ և կտրիճ, անոր համար մեծ կարեւորութիւն կ'ընծայեն մարմնակրթանաց ամեն ճիւղերուն: Այս օրերս Ստոքհօլմ կը դառնուի Անգլիացի մարմնամարզից բեկերութիւնն. Ստոքհօլմի լուզորդաց ընկերութիւնն ուզելով պատիւ մ'ընել Անգլիացի հիւրերուն, հրաւիրեց զանոնք ամսոյս 15ին ի հանդէս այլ և այլ լողացողական կրթանաց՝ ընկերութեան յատուկ աւազանին մէջ: Քառակուսի աւազանին շուրջը շարուած էին օթոսք՝ հրաւիրելոց և իրենց ընտանեաց համար: Հանդէսն սկսաւ զինուորական երաժշտութեամբ: Նախ և առաջ տասնուհինգ պատանեակք նետուեցան ջուրը և կերպ կերպ ճարպիկ ու ճապրուկ<sup>1</sup> շարժմամբ և խաղերով զուար-

ճացուցին զհանդիսականս. յետոյ ջրէն դուրս ելան և իւրաքանչիւրին բաշխուեցաւ մէյմէկ քար՝ քսակի մէջ կարուած. նշանն տրուելուն պէս տասնուհինգն մէկէն նետեցին իրենց քսակներն ի խորս ջրոյն, և իրենք ալ անմիջապէս նետուեցան յաւազանն և աներեւոյթ եղան. քանի մը մանրերկրորդ վերջը տասն ու հինգ մանուկ խորէջներն ջրէն վեր առին իրենց գլուխն և բազուկը՝ յաղթական կերպով բարձրացնելով իւրաքանչիւրն իւր քսակը ի տես ամենեցուն: Արդէն եկաւ երիտասարդաց: Տասներկու երիտասարդք նախ ձեւացուցին ահագին աստղ մը ջրին երեսը՝ ճարտարութեամբ ընդխառնելով<sup>2</sup> իրենց սրունքներն ու բազուկները. այս մարմնեղէն աստղս հանդարտ հանդարտ կը յառաջանար ջրին երեսը ի հաճոյս հոսանաց, յետոյ մէկ գծի վրայ տողուեցան<sup>3</sup> առաջինն պնդելով իւր ոտիւք երկրորդին գլուխը և այսպէս և այլք մի ըստ միով: Հուսկ ապա ուղիղ գիծը վերածեցին ի բոլորակ՝ պահելով միշտ նոյն դիրքը և հանդարտօրէն սահելով ի միանունս<sup>4</sup> ջրոյն. հանդիսատեսք ջերմ ծափահարութեամբ յայտնեցին իրենց գոհութիւնը: Յետ այնորիկ կեղծ ընկղմում մը ձեւացուցին. երեք երիտասարդք մտան զգեստաւորեալ ի նաւակ մի, և իբր թէ ի զբօսանս սկսան թիավարել աւազանին մէջ. յանկարծ չորջեցաւ նաւակն, և երեքն միանգամայն թօթափեցան ի ջուրս, անդէն և անդ՝ հինգ լուզորդք դիմեցին յոգնութիւն ընկղմելոց, երկուքն ազատեցին զնաւակն, և այլք՝ երեք ընկղմեալները. ասոնցմէ մին՝ իբր թէ անհմուտ լողալու՝ կը թալթիթ<sup>5</sup>, ոտիւք և ձեռօք կը տագնապեցնէր իւր ազատարարը, և կը ջանար իրեն հետ մէկտեղ իջեցնել նա ի խորս ջրոյն. բայց սա անվեհեր և անչփոթ՝ մի ձեռամբ գրկելով ընկղմեալը և

միւստիւն լող տալով հանեց զնա ողջ և առողջ ի ցամաք: Երիտասարդներէն վերջը աւարտահասակ մարդիկ մտան ի հանդէս. խաղերն աւելի դժուարին էին և լողալու արուեստին մէջ հնցած անձինք միայն կրնային գործադրել զայնս: Ասոնց կտրճութիւնը գլխաւորապէս վտանգաւոր ստիւններու մէջ երեւցաւ. 15 մէթր բարձրութենէ յիսնամեայ այր մը՝ ալեխառն հերօք և մորուօք՝ երիտասարդական թեթեւութեամբ կը նետուէր ջրին մէջ, կընկղմէր և դուրս կելնէր: Յետ այնորիկ ա՛յլ ոմն նոյն բարձրութենէն կը նետուէր նմանապէս, բայց ջրոյն մէջ խնայէն առաջ օդոյն մէջ քանի մ'անգամ զիթկելով<sup>7</sup>. ոմն կը յարձակէր գլխի վայր, ոմն ոտից վրայ, ոմն կողմնակի, ոմանք ալ երեք կամ չորս ի միասին՝ ողկուղօրէն իրարու կպած՝ կը նետուէին նոյն բարձրութենէն և ջրոյն մէջ կը զատուէին մէկ մէկէ: Էին նաև ոմանք որ հագուած կը ցատքէին աւազանին մէջ, և մի առ մի կը մերկանային ի ջուրս իրենց զգեստը, ստորնակը<sup>8</sup>, տաբատը<sup>9</sup> չալիկը, այնպէս դիւրութեամբ որպէս թէ աթոռի մը վրայ նստած կը հանուէին. Երեք քառորդ տեւեց այս հետաքրքրական հանդէսս, որ փակեցաւ Աստուծոյ, կեցողութեան հին Անգլիական ազգային երգով:

**Նորայր Ն. Բիւզանդացի**

Բառք. — [1] Փափուկ: — [2] Միացնել: — [3] Շարուիլ: — [4] Զուրց երեսը: — [5] Իսկոյն: — [6] (2-դ-ը-ն-է-տ): — [7] (Թ-է-լ-է-ն-է-ն): — [8] (Ժ-է-ն): — [9] Անդրավարտիք:



**Ո Ղ Բ (\*)**

**Ի ՎԵՐԱՅ ԲԱՐԵԿԱՄԻՆ**

Ո՞վ ինձ բարեկամ, ո՞վ ինձ մտերիմ, ո՞վ ետ պիտի տայ ինձ իմ մտերիմ բարեկամ:

Ո՛հ առնն:

Քան զպատմական անձինս աւելի կարժէր նա. իրեն նմանը բիւրաւոր մարդոց մէջ մէկ հատիկ կը ծնի. շատ մը վատերու փոխարէն Աստուած երբեմն այսպիսի ոմն կը ստեղծէ որ մխիթարուին մարդիկ:

Արի արանց էր նա, բնաւորութեամբն արի, արի հանճարով, սրտով ալ արի:

Մեծ եւս էր, բարութիւնն էր անձնաւորեալ, աղքատին ու հիւանդին բարեկամ, բարեկամ մեծատանց ու ամենուն բարերար:

Պարտաւորութեան ձայնը իր պատգամն էր և ուրիշ ձայն չուղեց լսել. առաքինութիւնը իւր բնութիւնն էր և օր մը չը թուլացաւ իր սիրոյն:

Այլ թէ թուլացաւ, աւա՛ղ, այն իր վերջին օրն եղաւ:

Ո՞վ ամպեր, սե՛ւ ամպեր, եկան մթադնել քու պայծառ միտքդ ու առողջ դատողութիւնդ, ո՞վ իմ բարեկամս:

(\*) Այս ողբն գրուած է անմոռաց Տօքթ. Բեանիլիկանի մանուան առթիւ:

Ձքեզ սիրեցին Պօսֆօրի կրկին ասուենք, ծերն ու աղքատ քեզ օրհնեցին, երիտասարդք սիրեցան ի քեզ ու մեծամեծք և մեծատունք պատուեցին. ամեն ազգէ մարդիկ ու ամեն աստիճանի մարդիկ քեզի դիմեցին:

Ամենուն հասար, ամենուն օգնեցիր, աննման արհեստովդ, աննման խելքովդ, աննման ձեռքովդ:

Ուր որ դացիր՝ շատ անգամ յուսահատութեան լացը դադրեցուցիր, յուսոյ ժպիտը փայլեցուցիր. սըրտիդ բարութենէն ու բնաւորութեանդ կորովէն միշտ բան 'ը կը հաղորդուէր ամենուն:

Միայն սիրեցիր, ոչ զոք ատեցիր, ու միայն կեանքդ ատեցիր:

Սնյուշ և անյոյս զքո ուղիդ ընթացար մինչեւ որ յոգնեցար:

Ինչո՞ւ արդեօք:

Աստուած է՛ն զօրաւոր իմացականութեանց կայծ մը միայն ատուած է յաւիտենական ճշմարտութիւնը թափանցելու համար. դու գայն կայծն առ ոչինչ գրեցիր:

Աշխարհի բաներն ուրիշ մարդոցմէ աւելի պայծառ կը տեսնէիր, ինչ որ պայծառ չ'տեսար՝ մերժեցիր:

Իրերն իրենց հետեւանքներէն դատելու վարժած էր միտքդ. երկնից ներքեւ շատ անիրաւութիւն ու անգթութիւն տեսար, յաւիտենական արդարութիւնն ու գթութիւնը չըմբռնեցիր, և ուր որ շօշափելի հետեւանք չը տեսար՝ հոն իմացականութիւնն ու զօրութիւնն ուրացար: Ա՛հ, զի չի ճանչցար քու հայրդ որ յուշ անէր քեզի ու անոր սնարին չբազմեցար որ իւր վերջին վայրկեանին սրտապնդելով զքեզ՝ երկինքն ու երկնքին մէջ ամենուս Հայրը ցուցնէ՛ր:

Ձը ճանչցար նաեւ ինչ որ երկնից երանութեան գուշակն ու ճաշակն է յաստիս ու բանի տեղ չի դրիր այն բաներն որ գեղեցիկն զգացումը կը զարգացնեն ի մարդ:

Եւ ըսիր. «Որովհետեւ կենաց մէջ իրական բան մը եթէ կայ այն ալ տառապանքն է, ուրեմն պէտք չ'կար որ ծնէինք»: Իբրեւ թէ յաւիտենական խորհուրդք պիտէին սահմանափակիլ այս անցաւոր աշխարհին ու աղցաւոր<sup>1</sup> կեանքին մէջ:

Ու երբ տեսար որ կամաց կամաց օրն ալ իրիկուն պիտի ըլլար, յառաջ քան զժամը վարագոյրը քաշել ուզեցիր՝ ջնայելով բարեկամացդ որ շուրջդ էին ու բարեկամիդ (\*) որ հեռո՛ւն էր:

Ու առ խարխափ գնացիր կարծր ու պաղ աւազին վրայ, խիճերուն վրայ, ժայռերուն վրայ, ջուրերուն մէջ, ոչնչութիւն գտնելու:

Գարձի՛ր, ետ դարձիր տակաւին պէտք ունինք այդ ազնուական գլուխդ տեսնելու ուր երբէք վատ խորհուրդ մը չէր յղացած. դարձի՛ր, տակաւին շատ վիշտեր կան սիրտիւն, շատ նկունք<sup>2</sup> սրտեր կան զօրացընելու, ու նայէ որչափ ձեռքեր երկնցած են քեզի. դարձի՛ր, չըլլայ թէ Աստուած որ քու կեանքդ պարգեւ մը ըրաւ ամենուս՝ զքո մահդ պատուհաս մ'ընէ շատերուն:

Այլ չէ՛, աւանիկ աներկմիտ՝ կ'ընթանաս ու չես լսեր անհուն աղաղակը որ կը բարձրանայ ետեւէդ ժողովրդեան ամեն կարգերէն. ալիքներուն աղաղակն ալ չես լսեր:

(\*) Օտեանի՝ որ Բարիլէն գրեց գոյս Ողբ նոյն ժամանակ ի Մասիս Օրագրի:

Լսէի՛ր գոնէ՛ վերջին վայրկեանիդ Աստուծոյ ձայնը սրտիդ մէջ:

Ո՞ գիտէ:

Կըսեն թէ այն դժնէ՛ ծովածոցին մէջ դեռ ծովամոյն՝ չեղած, երկար ժամերով շրջեցար, ժամեր ի բուն, նայելով անշուշտ ծովուն, նայելով նաև երկնքին: Խորհուրդք արդեօք նորանօրք չ'թաւալեցի՞ն քու միտքդ այն միջոցին, և արդեօք երկինք չ'լծեցո՞ւց արդէն հողուոյդ մէջ, ի վարձատրութիւն անստգիւտ՝ և առաքինի կենցաղիդ, իւր յաւիտենական գթութեան ցօղն անմահարար:

Գ. Ս. Օսեան

Բառք. — [1] Կարօտ: — [2] Ընկճեալ: — [3] Անկասկած: — [4] Գէշ: — [5] Ծովը խղրուիլը: — [6] Կատարեալ:



ՅԱՌԱՂ ՅԱՌԱՂ

« Յառա՛ջ, յառա՛ջ » . Եթէ լաւ կը յիշեմ՝ այս վերնադրով և մանաւանդ նոր աշխարհին հսկայաքայլ՝ յառաջադիմութեան վրայ՝ սքանչելի գլուխ մը կայ էմէ-Մառթէնի Մարց Դաստիարակութեան՝ այն գլխովին զ սքանչելի գրքին մէջ՝ զոր բաւական ժամանակէ հետէ,

ձեռքս չեմ կրցած առնել: Սակայն եթէ չեմ ա՛յլեւս կարդար այն ոսկեղինիկ մատեանն<sup>5</sup>, ականջիս կը հնչէ քաղաքակրթութեան վսեմ՝ ձայնն անդադար. « Յառա՛ջ, յառա՛ջ. » Ու կը կրկնեմ ես ալ « Յառա՛ջ, յառա՛ջ: » Ու մինչ գրիչով կը հաստատեմ ցաւօք թէ յառաջադիմութիւնն ա՛յնքան յամր՝ կը կատարուի մեր ազգին մէջ, արձագանգն հարիւրապատկուած ու բիւրասպատկուած ինձ կը վերադարձնէ ձայնս. « Յառա՛ջ, յառա՛ջ: » Եւ հողուոյս մէջ կը զօրանայ յառաջադիմութեան հաւատքն, և տխուր իրականութիւնն՝ աչքէս տակաւ կը հեռանայ: Բարեբաստիկ<sup>7</sup> այդ ժամերուն մէջ կը գրեմ հատուածներ՝ որք իրենց վրայ կը կրեն. « Բերկրառիթ՝ երեւոյթներ<sup>9</sup> » և այս տեսակ գեղածիծաղ տխուրաներ<sup>10</sup>: Այդ քաղցրիկ պատրանաց<sup>11</sup> ժամերուն մէջ ինձ կ'երեւի ազգս՝ որ մեծաքայլ կը յառաջադիմէ քաղաքակրթութեան ուղւոյն մէջ. և Մարց Դաստիարակութեան պատուական հեղինակին հետ կը դռնչեմ. Յառա՛ջ, յառա՛ջ:

Ն. Տէմիրեխաւեան

Բառք. — [1] Խիստ մեծ քայլ: — [2] Բողորովին: — [3] Դիրք: — [4] Վերջին ատիճան գեղեցիկ: — [5] Ծանր: — [6] Բուն, իրացնէ եղած բանը: — [7] Դոհ, երշնիկ: — [8] Ուրախութիւն պատճառով: — [9] Տեսնուած բան, բնութեան ցուցըցած հրաշք: — [10] Պատուանուն, վերնագիր: — [11] Խաբէութիւն:



ԽՕՍԲ ՎՍԵՄ. Գ. ՕՏԵԱՆԻ

ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ

ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ ՕՐԸ

Սրբազան Հայր(\*),

Դիպուածը անանկ բերելով որ ազգային վարչութեան միակ ներկայացուցիչ գտնուիմ հոս, պարտք կը համարիմ յանուն ազգին մէկ քանի խօսք ընել:

Ձեր Սրբազնութիւնը շնորհակալութիւն կը յայտնէր ներկայ գտնուող հանդիսականաց. ես կը զարմանամ թէ ի՞նչպէս շատ աւելի չէ բազմութիւնը: Դսրոցական տօնախմբութիւններն՝ ազգին այսօրուան վիճակին մէջ՝ միակ ճշմարիտ ազգային հանդէսներն են. այն հանդէսներն ազգին ապագային նախատօնակներն են. հոս պէ՛տք է խռնին հազարաւոր ազգայինք, իրենց կէցցէները հնչեցնելու. մանաւանդ այս վարժարանիս՝ որ միակ գիշերօթիկ վարժարանն է ազգին մէջ, կղերին՝ և ժողովրդին կրթութեանը միանգամայն նուիրեալ՝ դասի նստարաններու վրայ միացնելով զանոնք՝ զգացմամբ ու սկզբունքներով միացեալ կ'ընծայէ աշխարհի:

(\*) Ողբացեալն Ներսէս Վարժապետեան՝ նախկին Պատրիարք:

Սրբազան Հայր, դուք որ այնքան լաւ կը գործադրէք վարժարանիս բարերար հիմնադրաց կամքը, իրաւունք ունիք պարծենալու, իրաւունք ունիք ազգին շնորհակալութիւններուն: Ազգին մէջ Ներսէս մ'ըլլալ փառք է, այլ քանի՞ առաւել փառք է Ներսէսներ յարուցանել:

Աշակերտք,

Դո՛ւք պիտի ըլլաք այս Ներսէսները: Ձեր ընկերակիցներէն մէկ քանին քիչ մը առաջ իրենց խօսած ճառերուն մէջ լոյս կ'աղաղակէին ու ի մեծագործութիւն կը հրաւիրէին զձեզ, մանաւանդ վերջին երկուքը. առաջինը իր հասուն ու խորհրդածեալ լեզուովը, երկրորդը սրտաման պէս գոռացող լեզուովը: Ի նոյն կը հրաւիրեմ ես ալ զձեզ. այս դարուս մէջ ճշմարիտ մեծագործութիւնը(\*) լոյս ծաւալելն է. լոյս ծաւալեցէք, խաւարն ու թշուառութիւնը մէկտեղ կը հալածին և մարդկութեան վրայ ծանրացող ամեն չարիք լուսով կ'անհետանան. լոյս ծաւալեցէք ամեն տեղ, և մինչեւ յետին հիւղակը՝ ուր արեւը կը զլանայ իր նըշոյլները: Լոյս ծաւալեցէք, հիւղակը պալատ կ'ըլլայ, և արեւը մարդուն ձեռքը գործիք կ'ըլլայ գիտութեամբ:

(\*) Կը գործածուի խիստ երեւելի շէնք շինող արքայից և իշխանաց գործերը նշանակելու համար. եզրագոտի բուրբերը՝ որոց մէկ քանին բանն, երսուն տարիէն լնացած են, մեծագործութիւն են. ինչպէս Բաբելոնի, Նինուէի, Յունաստանի և Իտալիոյ անուանի հին շէնքերը: Բայց ընդհանրապէս երեւելի գործ մը, նշանաւոր բարիք մը մեծագործութիւն կ'ըսուին:

Նրանի թէ այս հրաւերը՝ զոր կը համարձակիմ ըսել՝ բոլոր հանդիսականք իմ բերնովս կը կարգան ձեզի, արձանացած մնար ձեր սրտին ու մտքին մէջ:

Բառք. — [1] կղեր, եկեղեցական. (Յուճարէն է):



### Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Բանտին մէջ առաջին գիշերն արթննալը սոսկալի բան է. « ըլլալի՞ք բան է, կ'ըսէի ես ինձ, ուր ըլլալս յիշելով, ըլլալի՞ք բան է: Ն'ս հոս: Նրազ չէ՞ արդեօք: Բայց վերջապէս երէկ էր որ բռնուեցայ. երէկ էր որ այն երկար հարցաքննութիւնն ինձ եղաւ, որ վաղն ալ պիտի շարունակուի և մինչեւ ե՞րբ, մարդ չգիտէ: Նրեկ իրիկուն էր ուրեմն՝ որ ննջելէս առաջ լացի, ծնողքս միտքս բերելով: »

Հանդիսաւր, խորին լուսութիւնը, կարճ քունը մտքիս զօրութիւնը կազդուրելով՝ տրտմութեանս ուժն ալ հարիւրապատիկ աւելցուցած կ'երեւէին: Միտքս զբաղեցնող ուրիշ բան չգտնուելով՝ անհաւատալի ազդուութեամբ մ'երեւակայութեանս առջեւ կը նկարուէր իմ ամէն սիրելիներուս՝ մանաւանդ հօրս մօրս զգալիք դառն ցաւը՝ երբ իմ բանտարկութիւնս իմանային:

Հիմա դեռ հանգիստ կը ննջեն, կ'ըսէի ես ինձ, կամ թերեւս նստեր գորովանօք զիս կը մտածեն՝ առանց ուր ըլլալս կասկածելու: Նրանի՞ թէ դժբաղդութեանս լուրը թօրինօ չհասած՝ Աստուած վերցներ զանոնք աշխարհէս. ո՞վ պիտի զօրութիւն տայ անոնց այս հարուածիս դիմանալու:



### Ջ Ա Խ Ո Ղ Դ Է Պ Ք Մ Ը

Առաջին շարթուան վերջը ձախորդ դէպք մը պատահեցաւ՝ որ զիս շատ վշտացուց: Խեղճ Բիէրօ բարեկամս՝ փափաքելով ինձ պէս՝ որ հաղորդակցութիւն մը մէջերնիս հաստատենք՝ տոմսակ մը գրեր ու ինձ զրկեր էր, ոչ թէ պահապաններէն մէկուն ձեռօք՝ այլ դրժբաղդ բանտարկեալի մը որ մեր սենեակներուն մէջ ծառայելու հուզար պահապաններուն հետ: Վաթսուն եօթանասուն տարեկան մարդ մ'էր, չեմ գիտեր քանի՞ ամիս բանտարկութեան դատապարտեալ: Վրաս գլխունուած դնտասեղով մը մատներուս մէկը ծակեցի, արիւնովս քանի մը տող պատասխան գրեցի՝ և այն տոմսակը բերող մարդուն տուի՝ դժբաղդաբար լսեղճը դիտուելով՝ բռնուեցաւ, տոմսակը վրայէն գտնուեցաւ, և եթէ չեմ սխալիր՝ չարաչար ծեծ կերաւ: Լալու աղաղակ մը լսեցի և ինձ այնպէս եկաւ որ այն

դժբաղդ ծերունիին ձայնն էր. ա՛լ անկէ ետեւ մէկ մ'ալ չտեսայ զայն :

Ասեանը կանչուելով՝ սարսափեցայ՝ երբ ինձ ցուցըցին գրած տոմսակս, գոհութիւն Աստուծոյ որ մէջը մեզ համար վտանգաւոր բան մը չկար, այլ պարզ ողջունի պէս բան մ'էր : Հարցուցին ինձ թէ ինչո՞վ հաներ էի արիւս . գնտասեղս առին և ծիծաղեցան վրանիս՝ որ ասանկ ինքզինքնիս ձեռք տուինք : Բայց ես, ո՛հ, չէի ծիծաղեր, աչքիս առջեւն էր միշտ ծեր թըղթաբերը : Յօժարութեամբ յանձն կ'առնուի պատժուիլ անոր տեղ և երբ անոր լայլուն ձայնը լսել կարծեցի՝ սիրտս փղձկեցաւ :

Քանի մ'անգամ փուճ տեղը լուր հարցուցի անոր համար բանտապետին և պահապաններուն : Գլուխին թոթուելով կ'ըսէին . « շատ ծանր եղաւ անոր . ալ մէկ մ'ալ չկրնար ընել, հիմա քիչ մ'առաւել հանգիստ է » : Ասկէց աւելի բան մը չէին հասկըցներ :

Արդեօք ըսել կուզէին թէ ողորմելին նեղ բանտի մը մէջ արգիլուած էր, կամ թէ գաւազանին տակը կամ կերած ձեծին ցաւերուն չ'դիմանալով մեռե՛ր էր :

**Սիլվիօ Բելլիօ**

Թարգմ. Կ. Ս. Իւրիսեան



**ԻԻԿՈԼԻՆԻ ՈՐԴԻՆԵՐՆ**

Չպիտի ցաւինք հօրն վերայ, վասն զի եթէ ճակատագիրն անգութ եղաւ, եթէ դատապարտեցաւ անաւոր տանջանաց, հարկ է խոստովանիլ թէ իւր սիրտն զերծ չեղաւ խղճի խայթէ, վասն զի իւր ձեռք ամբիժ չէին յարիւնչեղութենէ :

Այրարտէսգա Իւկոլին կոմսն յառաջ քան զիւր արկանիւն յայն բանտ՝ որ կոչեցաւ յայնմհետէ աշտարակ Նօթուիւնան, ուրիշ ոճիրներ գործած էր : Ժողովրդեան պաշտպան անուան տակ բռնաւոր մ'եղած էր նա . և ապա տեսնելով որ վեհագոյն իշխանութեան ժամանելու համար ունեցած փառամոլ խորհուրդներն ի դերեւ կ'ենէին քան զինքն վրիժագործ հակառակորդաց կողմանէ, մատնեց թշնամեաց Պիզայի հանրապետութիւնն և այն քաղաքն զոր պարտաւոր էր պաշտպանել : Երբ Իւպալտինի արքեպիսկոպոսին մէկ ազգականն յանդիմանեց զնա իւր մատնութեանն համար, Իւկոլին որ բառ մ'իսկ չունէր զինքն արդարացունելու համար, իւր արդէն գործած եզերանց վերայ նոր ոճիր մի եւս յաւել, պատասխանելով իւր պարսաւադէտին դաշոյնի մը հարուածով :

Այս բանն տեղի կ'ունենար յիտալիա, այնպիսի ժամանակի մը մէջ՝ յորում բոլոր երկիրն երկպառակ կողմանց փառամուլութեան մատնեալ՝ անդուլ աճեցուն սպստամուլութեանց մէջ կ'կորուսանէր իւր վերամարտիկ երկտասարդութեան ծաղիկն, և իւր արեան ամե-

նէն մաքուրն: Հրդեհն կ'լափլիզէր քաղաքներն, խոտն կ'աճէր անբնակ փողոցներու մէջ, և գիւղօրէք կ'տանջուէին սովով: Պիզայի հանրապետութիւնն թերեւս առաւել քան զայլս կ'վշտակրէր քաղաքային պատերազմաց աղետից երեսէն: Իւկոլին կոմսն տեսնելով զժողովուրդն աշխատեալ և պարտասեալ՝ կարծեց թէ արքեպիսկոպոսին ազգականին սպանութիւնն անվրէժ պիտի մնար, և թէ՛ հակառակ իւր անցեալ մատնութեանց՝ բարեբաստիկ յաջողուածով պիտի ընդունուէր իբրեւ վեհապետ իւր ունեցած նշանաւոր անուանն և իւր ընտանեաց ժառանգած մեծագոյն փարթամութեանց պատճառաւ: Մինչդեռ Իւկոլին կ'ջանար նոր կուսակիցներ փնտռել, Ռոժէր՝ Իւպալտինի արքեպիսկոպոսն՝ որ չէր կրնար մոռանալ իւր ազգականին խողխոզումն, գաղտագողի ահաւոր ասպտամբութիւն մը կ'պատրաստէր Աէրարտէսգայի դէմ:

Յամին 1288, յամսեանն յուլիսի, Պիզայի բանակն հնչեցուց Մայր Եկեղեցւոյն զանգակն, « ի գէն » աղաղակեցին, և ռամիկն ընթացաւ դէս յապարանսն՝ ուր կ'բնակէր Իւկոլին և իւր ընտանիքն: Աոմսն և իւր զաւակուհիք բազմութեանէն չ'երկեան բնաւ, մինչեւ երեկոյ դիմադրեցին կատաղեաց դէմ որք պաշարած էին իւրեանց բնակավայրն: Կաղդոյ՝ Իւկոլինի որդւոց կրտսերն՝ քաջութեան սքանչելիքներ ցոյց տուաւ, երկիցս իւր հօր կեանքն աղաատեց ընդունելով հարուած մի որ Իւկոլին կոմսին ուղղուած էր. այլ պաշարողք կրակ տուին պալատան և պարտեալ ընտանիքն արքեպիսկոպոսին կամաց սնձնատուր եղաւ: Յայնժամ սա՛ իւր վրիժուն ձայնին միայն լսելով մի և նոյն տանջանօք ուզեց անճխտել՝ Աէրարտէսգայի ամբողջ ցեղն:

անագորոյն եղան թէ՛ հօր և թէ՛ զաւակացն համար: Կաղդոյի և իւր երեք եղբարց հասակն ու անմեղութիւնն անոր առջեւ շնորհ չ'գտին. այս կինգ զոհերն տարաւ Արնոյի եզերաց վերայ հաստատեալ աշտարակ մը և ինքն անձամբ փակեց խնամով Իւկոլինի և նորա որդւոց բանտին դուռն: ապա ի ներկայութեան ամբոխին բանտին բանալիներն գետը նետեց, արձակելով ահաւոր նզովք մ'անոր դէմ որ պիտի համարձակէր ազատութեան փորձ փորձել բանտարկելոց մասին և կամ պիտի ուզեր տալ նոցա օրապահիկ պարէն մի բանտին վանդակներուն մէջէն, վասն զի Պիզայի արքեպիսկոպոսէն արտասանած սոսկալի վճռոյն համեմատ՝ Իւկոլին և իւր չորս զաւակուհիք պիտի մեռնէին նօթութեան լլկանօք:

Այժմ թող Տանդէ (\*) խօսի, որ իւր ՌժԻԻ անուն անմահ քերթուածոյն մէջ դրած է Իւկոլինի տանջանաց պատմութիւնն նոյն իսկ ի բերան Իւկոլինի:

« Քնացայ և սոսկալի երազ մը տեսայ որ պատառեց իմ հանդէպ ապագային քօղն: Պիզայի արքեպիսկոպոսն՝ որ իմ տէրս ու պաշտպանս լինել կը թուէր, գայլ մի նորա կորիւններն կ'հալածէին զնա լերան այն կողմէն որ զՊիզա կը բաժանէ Լիւզէն: Քիչ ժամանակ յետոյ գայլն և իւր կորիւնք իրենց արշաւանքէն պարտասեալ՝ ինկան նուազեալ և տեսայ շանց վոհմակ մի որ կ'գիշատէին նոցա անդամներն: »

Արթնցայ, զաւակներս՝ որք ինձ հետ բանտարկուած էին՝ կուլային և կ'ըսէին. Անօթի եմք: Կանգնեցան այն ժամուն՝ յորում կ'սպասէինք մեր կերակրոյն:

(\*) Քերձող իտալացի (1265—1321):

Տխուր նախազգացմունք կ'լլէին մեր սրտեր: Թուեցաւ ինձ թէ կը փակէին բանալեօք սոսկալի աշտարակին դուռներն այլ եւս չբանալու համար: Անխօս կ'դիտէի զաւակներս, սարսուռ մի զգացի, և չէի կրնար արտասուել: Զաւակներս կուլային: Անսէլ՛, իմ փոքրիկ Անսէլ՛մս ըսաւ ինձ, « Ի՞նչ ունիս, հայրիկ, և ինչո՞ւ համար զմեզ այսպէս կ'դիտես »: Զպատասխանեցի բնաւ. անշարժ մնացի, և այս անզգայ վիճակն տեւեց մինչեւ ի վաղիւն՝ երբ արեգակն դարձեալ լուսաւորեց զաշխարհ: Գողգոջ և նուազկոտ ճառագայթ մի սալըրդեցաւ բանտին մէջ, անձիս տառապանքն թշուառ որդւոցս դէմքին վերայ գրուած տեսայ, բարկութեամբ և յուսահատութեամբ ձեռքերս կը խածատէի: Խեղճ զաւակներս կարծեցին թէ սովէն կ'տանջուէի. մերձեցան ինձ ըսելով. « Ո՛հ, գորովագութ հայր, մեք եւս կ'տառապիմք յոյժ, բայց մեր վիշտն նուազ ահաւոր պիտի լինի եթէ զմեզ սնունդ ընես քեզ: Դու մեզ տուիր կորնչելի մարմիններ, քեզ կ'պատկանին անոնք, կրնաս զայնս առնուլ անդրէն »:

« Զանացի հանդարտ երեւիլ չ'յաճախելու համար նոցա վիշտն, երկու օր եւս մնացինք առանց բառ մ'արտասանելու. բայց չորրորդ օրն Կաղդոյ ելաւ կանգնեցաւ, ոտիցս փարեցաւ և մեռաւ գոչելով. « Հա՛յր, հա՛յր, ինչո՞ւ չես օգներ ինձ »: Միւս երեքն նուաղեցան հետզհետէ. տեսայ զանոնք մահացեալ: Հինգերորդ և վեցերորդ օրերուն, հուսկ ապա ես եւս զօրութեանս ծայրայեղ սպառումն զգացի, նոցա դիականց վերայ ինկած երկու օր կ'գոչէի հեծեծագին, սակայն սովն աւելի զօրաւոր եղաւ քան վիշտն:

Երբ իւպալտինի արքեպիսկոպոսն բանալ տուաւ

իւր զոհից բանտն, իւկոյին մեռած էր իւր զաւակաց հետ, և տակաւին բաւական բան մնացած էր Կաղդոյի դիակէն՝ տեսնելու համար նորա մարմնոյն վերայ այն երկու վէրքերն՝ զորս ընդունած էր իւր հօր պաշտպանելու ատեն:

Բառք. — [1] Փնայնել, ոչնչացնել:

## ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ

Օրացոյցը փետրուարի Գրէ օրուան հետ կը բերէ մեզ մե՛ծ յիշատակ մը, յիշատակ « Սահակայ Պարթեւի Հայրապետին մերոյ »: Այդ օրէն սկսեալ մինչեւ Բարեկենդանի սպառնալից հինգշաբթին՝ սուրբեր սուրբերու կը յաջորդեն, ամենքն ալ մեծ, ամենքն ալ խնկելի, պաշտելի: Ատոնց գլուխը գրուած է Սահակ Պարթեւ և շատ լաւ մտածուած է այս. զի Ղեւոնդեանք և հինգշաբթի աւուր 1036 սուրբեր իրենց իբրև հոգեւոր ծնող ունին այդ մեծ եկեղեցականը. շատերն ինք մը կըրտած է աւազանին մէջ ի Քրիստոս, և շատեր ալ մկրտած է զպրոցին մէջ ի գիր և ի գրականութիւն. Արտաղու մեծ սուրբին Մեծ-Հայրն է. զնա գգուած է իր հայրենի գրկին մէջ. անոր մատաղ ու քնքուշ թաթիկներն, որ ի վերջոյ սրբութեանց պաշտպան եղան, համբուրած, օրհնած և փայտայած է:

Եթէ օր մը լաւ եւս ըմբռնենք մեր նշանագրաց և գրականութեան ներքին արժէքն , այն օրը վախ չպիտի ունենանք եզրակացնել որ գրականութեան և գրի առաջին օրը՝ հայ մտքերու ստեղծագործութեան առաջին օրն է մեր պատմութեան մէջ : Մինչեւ Սահակ Պարթեւի թուականը՝ քրիստոնէութիւնը խարխուլ հիման վրայ է ի նայս . լոյսը տակաւին մտած չէր մեր գիւղերէ և քաղաքներէ ներս . եկեղեցին հռոմարէն կ'աղօթէր ու կ'օրհնէր . սաղմոս , ժամագիրք յոյն և ասորի էին , և օտար կրօնաւորք կը ընունին մեր վանքերը , մեր տուները , զարնելով ջախջախելով ինչ որ մեր կեանքէն էր , ինչ որ մեր սրտին ու հոգւոյն վրայ կը պաշտուէր :

Տարւոյն մէջ երկու օր որոշուած է Սահակ Պարթեւի յիշատակին համար : Կ'արժէ՛ , շատ կ'արժէ . եկեղեցական և գրական երկու կեանքն ալ սուրբ պահած է իր վրայ . հայրապետական աթոռին վրայ միշտ նախանձելի կը մնայ յետոց . գրականութեան մէջ՝ յաւէտ օրինակելի :

Հրանդ . (Մ . Կ .)

S U Ռ Ա Պ Ա Ն Ք

Տառապանք գեղանի աղջիկ մ'էր . իւր սեւ մազերը առատօրէն և խոպրպածեւ կ'իյնային նիհար ուսերու վրայ : Իւր սեւ աչերը մեռեալի մը աչաց հանգոյն խորն իջած էին . ընդհանուր մեղամաղձութիւն մը կը տիրէր

իւր դալկահար դիմաց վրայ , որոյ ոչ մէկ ջիղը չէր ամիսփուած սրտազին ժպիտով մը , այլ միշտ և հանապաղ արտասուաց կայլակներ յորդած էին իւր նուազուն աչերէն անգոյն այտերուն վրայ , անտի ի սիլուսս աշխարհի տարածուելու համար : Անկարելի էր դիտել սոյն հէգ աղջիկն ու չի լալ :

Տուն չունէր Տառապանք , անդադար սատ անդ կը թափառէր . մերթ տնանկաց խեղճ հիւղակները կը մըտնէր և մերթ մեծատանց հոյակապ պալատանց այց կուտար :

Այնքա՛ն լուրջ , այնքա՛ն տխուր էր որ ոչ ոք կը համարձակէր ապաստանարան մը նուիրել նմա : Սակայն զարմա՛նք . որու որ նայէր , մեծ դժբաղդութիւն մը կը հասնէր անոր : Մին կը կորուսանէր իւր միակ դաւակը , ուրիշ մը իւր պատիւն ու հարստութիւնը , երրորդ մը իւր թշնամիներէն կը հալածուէր յանիրաւի , միոյն բոլոր որդիքը գէշ ելնելով զինքը ժամանակէ առաջ կը ծերացնէին , կամ առն ու կնոջ միջեւ գրգռութիւն կը ծագէր և կամ ընտանեաց անդամներէն մին կը հիւանդանար և տարիներով չէր ապաքիներ :

Մարդիկ , յապուշ կրթեալ՝ կը հարցնէին միմեանց թէ ո՛ւստի կուգային այսքան պատուհասներ , այսքան տառապանք , անգիտանալով թէ իրենք իսկ իւրեանց դուները բացած էին Տառապանքին :

Ստէպ Տառապանք երկիցս կ'անցնէր մի և նոյն ճանապարհէն և ակնատես ըլլալով իւր ետեւէն թողած տխուր պարգեւաց , կուլար և երկար ատեն կը զգուշանար մի և նոյն տան մէջ մոռնելէ : Սակայն զմանս

այնքան կը սիրէր որ դժուարին էր նմա բաժնուիլ ի նոցանէ և միշտ այց տալով կը գրկէր զայնս , կը սեղմէր , կը համբուրէր ջերմագին , և այսպէս կը բաշխէր նոցա իւր տխուր պարգեւները : Սակայն այն ատեն իւր սիրեցեալ անձանց վրայ պատուհաս պատուհասի վրայ կը հասնէր , և խեղճ աղջիկը վշտակոր իւր փոքրիկ ցուպը կ'առնուր և բեկեալ սրաիւ ու արտասուալից աչօք մնայք բարեաւ ըսելով կը մեկնէր : Տառապանք կը շարունակէր իւր ճամբան յամբ , առանց աճապարեւու , սակայն արագ քան լերան առուակն , արագ քան հողմն խտտաշունչ . այնպէս որ տուն չէր մնար ուր այցելած չ'ըլլար : Նա մանաւանդ սոսկալի էր երբ փոքրիկ մանկանց մատչէր . խեղճերը կամ որբ կը մնային և կամ հիւանդանալով իւրեանց թարմ գեղեցկութիւնը կը կորուսանէին . և Տառապանքի նման գունատ և դալկահար կը լինէին . նորա տխուր գեղեցկութիւնը կ'առնուին :

Երբ Տառապանք նմանօրինակ դժբաղդութիւն մը տեսնէր , կ'սկսէր դառնապէս լալ և երկար ատեն ոչ մի տղու կը նայէր : Մինչեւ իսկ գլուխը կը դարձնէր երբ նոցա անմեղ խաղերուն հանդիպէր :

Օր մը Տառապանք ոտտախտ խնձորենիի մը ներքեւ բազմած կը դիտէր . կը դիտէ՛ր նորա թարմ ու գեղեցկափայլ պտուղներն որք տեսողաց զմայլանք կ'ազդէին :

— Ո՛հ , սիրուն խնձորենիս , ըսաւ Տառապանք , պարգեւէ ինձ քուկիներդ նման թարմ գեղեցկութիւն մը որպէս զի մարդիկ աւելի հաճութեամբ նային առ իս :

— Ոչ , պատասխանեց խնձորենին , ոչ , զի եթէ գեղեցիկ ու թարմ այտեր ունենաս , մարդիկ այլ եւս

չպիտի ընդունին զքեզ այդքան զթութեամբ ու բարութեամբ :

Տխուր ու վշտաբեկ այն խօսքերէն , խեղճը ելաւ և իւր ճանքան շարունակեց , հասաւ պարտիզի մը մէջ , առուակի մը եզրն : Անդ թռչունք այնպիսի իմն քաղցր կը ճռուողէին որ ունկնդրին . սիրտն , ուրախութեան հեղեղի մը մէջ կը լողար :

— Սիրելի թռչնիկներս , աղերսեց Տառապանք պաղատագին , ո՛հ , տուէք ինձ ձեր այդ գեղեցիկ ճայնը որ գոնէ քիչ մը զմարդիկ ուրախացնեմ :

— Ոչ , ոչ , սիրուն աղջիկ , ճռուողեցին թռչունք , եթէ դու չունենաս այդքան անձայն գալուստ և նըմանօրինակ մեկնում , մարդիկ զքեզ այնքան շուտ չեն մոռանար ու անմիջապէս կ'զգան թէ դու Տառապանքն ես և նոցա վիշտ կը բերես :

Աւելի հեռի գնաց հէգ աղջիկն և մեծ անտառի մը մէջ հասաւ : Անտառը կը սփռէր համասփիւռ իւր անուշահոտ բուրումն , և ոտքը կը կոխէր ծառոց ստորոտը գանուած լուերուն վրայ : Աստ անդ արեւուն ճառագայթները խարշափող տերեւոց մէջէն սահելով լուին վրայ կը խայտային և իւրեանց ոսկեզօծ լոյսը չորցած տերեւներուն վրայ կը հանգչէր : Հրաշալի գեղեցկութիւն մը կը տիրէր :

Խեղճ Տառապանք , վաստակարեկ , ծառի մը յենլով մտածեց .

— Աստ , կարող եմ անխիղճ նստիլ , զի և ոչ մէկու վնաս կը պատճառեմ . հանգչի՛մ . զի ոչ ոք կը դժբախտանայ զիս տեսնելով :

Նոյն պահուն լուսոյ շառաւիղ մը նորա մթին աչե-

րը տեսնելով, ցատքեց նոցա մէջ, լուսավառեց զայնս  
և մինչեւ նորա սիրտը թափանցեց:

Ամբողջ անտառը տեսաւ Տառապանքի սիրուն դի-  
մաց դիւթիւն իրայլը և ուրախութենէն սարսուաց: Սա-  
կայն Տառապանք չէր գիտեր թէ աւելի գեղեցկացած  
է, կ'զգար միայն թէ՛ արեւուն ճառագայթն իւր սիր-  
տը տաքցուցած և ուրախութիւն սիրած էր անդ:

— Ո՛հ, անտա՛ն, անտա՛ն, աղաղակեց, տուր ինձ  
քո հազարաւոր ճառագայթներէդ մին և զիս երջանիկ  
ըրէ:

Անմիջապէս մեռելային տխրութիւն մը պատեց ան-  
տառը. ծառերը տխրութեամբ զիրեարս դիտեցին,  
արեւուն ճառագայթը խոյս տուաւ խեղճին աչերէն,  
մոզեսի՞ մը դիպաւ և անտի կորսուեցաւ բարձր խո-  
տերու մէջ:

— Խեղճ աղջիկ, ըսաւ ծերունի կաղնի մը խօսք  
առնելով, արեւուն մէկ ճառագայթը կարող է գքեզ  
գեղեցկացնել և այն ատեն մարդիկ յափշտակուելով  
գեղեցկութենէդ գքեզ ստէպ ստէպ պիտի կոչեն և  
այսու իւրեանց կարողութենէն վեր տառապանաց պի-  
տի մատնուին. ուստի հարկ է որ միշտ զուրկ մնաս  
իայլէ ու ջերմութենէ:

Անխոնջ աղջիկը աւելի հեռի գնաց և ընդարձակ ու  
հանդարտ լճի մը եզրը հասաւ, որոյ հայելանման մա-  
կերեւոյթին վրայ բիւրաւոր աստղունք ինկած էին  
յերկնից: Ոչինչ կը շարժէր անդ. իրիկունը իւր մթին  
թեւերը տարածելով ամեն ուրեք լուծիւն կը պատ-  
ուիրէր: Տառապանք իւր նուրբ ձեռքերը ջուրին մէջ  
թաթխելով ճակտին տարաւ. Նրեկոն իւր քովէն անց-  
նելով փափաց:

— Գիշեր բարի, հանդարտ նիրհէ՛ ու վշտերդ մոռ-  
ցիր:

Տառապանք երկար ատեն նայեցաւ նորա ետեւէն  
և մեղմադին ձայնիւ ըսաւ:

— Անգամ մը հանդարտութիւն գտայ անտառին  
մէջ. անգամ մը միայն մոռացայ վիշտս, երբ արեւուն  
ճառագայթը սիրտս թափանցեց. սակայն աւա՛ղ, անցաւ:

Երազոց և խոկմանց մէջ թափառուն, ջուրը դի-  
տեց, ուսկից զովութիւն կը բուրէր. իսկ մէգին մէջէն  
կ'անցնէին փայլազգեստ ուրուականներ:

Տառապանք իւր գլուխը վեր վերցուց և չորս կողմն  
դիտելով հեռուն տնակ մը նշմարեց ուսկից կարմրո-  
րակ լոյս մը կը ցօլար:

— Զարմանալի է, մտածեց ինքնին Տառապանք,  
այդ տունն երբէք չեմ այցելած, կ'երեւի թէ կը հըս-  
կեն դեռ հոն: Եւ մեղմիւ պատուհանին մատչելով  
գեղանի կին մը տեսաւ սպիտակ և սպիտակահէր. եր-  
կար շրջագգեստ մը կը կրէր նա, իսկ գլուխը նուրբ  
թաշկինակով մը կապուած էր: Գեղեցիկ կինը գիր կը  
գրէր հաստատ ձեռքով մը, մեծ գրքի մը մէջ: Յօն-  
քերուն մէջտեղ խոր նշան մը կար, որ խիստ որոշ-  
ման մը կը նմանէր, սակայն իւր նուրբ ունդանց ու  
չրթանց վրայ նկարուած էին կանացի հեզութիւն և  
սրտի անսահման բարութիւն:

Տառապանք զարմացած կը դիտէր երբ յանկարծ  
երկու գեղեցիկ դիւթիւն աչեր բարձրացան և հանդար-  
տութեամբ զինքը դիտեցին: Քաղցրիկ ձայն մը ձեւա-  
ւոր բերանէ մը ելնելով ըսաւ.

— Մտիր, բայց ներս մտիր, աղջիկ, երկար ատենէ  
ի վեր քեզ կ'սպասեմ: Ես, չէի կարող քեզ գալ, զի

չեմ երթար ուր չեն հոչեր զիս : Ես , մայր Համբերու-  
թիւն եմ , աստ կը բնակիմ , կը հսկեմ և մտիկ կ'ընեմ :  
Լիճը զոր կը տեսնես , ինձ կ'ածէ զիս ուզողներուն  
ձայները : Եստ անգամներ ետեւէդ եկած եմ , սակայն  
դժբաղդաբար զքեզ չեմ գտած :

Ճակատին նշանն աւելի խորացաւ :

Տառապանք իւր գլուխը նորա ծոցին վրայ հանգ-  
չեցուց :

— Ո՛հ , միշտ հետս եկու , ըսաւ :

— Ոչ , աղջիկս , ոչ , երբ զիս կոչես կուգամ և եթէ  
հիմա խոնջած ես հիւր լեր ինձ :

Տառապանք բոլոր գիշերը մայր Համբերու-  
թեան քովն անցուց , իսկ այգուն նոր ուժ ու զօրութիւն առած  
մեկնեցաւ :

Դաշտք ու մարգագետինք գոյնդդոյն ծաղիօք ու  
կանաչութեամբ ծածկուած էին . քաղման եղանակն էր :

Տառապանք՝ սոյն քնքոյչ ծաղիկները դիտելով մը-  
տածեց :

— Խեղճեր , հիմա կը ծաղկիք այգեքան զուարթա-  
գին և այսօր իսկ զո՛հ պիտի լինիք մանգաղին :

Նոյն պահուն կայտառ աղջիկ մը նշմարեց , որ ա-  
ռանձինն կեցած դաշտին մէջ , երեք մարդու արագու-  
թեամբ կը քաղէր :

— Բարի լոյս , սիրունիկս , աղաղակեց կատակասէր  
աղջիկն , եկ ինձ օգնէ . և այս ըսելով սկսաւ ետեւէն  
վազել . մագերն օդին մէջ կը տատանէին , իսկ կապու-  
տագեղ աչերն արեգական փայլն ունէին :

— Բայց ո՞վ ես դու , ըսաւ զարմացմամբ , կանգ  
առնելով ի տես աչացն Տառապանքի :

— Ես Տառապանքն եմ . դու ո՞վ ես :

— Ես Աշխարհ-թիւն եմ : Միթէ չե՞ս տեսներ որքան  
առողջ եմ և ո՞րչափ զօրութիւն ունիմ բազկացս վրայ :  
Եւ սոյն խօսքերն արտասանելով , Տառապանքը փե-  
տուրի մը պէս վեր վերցուց ու բարձրաձայն խնդարով  
սկսաւ դաշտերու մէջէն վազել :

Ուրախութեան ստուեր մ'անցաւ Տառապանքի տչաց  
առջեւէն , և ըսաւ պաղատագին :

— Եկու , միշտ հետս եկու , ես հրաման չունիմ եր-  
բէք հանդչելու և յաճախ այնքան խոնջեալ եմ :

— Քոյր իմ , խնդրածդ անկարելի է , քանզի պէտք  
է որ նիրհեմ , վաղիւ առոյգ լինելու համար : Յերեկը  
ես ալ ամեն տեղ եմ , պէտք է միշտ խնդամ , և եթէ  
շարունակ աչերդ դիտեմ , ժպիտն կը դադրի շրթանցս  
վրայէն : Սակայն երբ յոգնիս , կուգամ : Առջէ զիս քու  
այցելած վայրերդ , որպէս զի վշտացեալ սրտերու մէջ  
զուարճութիւն և ուրախութիւն սիւռեմ :

Եւ հետեւեալ օրն Տառապանք աւելի հեռի գնաց  
ընդարձակ աշխարհին մէջ :

Իսկ Համբերու-թիւնն ու Աշխարհ-թիւնն , խօսքերնուն  
վրայ հաստատ կենալով , նորա հաւատարիմ ընկերու-  
հիներն եղան : Ստէպ՝ առ աին լճի կառուցեալ տան  
մէջ կը հաւաքուէին և կենաց գիրքը կը կարդային ու  
մէջը նորանոր դէպքեր կը գրէին :

Բառք. — [1] Ապշած . — [2] Տերեւներու խրտոց հանել . —  
[3] (Բերեւեւեւ) :

### ՎԱՐԺԱՊԵՏԻՆ ԱՂՋԻԿԸ (\*)

Եւ արդարեւ հիանալի է բանջարանոցը. թիր ու քրտնաթոր մշակը կը քաղէ անդադար, տունկերուն վրայ հակած իւր գլուխն, որ ծածկուած է յարդ քըլ-խարկով մը այնքան խոշոր, որքան կողովը զոր ի ձեռին ունի: Ի՛նչ յարդարեալ և խոնաւիկ հող. մշակին կողտ բաճն է որ գծած է այդ համաչափ ու քառակողմ ածուներն<sup>1</sup>, և շրջապատի զուգահեռածեւ ջրի ալօսներն, որոց եզերքը վարունգն իւր տերեւոց տակ թերասքօղ կը սողայ, կը փուռի, զերդ մի կենդանի սողուն որ կուգայ հոն թրջել իւր լեզուն. ու քիչ հեռուն դդումն է որ գետնին վրայ կը հանգչի, և երախտագէտ այն հողին որ ծնոյց զինք՝ կը փարի անոր անբաժան, մինչ լուբիան անվեհեր վեր սողսկելով իւր ցուպէն, բարձրէն հպարտութեամբ կը նայի գետնաքարչ ու խոնարհ վարունգին ու դդումին վրայ. բայց այդ մշակեալ արտին մի ուրիշ անհերկ խորչն նոյն ինքն սա լեռնածաղկունք և լեռնատունկք, ոյց չ'է հպեր մշակին մատը, անհամեմատ իմն աճած՝ ուռճացած, կարծես յանդիմանել կը թուին վտիտ լու-

Ընդօրինակուած է «Վարժապետիկն աղջիկը» անուն ընտիր վիպասանութենէն՝ որոյ նիւթը քաղուած է տեղական կեանքէ և զրուած յստակ, սահուն և գողտրիկ ոճով, որ պատիւ կը բերէ դեռատի հեղինակին:

բիան, քրտնող մարդուն խնամոց կարօտ եղած բլլալուն համար:

Ու հոս արտին ճիշդ կեդրոնը ծիծաղելի խրտուկ-լակն<sup>2</sup> է որ իւր թեւերը բացած, գող մը հալածելու երեւոյթ ունի առանց մատնաչափ շարժելու իւր տեղէն, բայց սա համբերատար ձին չ'է, որ օրինակի համար չը շարժիր բնաւ իւր տեղէն. անտրտունջ կը դառնայ ու կը դառնայ ջրհորին շուրջը, դարձնելով ջրաբաշխ մեքենային լայնատարած անիւն որ կը ճարձատէ՞, կը ճռնչէ<sup>3</sup>, ու այդ ճարձատմանց ու ճռնչմանց մէջ լսել կը կարծէ մարդ հէգ կենդանւոյն բողբանաց աղաղակներն, հեկեկանքն. այլ բարեբաղդաբար հոն են արտոյտն՝ ու սարիկը<sup>4</sup>, նորընձիւղ ուղէչի<sup>5</sup> մը վրայ գեղգեղելու. կ'երգեն իրենց «ճուի, ճուի, ճուին», կ'աւետեն գարունը, վերակենդանութիւնը, մինչ Աստղիկի «էհը, էհը»ն նոյնքան փափկահնչուն կը գուժէ մահը, այդ բանջարեղինաց պարտիզին մէջ ուր կեա՛նք է ամեն ինչ. բայց չ'արժե՞ր մեռնիլ այդքան գեղեցիկ հողի մը փոխուելու և այնքան արգասեաց հպարտութիւնն ունենալու:

### Տիգրան Կամասրական.

Քառվ. — [1] Տձկ. (Թ-րլ-): — [2] Տձկ. (դ-դ-լ-լ-): — [3] Չա-  
 Թըր չաթըր ձայն հանել: — [4] Ճոճուալ: — [5] Աղեղաճագ. Տձկ. (ւ-յ-  
 Գ-լ-): — [6] Սարիկ Թուչունը, Տձկ. (Գ-ր- Բ-լ-լ-): — [7] Ճիւղ:



### ԿԻՆՆ ԿՐՕՆԱՍԷՐ

Ամեն բանէ առաջ նա պարտի լինել կրօնասէր, այլ երբէք սուտ բարեպաշտ, երեսպաշտ և կրօնամուկ: Ճշմարիտ կրօնը ձեւերու և արարողութեանց մէջ չկա-  
 յանար, այլ սրտի ուզիլ զգացմանց և արդարասէր գործերու մէջ: Սիրել ճշմարտութիւնն, գործել ար-  
 դարն, կատարել ամեն ստորտաորութիւն և յարիւ հոգևով այն բաներուն որ գեղեցիկ, ազնիւ և ընտիր են, ահա ասոնք են որ կ'կազմեն լուսաւոր հաւատքի մասունքն, զոր Քրիստոնէութիւնը կ'նուիրագործէ և գիտութիւնը կ'ընդունի:

Երբ տանտիկինը կ'հաւատայ արդարութեան, ճշմարտութեան և առաքինութեան և իր պարտուց կատարման մէջ խղճի մտօք գոհացում և անդորրութիւն կ'զգայ, էպպէս աւետարանական զուտ բարեպաշտութեան օրինակ կ'դառնայ, իր հոգին ամեն փափուկ, գորովալիր, ողորմասէր և հայրենասէր ներչնչութեանց խորան մը կ'լինի, որու անուշաբոյր խունկով և հրով կ'վառին բոլոր իր բնակից և հոգեկից սիրտերն և կ'արիանան տոկալու բազդի ամեն հարուածներուն, որոց ենթակայ են ամեն անհատ և ընտանիք: Կրօնային զգացմունքն արծարծելու համար՝ ոչ այնքան յորդոր, խրատ ու քարոզ, որքան բարեսրտութեան, արդարասիրութեան և ներողամտութեան գործեր պէտք են, և այս ձիրքով ու ոգևով զինուած տանտիկինն աւելի հեշտիւ կ'յաջողի հրահանգել ու դաստիարակել իր զաւակներն ու բոլոր տունւորներն և անոնց սրտին մէջ

տպաւորել լաւ զգացմանց դրօշմը և լաւ գործելու փնփաքն ու եռանդը:

Այն տունն՝ ո՛ւր յանդուգն կրօնական կարծիք, սկզբունք և օտարօտի հակադէմ վարդապետութիւններ կը քարոզուին, նոյնպէս նուիրական բաներու համար արհամարհոտ և հեգնական տրամադրութիւններ կ'երեւին, այդ տունը գաղտնի հակառակութեան, վէճերու և պառակտումներու թատր կը դառնայ, վասն զի տան մը մէջ կրօնական և բարոյական համոզումներու փոխադարձ յարգն կամ համաձայնութիւնն ոյժ մ'է, որուն առջեւ կը խորտակին շատ յարձակումներ և կը դարմանուին շատ դառնութիւններ ու տառապանք:

(Առևինն Տնեսուրիւն)

Մ. Մամուրեան



### ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Ո՛րքան սեաւ է ճակատագիրն, քանի՛ ցաւագին է պատրանքն, կը փչէ հովն ու կիյնայ կաղնին, կը փչէ խորչակն ու ծագիւնը կը խամրին, պայծառ է երկինք, և ահա պահ մի վերջ մուսյլ ամպերով սքօղուած է այն. այսպէս է նաեւ կեանքն, ասուպի նման կ'անհետի, երազի նման կը խուսափի: Մարդիկ կերթան գունդագունդ, իբրեւ տրտմագին պանդուխտներ,

հանդրուանէ՛ Կանգրուան , քաղաքէ քաղաք , սարեր , ձորեր , հովիտներ կանցնին , տաժանելի ուղեւորութիւն մի կընեն , կ'երթան , ու կը դատարկանան տուներ , ամայի կը դառնան փողոցներ քաղաքաց ու գիւղօրէից , լուռ են հրապարակք , լուռ են սրտեր , եռանդազին կ'աղերսեն հէգ մահկանացուք , ծունր դրած փոշոյն ու աւազին վերայ , կը պաղատին որ վայելեն կեանքն , տեսնեն գարուններ , բերկրին ու խնդան :

Ո՛չ , պէտք է գնալ յառաջ , մինչեւ որ սպառի այս ճամբան , մինչեւ որ լեցուի մահուան անդունդն : Նւսակայն , աւա՛ղ , չի լեցուիր այն խորունկ փոսն , լեցուցէ՛ք այն անդունդին մէջ երկնից աստղերն , և թող մեզ մնան հոգիք մեր սիրելեաց , ի՛նչ փոյթ թէ յայնժամ մթին գիշերներ պիտի ունենանք , սիրոյ ջահերն կը վառենք , զիրար կը տեսնենք , զիրար կը համրենք , և երբ ոչ ոք ենէ պակաս գտնենք , կուրախանանք . այո՛ , պիտի սարսափի նաւաստին չտեսնելով բեւեռային աստղն , ի՛նչ փոյթ , մօտ է նաւահանդիստն , և թող ապաստանի անդ . պիտի խայտայ ոճրագործն , մութին մէջ դուրս պատրաստելով , սակայն արդարութեան սրոյն ներքեւ պիտի դալկանայ : Բայց , ո՛հ , մտաց զառանցանք են այս խօսքեր , անողոքելի մահն կը ծաղրէ մեր տկարութիւն , և ո՛չ տխուր ճանապարհորդն կը լսէ մեր ողբերն ու աղերսանք , հանդարտ է նա այլ եւս : Անաց պատերազմի քաջամարտիկներէն էր , և երանի՛ անոր , այն քաջին որ իւր սրտին վերայ բնդունած վէրքն պատուանչան մը կը համարի , նա կիյնայ , բայց գիւցազնի մը պէս . կը փակէ աչքերն , բայց հրեշտակի մը պէս :

Ե՞րբ արդեօք երկինք մեր արցունքի ծխածաններ-

րուն մէջէն պիտի ձգէ հաշտութեան աղեղն , մինչեւ ե՞րբ պիտի աղօթենք յիշատակներու համար , պիտի մորմոքինք սիրելեաց համար , պիտի հառաչենք հոյակապ շիրմներու կամ նորագէզ հողակոյտներու առջեւ : Բա՛ւ է մահու վրէժխնդրութիւնն , թող չլինի աշխարհ յետ այսորիկ մահուան աւար , ծանր է այն հարուածն , զթութիւնն , մեր ողբոց և արտասուաց :

Դեռ երէկ յերկինս թռաւ սիրասուն մանկիկ մի , և ա՛հա այսօր սեւ բողբոն կը միացնէ զմեզ դադաղի մը շուրջն : Դեռ Հրանտ Պալեանի սեաւ հողակոյտն հարթ հաւասար չէ եղած , և ա՛հա Փառնակ Փիւսկիկեանի դառնաղէտ կորուստն նոր դժբախտութեան մը մէջ կը գահավիժէ զմեզ , մեր վիրալից սրտին վրայ նոր վէրք մը կարլւնի , կեանք մը կանչեալի մենէ , և որպիսի՛ կեանք , չքնաղ , աննման , սիրահամբոյր կեանք , ծաղիկ սիրոյ , քնքոյշ զարդ Փիւսկիւլեան տանն : Անբիծ աստղիկ , դեռ նոր կ'ողջունէր կենաց դարունն , հագիւքսանամեայ , դպրութեանց և գիտութեանց վկայականն վաղուց շահած էր , երբոր դեռ այն ինչ կը բուսանէին մօրուաց թեւեր ի ծնօտին . լուսոյ որդի մը էր , դպրոցն իրեն համար մրցութեան ասպարէզ մ'էր , և իրաւամբ բնդունած էր միշտ մրցանակն , իրեն համար կեանքն աշխատութեան պատարագ մի էր , նուիրեց կեանքն աշխատութեան և գոհութեամբ մեռաւ :

Բաւ չէր իրեն՝ Պօլոյ մէջ ստացած կրթութիւնն , արժուոյ պէս խոյացաւ Բարիզ . ո՛հ , կեանք ուսանողի , կեանք նահատակի : Այն բազմամբոյս մայրաքաղաքին շունդէն հեռու կաշխատէր գեղածաղիկն Փառնակ , կաշխատէ՛ր , զի օր մի բժշկութեան վկայականն ըստացած յաղթանակաւ դառնայ և ըսէ իւր ծնողաց , իւր

սիրելեաց . « Ահա՛ ձեր Փառնակն , որ փառք պիտի ըլլայ ձեզ , օ՛ն , հանդէսներ կազմեցէք , եկաւ ձեր սիրեցեալն : »

Նկա՛ւ , այո՛ , բայց ո՛րպէս , հէգ ուսանողն ընկճը ուած , աշխատութեան երկանաքարին տակ տժգունած էր , մարդկութեան ծառայելու ազնիւ գաղափարով դողդոջուն պիտի ընդգրկէր գրժչկութիւն , տառապեալ մարդկութեան կեանք բաշխելու միակ տենչով . այնքան կաշխատէր խցիկին մէջ , և սակայն մահն իբր թէ երկնէն գի սա չազատէր շատերու կեանքն , յափշտակեց տարաւ զնա : Այլ ոչ , դու , ո՛ր քաղցրիկ ոգի , դու պիտի ապրիս բազում ամեր դեռ եւս , քու յիշատակդ իբրեւ քնքոյշ ծաղիկ մեր աչաց ցօղերով պիտի պահենք : Դու պիտի ապրիս , ո՛ր մարտիրոս աշխատութեան . դու պիտի ճաշակեաւ երջանկութիւն երկնային . բարեկամ ձայն մ'է որ քեզ կըսէ , եղբայր մը՝ որ Պոնտոսի երկնից ներքեւ ճանչցաւ զքեզ , սիրեց զքեզ և սրտով պաշտեց առաքինութիւններդ և որ , աւա՛ղ , կը գոչէ այժմ :

Յարգա՛նք և օրհնութիւնն անմահ յիշատակիդ :

S. Մ. Միրիսանեան



### ՄԵՐ ԵԿԵՂԵՑԵԱՅ ՄԷՋ

Մեր քարոզիչք ունին շա՛տ գեղեցիկ նիւթեր . ո՛չ ճարտարախօսութիւն կ'ուզենք , ոչ բացադանչութեանց հիւսուածք , թող խօսին մեզ Յիսուսի պէս պարզ և աւերնթերակաց նիւթերու վրայ . թող քարոզեն մեզ մեր եկեղեցւոյ օրուան երգիչներու կեանքէն ու երգերէն , մեր եկեղեցւոյ կեանքէն ու սրբութենէն , իր անխառն պարզութենէն , քաշած տառապանքներէն , այն խաչանշան պատկերին պէս , որ քառսուն օր իր հաւատացելոց առջեւ ի տես կը դրուի ամեն տարի սեւ վարագուրին տակ : Ի՞նչու չերգեն մեզ իրենք , ի՞նչու ժողովուրդը չտեսնէ իր կրօնքն ամբողջապէս մարմնացեալ իր վարդապետին ու եպիսկոպոսին վրայ . ինչո՞ւ չապացուցանեն իսկապէս որ եթէ չեն ամեն մասամբ հաւասար իրենց նախորդներու , գէթ սիրող են անոնց , կ'երգեն անոնց գրածն ու արուեստիւ եղանակածն , ի բերան ուսած են մեր շարականը , մեր աւետարանը , մեր աղօթները և այլն :

Օր մը , չգիտեմ ո՛ր տարի , Մեծ Պահոց երրորդ կիրակէ խոնեալ էինք Ս. Խաչի մէջ . Հայրիկ հոն էր , իր աթոռին առջեւ կեցած , օրհնութեան շարականի մէկ տունն սկսաւ երգել առանձինն : Իրաւ , իր թրթռուն ձայնին ելեւեջներուն վրայ երեբցուց նոյն ժամուն բուր սիրտերը : Երգողին հաւատքն իր ունկնդիրներուն կ'ազդէ ճիշդ այն ճարտար քնարահարին պէս , որ իր կանտոցին՝ ամեն նուրբ ձայներովը սրտերու թելիկները կը թրթռացնէ : Եւ եթէ եկեղեցւոյ գլխաւոր տեսչու-

Թիւնն իր վրայ մարմնացնէր այսպէս եկեղեցին, իր երաժշտութիւնն ալ, այսօր մեր այն ձայներու սրբութեանց մէջ շարժելի հովերը աւերումներ չէին ըներ: Եկեղեցին իր հնութեանը մէջ պաշտելի է. շատ խորհրդաւոր է մեր սրբազան երաժշտութիւնն ալ. մեր պատմութեան չափ կարեւոր է աղջային կեանքի մէջ. Մեսրոպին, Խորենացւոյն, Սահակ Պարթեւի օրհնութիւն, ո՛րչափ գգուելի և պաշտելի են մեր հոգւոյն, նոյնչափ սրտազին և խնկելի են այն եղանակներն, որ անոնց հոգիէն ի դուրս եկած են, անոնց արցունքը, հաւատքը, սրբութիւնը հրեղէն լեզուաւ մարմնացնելով: Ահա այս պատճառաւ պէտք է անխառն պահուին և եկեղեցւոյ հոգեւոր տեսչութիւնը պէտք է փոյթ տանի մեր ՍՐԲԱՋԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ալ: Մեր այդ երաժշտութիւնն անարուեստ չէ. և ոչ, ըստ Լամարտիւնի, « ալանջի սնտոի խաղ մը, սյլ կրից դաշնաւոր հեծեծանք մը, որ ձայնով հոգիէն ի դուրս կը վազէ: Իր բոլոր հնչմունք՝ հառաչանքներ են, իր բոլոր ելեւէջք՝ արցունքներ կը գլորեն ձայնի հետ: Ոչ ոք երբէք կարող է քիչ մը ուժով զարնել մարդկեղէն սիրտն առանց արցունք հանելու, այնչափ բնութիւնն իր խորոցը մէջ լի է թաղծութեամբ. և ինչ որ կը յուզէ սիրտը՝ միւր կը հանէ մեր շրթանց վրայ, և ամպեր՝ մեր աչքերու վրայ:

Հրանդ (Մ. Կ.)

Քառ. — [1] Նուագարան, զարնելու գործիք (Մ-չէն):



### ՌԵՄԼԷԷՆ ՅԵՐՈՒՍԱՂԷՍ

† Մեկնեցանք Ռեմլէէն, ճամբան « Առաւօտ Լուսոյ » ն բաղաձայն երգելով:

Աղջամուղջ՜ է: Բայց ընդ աղօտ Տաճկական դամբաններ կը նշմարուին:

Նորէն մտանք Սարօնեան արգաւանդ դաշտը:

Կերթանք ու կերթանք:

Անցնելով կամուրջէ մը, աջ ու ձախ թողլով՝ դանազան գիւղեր, աշտարակաճեւ պահականոցներ, որոնք Սիւրէյեա փաշայի օրով շինուած են:

Տակաւին լուսոյն ժամանակ կուզէ:

Իջնանք զառ՝ ի վայր, և ահա՛ դաշտին ծայրը կը մօտենանք, ուրկէ կերեւի Աբիմելիք քահանայապետին հայրենիքը՝ Պէյդ-Նուպա:

Այս տեղ ստացաւ Դաւիթ՝ Առաջաւորաց հացը, սոյն նահատակ քահանայապետէն:

Դիտենք այն բլուրը՝ որուն վրայ կանգնուած է Լադրուն ըսուած կիսակործան գիւղը:

Երկրորդ կամուրջէ մ՝ անցնինք:

Աւանդութիւնը մեզ կը հաւատտէ թէ՛՝ Եգիպտացի Դիմաս աջակողմեան աւազակը հոս կը բնակէր:

Ասկէ կսկսին Յուդայի լեռները:

Չախակողմը՝ գիւղ մը կը տեսնուի. այս է հին Նամաուսը, որ երբեմն արիւնահեղ ճակատամարտներու թատր հանդիսացաւ:

Վեսպասիանոս վերանորոգելով այս քաղաքը, Նիկուսիս յորջորջեց:

Դեռ կը նշմարուին յանուն եօթն Մակաբայեցւոց հինաւուրց կործանեալ վանքին նշխարները, որ այժմ Ծրանչիսկեանց միաբանութեան ձեռքն է:

Տեսնելու արժանի են այն մասնաւոր ջրի աղերն, որ ճամբուն վրայ կը գտնուին. Պիր-Էյուպ կոչուած ջրհորը և կամուրջէ մ'անդին գտնուած աւերակ տուն մը՝ Տէյր-Էյուպ անուն:

Պիր-Էյուպ կը նշանակէ՝ Յորայ հորը, և Տէյր-Էյուպ՝ Յորայ վանքը:

Ահա Արշալոյսը կայտուելով արեւելքի դռները կը բանայ:

Մօտեցանք ձորադուռին, Պապ-էլ-Ուատիին:

Եւ ահա ճանապարհին կէսը կտրեցինք:

Կառապանը իւր ձիերը պիտի հանգստացնէ:

Մենք ալ օրէկին մէջ քիչ մը ննջենք:

Ժամը՝ մէկն է: Վարդակարմիր արեւուն նախածագ շառաւիղները սկսան երեւնալ:

Ա՛լ ճանապարհ ելնենք:

Մտնենք յուղայաստանի լեռներուն կիրճը:

Սրարչաւ կ'ընթանայ կառքը՝ երկու շարք լերանց մէջտեղէն:

Անտառին մէջ փայտահար Ֆէլլահը, ժանտաժուտ Արաբը օրն ի բուն կ'աշխատին. ծառերը կը յօշոտեն:

Արագ արագ կ'ընթանանք:

Հասանք Ապուղօշ, հին Կարիադարիմն ուր միջոց մը տապանակը մնաց Ամինադաբայ տան մէջ՝ գերութենէ վերադարձին:

Խոնջ ենք, սակաւ ինչ յողնութիւն առնենք այս գեղեցիկ հովտին մէջ: Հոսկէ նկատենք այն հեղեղատը՝ ուրկէ ժողվեց Գաւիթ հինգ քարերը, և որոնցմով սպաննեց Գողիաթը:

Կառքը իւր ընթացքը կը շարունակէ: Կ'անցնինք առժամանակեայ տախտակէ կամուրջին վրայէն դող-դղալով: Բուն քարէ կամուրջը փլած էր:

Օ՛ն անդր յառա՛ջ: Կառքը դառ ի վեր պիտի ելնէ: Ձիերը խոնջած, կառապանը կը հրամայէ հետիոտս քալել մինչեւ գագաթը: Կ'սկսին հետզհետէ երեւիլ Ս. Համբարձման լեռը, Խաչավանուց ձորը, և վերջապէս մեր նպատակակէտն եղած Ս. Երուսաղիմայ շինութիւններն, որոնց մէջ պարծանօք կը փայլին մեր Ս. Յակոբայ երկնակամար Կաթուղիկէն, շրջապատեալ հովասուն յաղթ մայրիներով, նոյնպէս ազգային հոյակապ Պատրիարքարանի և Ճեմարանի բարձրայօն գմբէթները:

Ա. Ե. Այվագեան

Քառ. — [1] Մու. — [2] Աննաստատ գետ՝ ձորի մէջ:

Ս. ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԱՃԱՐԸ

Երուսաղէմի ուխտատեղեաց ամենէն աւելի խորհրդաւոր սրբավայրն է Յարութեան տաճարն, ուր, ինչպէս յայտ է, Հայք, Յոյնք և Լատինք գրեթէ համահաւասար իրաւունքներ կը վայելեն: Այդ մեծակերտ եկեղեցւոյն գռնէն ներս՝ պէտք չէ փնտռել ոչ այն սպիտակ երե-

ւոյթը, ոչ այն խաղաղիկ մենութիւնը որ յատուկ են ուրիշ աղօթատեղեաց : Արեգական ճառագայթները չեն թափանցեր անոր մթին կամարներուն մէջ, յորս ուխտաւորը խարխափանօք կը յառաջանայ, ամէն մէկ քայլին երկրպագելով խաչի մը, գերեզմանի մը կամ նուիրական քարի մը առջեւ, ամէն մէկ քայլին սլատահելով այլակրօն և այլասեռ ուխտաւորաց, որք հեռաւոր երկիրներէ եկած համախմբուած են : Հոն աղօթքն ընդհանուր մրմունջով մը չբարձրանար յերկինս, միակ լեզուաւ, միակ դաւանութեամբ, այլ աղմկայոյզ երգերով, մեղեդիներով որք կը տեւեն ամբողջ օրեր, ամբողջ գիշերներ : Հայ վարդապետը, լատին բաղերան<sup>1</sup>, յոյն արշիմանտրիդը<sup>2</sup> այն տեղ եկեղեցական պաշտօնեայ և զինուոր են միանգամայն . մի և նոյն տեղւոյն վրայ իւրաքանչիւրն իր իրաւունքները կը պահպանէ, միշտ աչալուրջ, միշտ արթուն . լռիկ մրցում կայ անոնց միջեւ, ու նախանձորդներ՝ անոնց ետին . ոուս քահանայն Յունաց թեւին տակ կ'ապաստանի, Ղպտին, Ասորին ու Հապէշը՝ Հայոց : Համազգային աղօթավայր մըն է այն որուն դռները քրիստոնեայ աշխարհին սուջեւ բանալու կամ փակելու իրաւունքը հայ, լատին և յոյն կղերին միայն տրուած է : Մեր ուխտաւորք ջերմեռանդն աղօթելէ յետոյ, պանծանօք դուրս կեղնեն անտի, օրհնելով այն միաբանութիւնը որ գիտցած է դարերէ ի վեր իմաստութեամբ և արիութեամբ հսկել այդ եռամասն իրաւասութեան մէջ Հայոց արդար բաժնին պահպանման վրայ :

Ուրբաթ օրը Ամեն . Տ . Յարութիւն Սրբազան<sup>3</sup> իր պատրիարքական անդրանիկ ուխտագնացութիւնը կատարեց ի Ս . Յարութեան տաճարն՝ որոյ դռնէն հայ և

յոյն սարկաւազք՝ խնկամաններ ի ձեռին և բուրվառաւ՝ ընդունեցին զինքը : Բոլոր եպիսկոպոսք և վարդապետք կը հետեւէին Ն . Սրբազնութեան որ նախ և առաջ երկրպագեց Տապանատեղւոյն առջեւ . այդ սրբավայր կը գտնուի տաճարին դրան հանդէպ և ծածկուած է կարմրագոյն հարթ և ողորկ վէմով մը որուն երկու կողմը մեծ և փոքր երկերկու զոյգ աշտանակներ կան, երեք ազգաց, և վրան՝ ութ կանթեղներ մշտալոյս, որոց մին կը վառեն Ղպտիք : Այն տեղէն Պատրիարքը « Հրաչափաւ » ով առաջնորդուեցաւ ի գերեզման Գրիստոսի որ կը գտնուի նորաչէն մեծ գմբէթի մը ներքեւ, տաճարին կեդրոնը, բոլորաձեւ սրահակի մը մէջտեղ . դուռը դէպ ի արեւելք կը նայի, ուստից կը մտցուի առաջին խցիկը . անդ, մարմարեայ սիւնաձեւ քար մը կայ, Հրեշտակէ Վէճ անուամբ, և վրան 15 մշտավառ կանթեղներ :

Այդ մատուէն երկրորդ դռնով մը կը մտցուի բուն գերեզմանատեղին որուն մեծութիւնը թէ՛ լայնութեամբ և թէ՛ երկայնութեամբ երկու կանգունի չափ է . շրջապատի մարմարներուն տակ դեռ կը տեսնուին բնական ժայռ քարերը զորս Դչխոյն Հեղինէ տաշել ու կոկել տուած էր (\*). Գրիստոսի քնարանի տեղը հիւսիսոյ կողմն է, ժայռին մէջ որուն կողերը և վրայի կողմն սպիտակ մարմարներով ծածկուած են : Այդ մատրան մէջ ծնրադիր աղօթեց Պատրիարքն և անդ մնաց մինչեւ որ բոլոր միաբանք զոյգ

(\*) Տես « Պատմութիւն կամ Ուղեցոյց Ս . Տեղեաց » տպագրեալ յերուսաղէմ :

զոյդ ներս մտնելով Տապանաքարն համբուրեցին : Յետոյ , թափորով գերեզմանին արտաքին չըջափակը բուրբելէ յետոյ , ելաւ Երկրորդ Գողգոթա կոչուած վերնատունն որ Հայոց սեփհական եկեղեցի մըն է , և անդ կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը : Այս միջոցին Յոյնք եւս սկսած էին իրենց ժամերգութիւնը , մինչ Նատինք թափորի կելնէին ըստ սովորութեան : Երեք ազգաց շարականներն ու աղօթքներն իրար խառնուելով , ահաւոր երգեցողութիւն մը յառաջ կը բերէին որում եւս առաւել պատկառելի շահեկանութիւն մը ընծայեց Ֆրանսացի հարիւրաւոր ուխտաւորաց մուտքն ի Ս . Յարութիւն : Ատոնք կը բաղկանային կրօնաւորներէ , մայրապետներէ , երկսեռ աշխարհականներէ , ծեր ու երիտասարդ , Ֆրանսայի զանազան կողմերէն եկած , բարեպաշտական ընկերութեանց ծախիւք , տաճարին դռնէն ներս բարձրեալ բերելով կաղնեփայտէ երկու հսկայ խաչեր զորս յիսունական հոգի դժուարաւ կը կրէին իրենց ուսոց վրայ . սյսպէս , երգելով , աղօթելով , մէն մի քայլի կանգ առնելով շնչասպառ :

Ֆրանսացի հաւատացեալք հասան Գերեզմանի մատրան առջեւ ուր վար դրին իրենց նուիրական բեռն և ծնրադրեցին ճիշդ այն տեղ ուր վայրկեան մը առաջ ծնրադրած էինք մենք և ուր սլահ մը յետոյ պիտի ծնրադրէին Յոյները . յայնժամ վարդապետ մը սկսաւ քարոզել Ֆրանսերէն լեզուաւ , բացատրելով այդ սըրբավայրին նշանակութիւնն . իւր ձայնն մերթ ընդ մերթ անլսելի կը դառնար վերնատունէն հասնող « Տէր ողորմեա » ին և Յունաց տաճարէն լսուող « քիրիէլէիսո՛ւն » ին ձայներէն և երբեմն ալ Հայոց և Յունաց աղօթք-

ները կը խեղդուէին Ֆրանսացի ուխտաւորաց հարիւրաւոր չըթներէն միաձայն ելնող երգեցողութեանց մէջ : Այս ընդհանուր աղօթից գոռումը՝ տիեզերական շշուճի մը նման կը վերցունէր , կը բարձրացունէր զմարդ , դարերու հետքերով սեւցած այդ վիթխարի կամարներէն ալ վեր , ի բաց կը վանէր անձնական հաւատքը , կը մոռցունէր իւրաքանչիւրի պաշտեցումն , և քրիստոնէական վեհ կրօնին խորին տպաւորութեան ներքեւ կ'ընկճէր զամենքը . յետոյ , յանկարծ լուեցին բոլոր ձայները , ժամերգութիւնք վերջացան , ուխտաւորք հեռացան խումբ խումբ , և մենք վերադարձանք Ս . Յակոբայ վանքը :

Տիգրան Արփիարեան

Քառք . — [1] կղերական , — [2] վարդապետ (Յունարեկ) : — Պատրիարք Ս . Երուսաղէմի :



ՇՆՈՐՀԱԼԻՈՅՆ ԳԵՐԵՉՄԱՆԸ

Տիգրանակերտէն ի Չերմուկ և ի Չընքուչ վերադարձած էի , ուստի Խարբերդու վրայօք պիտի անցնէի գայի : Չընքուչէն ինն ժամ եկած էինք , կարաւանը իւր օթեւանն ըրաւ Քէյտան գեղը . ես անցայ , և ուղիղ արահետէն խոտորելով բարակ ուղիով մը շատ բարձր

լեռ մը ելանք , կուգէի անպատճառ նոյն գիշերը՝ Հայոց  
 Ծովք գեղ կամ ըստ Թրքաց՝ Աէօլճիւկ՝ իջեալնիւ : Բոց  
 ու կրակ եղած էր փափաքը սրտիս մէջ , կը տոչորէր  
 հոգիս և մարմինս , այնպէս կզգայի , եթէ նոյն օրը  
 չհասնիմ , չտեսնեմ , չհամբուրեմ այդ ջուրն ու հողը ,  
 կարօտակէզ աչքս բաց մնալով : Արդէն հնար չէր ձի  
 նստիլ , կը քալեմ , կը վազեմ , կը թռիմ , և ահա պաղ  
 հով մը , քայլ մի եւս , և ահա Ծովքն իւր ցանկալի  
 երեսը ցցուց . կարկամեցայ : Ո՞վ կարող է նկարագրել  
 այն բուռն և խոր յուզմունքն որ տիրեց իմ հոգեկան  
 և մարմնական բովանդակ մասանց վրայ : Ո՞վ իմ պաշ-  
 տելի Շնորհալուոյս տուած և առած , օրհնուած և օրհ-  
 նած , աղօթած և երգած տեղի , տեսարան ու հանգի-  
 սարան : Այժմ կզգամ թէ մարդ ո՞ր աստիճան յափըշ-  
 տակութեան մէջ կը գտնուի , երբ իւր ամենէն աւելի  
 սիրածին հանդիպի : Քարերու գլուխը քարացած մնա-  
 ցեր եմ , ապա գետինը թաւալեցայ երեսացս վրայ :  
 Կը փարիմ<sup>1</sup> , կը գրկեմ , կը պագնեմ , կ'սթափիմ , և այլ  
 աչերս չվերցուցի երկինք : Երկինքէն բարձր փառք մը  
 գտած էի : Աչքս ի ծովն , միշտ ի ծովն , շեշտ<sup>2</sup> ի ծովն :

Ծո՞վ , դու է՞ր չես ծիծաղիր :

Բաներ կորսնեմ իւր մէջ՝ շցուցներ , հարցումներ  
 կընեմ իրեն՝ չպատասխաներ : Իւր ափանց ալիքներ՝ որ  
 կը ծփծփան առանց հողմակոծութեան և առանց փո-  
 թորկի , նշան է թէ փոթորիկը զանի այնքան վեր ու  
 վայր յուզած է , որոյ կուրծքը ուռչած է և ծոցոյն  
 խորերը կնծով<sup>3</sup> լի , նման թշուառ դշխոյի մը , որոյ  
 գլուխն և դէմքը փայլուն երեւի ագամանդներով , ոս-  
 կեհնու ճեղենակներով<sup>4</sup> , բազմեալ բարձրաշուք փղոս-  
 կրէ գահոյից վրայ , արտաքուստ երեւոյթ երանելի և

նախանձելի , բայց շարունակ արտասուեն իւր աչերը ,  
 ցաւն ու կսկիծը կրծէ ներսէն անոր սիրտն , լայ ու  
 հեծեծէ , քանզի կորուսած է նա իւր երկու աչաց  
 լոյս , փառք եկեղեցւոյ : Ծովիկն աչքի ձեւ ունի , կոյսի  
 մը աչքին պիտի ըսէի , բայց ա՛լ ճիշդ մանկամարդ  
 այրւոյ մը կը նմանէր , խորհրդաւոր գեղեցկութեամբ  
 և շնորհքով զեղուն ականոցի<sup>5</sup> մը , զոր արտասուքն  
 աւելի հրապուրիչ կը գործեն լերանց շրջանակի մը մէջ  
 ամիսփուած , և ինչպէս սեւ ոսպ մը , աչքին բիբը՝  
 այնպէս կը մնայ և կերեւնայ սեւ ու քայքուած շէնք  
 մը ծովուն մէջ , կզգեակ-դգեակին վրայ Ս . Նշանի տա-  
 ճարին աւերակն : Ո՞ աւերակ , որ քան զերկինս բարձր  
 ես և մեծալայելուչ իմ սրտիս վրայ : Գիշերը անքուն  
 անցուցինք , արշալուսին նաւ նստեցանք կզգին երթա-  
 լու , աւա՛ղ աչերուս , սեւ ու սպիտակ քարեր ցիր ու  
 ցան խարխալեալ օրմունք եւեթ կան :

**Գ . Վ . Սրուանձեանց**

Քառք . — [1] Փաթթուիլ , պլուուիլ . — [2] Շիփշիտակ : —  
 [3] Հողի կոշտ կտոր , կամ խոտովը : — [4] Գլխի կամ զգեստի զարդ : —  
 [5] Աչք :

### ՓՈՔՐԻԿ ԱՌՈՒՆ

Փոքրիկ առուն կ'ոռոգէ ծաղկաւէտ դաշտ մի: Կը խաղայ յառաջ կոյս երփն երփն<sup>1</sup> մարգագետիններու մէջ մանուածապատ<sup>2</sup> շրջանօք, սողոսկելով մեղմով ծաղկանց միջոցներէն և հաղիւ հեռանալով այն հեշտալի տեղերէն: Այն ինչ<sup>3</sup> կը թողու դաշտը, կը թափէ իւր ջուրերն ահագին ապառաժներէ վար: Փոխանակ քաղցր զեփիւռին որ կը խաղար երբեմն անոր խաղաղ ալեաց վրայ, խստաշունչն հիւսիսի<sup>4</sup>, փախուցեալ իւր խոր անձաւներէն, կը խռովէ վէտ վէտ<sup>5</sup> անոր բիւրեղեայ<sup>6</sup> երեսը: Յառաջ տանելով առուն իւր գնացն արագութեամբ՝ կը սահի մեծ քաղաքի մը դուռը, կը հոսի անոր հոյակապ շինուածներուն առջեւ, յետոյ կելլէ դուրս, և կը կորսուի դարձեալ ծաղկաւէտ արօտներու մէջ: Ի ճանապարհին կը հանդիպի խաղաղ գիւղերու, և կ'ոռոգէ հարուստ այգիներ: Յետ սակաւու կը գտնէ զինքն լքեալ ահեղ ամայութեան մէջ, կանաչագեղ պուրակ<sup>7</sup> մը կելլէ անոր առջեւ, առուն կը մտնէ անոր հիանալի հովանւոյն տակ, բայց կը թողու զայն վաղվաղակի՝ երթալ ոռոգել աւազուտ դաշտ մը, մինչեւ կը կլանէ զնա Ովկիանոսը, և կուտայ վախճան անոր անհարթ ընթացից: Այս է պատկերը որով իմաստուն մը կ'ընծայեցուցանէ մեզ մեր կենաց ընթացքը զոր կը կատարէ մարդ աշխարհի վրայ, երթալով՝ մերթ զուարճալի և ծաղկազարդ շաւիղներով<sup>8</sup>, և

մերթ դժուարին և գրեթէ անկոխ ճանապարհօք, մինչեւ կը հասնի ի դրունս յանիտենականութեան ուր կը գտնէ հուսկ ուրեմն հանգիստ:

Թարգմ.

Ա. Մ. Գարագաւեան

Քառ. — [1] Գոյնզոյն: — [2] Ոլրած: — [3] Դեռ նոր: — [4] Հիւսիսային հով: — [5] Պնայնացող (տալի- տալի): — [6] (Պեւքէ) պէս: — [7] Անտառ: — [8] Ճամբայ:



### ԾՈՎԻԿ

Ծովիկն աչքի ձեւ ունի, կոյսի մը աչքին պիտի ըսէի, բայց ա՛լ ճիշդ մանկամարդ այրւոյ մը կը նմանէր, խորհրդաւոր գեղեցկութեամբ և շնորհքով զեղուն աւանդոլի մը, զոր արտասուքն աւելի հրապուրիչ կը գործեն լերանց շրջանակի մը մէջ ամբոփուած, և ինչպէս սեւ ոսպ մը, աչքին բիրբը՝ այնպէս կը մնայ և կերեւնայ սեւ ու քայքայուած շէնք մը ծովուն մէջ, կղզեակ-դղեակին վրայ Ս. Նշանի տաճարին աւերակն: Ո՛ր աւերակ, որքան զերկինս բարձր ես և մեծավայե-

լուչ իմ սրտիս վրայ: Գիշերը անքուն անցուցինք, արշալուսին նաև նստեցանք կղզին երթալու, աւա՛ղ աչերուս, սեւ ու սպիտակ քարեր ցիր ու ցան, խարխալեալ<sup>1</sup> որմունք եւեթ կան:

Համբո՛յր քարերուն, համբո՛յր հողերուն, համբո՛յր փլատակաց վրայ բուսած խոտերուն: Լուսատիպ<sup>2</sup> մը պէտք էր ձիւղ այս պահուս, սոյն Աստուածաբնակ աւերակին և Աստուածարեալ Ծովիկին տխուր և վսեմ տեսիլն տպէր, պատկեր՝ զոր աւելի կը կենդանացնէր արեւուն ծագման քնքոյշ ճառագայթն և լերանց ու ծառոց ստուերները կը կախէր երկնափայլ ծովուս բիւրեղեայ ծոցոյն մէջ. այս պահուս՝ երբ ձկունք երամուզին կը կայտաւէին, երբ թռչունք թիւ թիւ կը թռուչէին: Բայց ինչո՞ւ ամենքն ալ անձայն էին: Վա՛հ, երբ լսեր էր Ներսէսին քնարը «Զարթիք փառք իմ» երգելէն, զոր կը նուագէր զուարթն հոգւով «ընդ զուարթունս նոր երգս առեալ նուագողին» և կը կրկնէին այս թեւաւոր ալախօսիկ տիրացուք «Ալէ-ուիա՛», այն օրէն ալ լռած էին թռչնոցս դայլայլիկք:

Ո՞վ կրնայ բաժնուել ձեզմէ, ափ ու աւեր Ս. Նշա-նայ: Ո՞վ կրնայ թողուլ զձեզ, քարինք և ալիք Ծովի-դղեկիս: Արդեօք որքա՞ն պիտի ապրինք դուք և ես, տա՛յր ինձ երկինք այն երջանիկ առիթն կրկնելու ան-յագ համբոյրս և անհատ արցունքս ի ձեզ:

Լերինք և եթերք Ծովիկիս, ձեզ, որ զուարթ խայ-տանօք ազդած և շարժած էք երկնային Աշուղին<sup>3</sup> զգացմանց քնարին հոգեղէն թեւերը:

Աստեղք և Արեգ, ձեզ, որ պայծառ և չքեղ ճա-ռագայթներով ոգեւորած էք պայծառ հոգին հոգե-նուագին «Առաւօտ լուսոյ արեգակն արդար, առ իս լոյս ծագեա » գեղգեղողին:

Գ. Եպիս. Սրուանձեանց

Քառբ. — [1] Փլած: — [2] Լուսանկար: — [3] Բանաստեղծ արեւելցի:



ՎԵՐՁԱԼՈՅՍ

Դուրս նայեցայ պատուհանէն: Նոքա միայն, որք բնակած են Հաագիւղի մէջ կրնան ըմբռնել ինչ որ պարզուեցաւ<sup>1</sup> յայնժամ աչացս առջեւ: Ամեն տեղէ միեւնոյն կերպով չը տեսնուիր վերջալոյսը. զանազան կէտերէ դիտուելով, զանազան երեւոյթներ կըստանայ. բնութիւնը միութեան մէջ իսկ անհուն փոփոխու-թիւններ ունի և անեզր ձեւաչափութիւններ: Եւ այս է որ այնքան տարբեր և այնքան ճոխ ներշնչումներ կազդէ Պիւֆօններու (\*), Շաղոպրիաններու (\*\*):

(\*) Պիւֆօն, երեւելի բնագէտ Գաղիացի:  
(\*\*) Շաղոպրիան, Գաղիացի նշանաւոր մատենագիր:

Արեւը Էյուսպի բլուրներուն վրայ խոնարհած էր ,  
 մօտ Բամիզ-Չիֆթլիկին : Իւր շլացուցիչ ճաճանչները  
 ամիոփեւրով իւր շուրջը , իրր արծիւ որ թեւերը կը  
 ծրարէ երբ պատրաստուի հանգչիլ , բլուրին ետեւ  
 կիջնէր տակաւ առ տակաւ : Լոյսի գունազոյն երակ-  
 ներ այդ լեռնակներուն վրայ կերկարէին ծայրէ ծայր ,  
 բաց ներկերէ մութերու անցնելով , առաջին խաւերը  
 մեղմ , վերջինները խիստ երանգներով<sup>2</sup> : Երկնի կա-  
 սոյտ յատակին վրայ , կաթնաթոյր<sup>3</sup> ամպերու և այն  
 բարձրութիւններուն մէջ շրջանակուած որք դեռ կա-  
 նաչ էին , այդ վսեմ պատկերը զոր մի Աստուած կը  
 նկարէր վարդ լոյսերով և այն փափուկ գոյներովն ո-  
 րովք անմուղ կոյսը կը շիկնի<sup>4</sup> , մի դիւթութիւն<sup>5</sup> էր  
 աչքի համար և հոգւոյ համար :

Հեռուն , տխուր նոճիներու երկար շարերու մէջ ,  
 ուր ամբողջ սերունդներ կը ննջեն և ուր մի խորհրդ-  
 դաւոր մթութիւն կը տիրէր միշտ , տկար ճառագայթ-  
 ներ սարդած կը նուաղէին , մութն աւելի յանկուցիչ<sup>6</sup>  
 քան լոյսն իսկ :

Ոսկեղջիւրի ալեակները կարմրած էին թեթեւ և մի  
 ծիրանի շղարչի<sup>7</sup> տակ կը խաղային ծաւալուն . երկու  
 նաւակ ջուրի վրայէ կը թռչէին : Հոս հոն , մզկիթնե-  
 րու գորշախայտ գմբէթներուն և ճերմակ ֆլաթներուն ,  
 տուներու ասպակիներու վրայ , հեռաւոր լոյսեր կը նը-  
 շուլէին<sup>8</sup> :

Լուսթիւնը կըսկսէր ծանրանալ աշխարհի վրայ ,  
 ստուերները կ'աճէին , և հեռուն , մինչ յետին ճա-  
 ճանչը կը սրբուէր հորիզոնին վրայ և ծովային բաղը  
 իւր վերջին թռիչք կառնուր , Բեդլի<sup>9</sup> լուրջ ձայնը

կսկսէ աղօթքի հրաւիրել բարեպաշտ Մահմէտական-  
 ները : Անկարելի էր չյուզուիլ այս մեծվայելուչ հան-  
 դիսին առջեւ :

\*\*\*

Քառք . — [1] Բացուիլ : — [2] Գոյն : — [3] Կաթի պէս սպի-  
 տակ : — [4] Կարմրիլ (ամօթէն) : — [5] Հմայք : — [6] Հրապուրիչ : —  
 [7] Քօղ : — [8] Փայլիլ : — [9] Աղօթքի հրաւիրող :

## Չ Մ Ե Ռ Ն

Տարւոյն վերջի օրերն է , եզանակն տխուր , ժա-  
 մանակն խաւարին . թողմեալ թմրեալ բնութեան  
 վրայ տարածուած համասփիւռ ճերմակէն՝ լոյս չի ծա-  
 գեր , մխիթարութիւն չեղներ . ձմեռն՝ միշտ ցուրտ ,  
 սառն՝ միշտ սոսկումն կաղդէ . իսկ այն այսահար սօ-  
 սափիւնն<sup>1</sup> , այն մոլեգին<sup>2</sup> մրրիկն զոր կու լսես կէս գի-  
 շերուն՝ ճարճատեալ ծառոց կարկամ գրկերէն , և քա-  
 րանճաւաց փքալից բերաններէն , մարդուս՝ ինչուան  
 ոսկորները կը սարսուեցնէ : Այսպիսի ատեն տաքուկ

անկողին մը , վառած թոնրի մը անկիւն արծարծուն  
կրակարանի մը եղերք , ի՛նչ քաղցր են ոչ միայն ծու-  
լից՝ այլ օրն ի բուն աշխատող բանւորի մը , համեստ  
բարեկամաց , կամ մենասէր խմաստասիրաց :

Երանի՛ անոնց , որ թէև աղքատիկ , թէև ցօղու-  
նապատ խրճիթի մը մէջ , կամ կիսաթաղ հողէ տանեաց  
տակ դեռ խոր խորշիկ մը , բուխերիկ<sup>5</sup> մ' ունին , որոյ  
մէջ քանի մը տաշերով տաքութիւն և լոյս կու սահեն ,  
և անով իրենց նմանեաց երեսը կու տեսնեն . ծխանին  
ծակէն արձրկած ծուխն՝ նաև գիշերուան և քնոյ խո-  
րութեան մէջ , կիմացընէ հազիւ հանդիպող կամ մո-  
լորած անցորդի մը՝ թէ այն մեղեատիպ հողի , քարի ,  
խառւի և ձեան տակ այլ՝ կենդանութեան կէտ մը ,  
ընտանութեան բոյն մը կայ :

Ո՛հ , ի՛նչ դժնդակ է այն տեղն , ուր ծխան չի ծը-  
խեր . ի՛նչ խղճալի անձ , որ այսպիսի եղանակի և ժա-  
մանակի մէջ՝ բնութեան ամենայն սաստից և արհաւ-  
րաց մէջ , սառի և սարսուռի մէջ պատած պաշարուած  
բռնուած ըլլայ , ուր ոչ միայն այդ չարիքն՝ այլ և չա-  
րիքներէն ազատելուն ճար ու յոյս ալ չըլլան . և մա-  
ոնաւանդ եթէ մէկն բռնի և անպարտ դատապարտ-  
ւած ըլլայ այդպիսի , և քան զայդ աւելի զրկմանց ,  
կրից և ցաւոց :

Հայկա՛կ , հոս անտարբեր կալ մնալ չըլլար , այս  
յիշատակիս՝ ցուրտն և սարսուռն ամեն ճաթեցնելով  
ներս կու մտնեն , կրակդ կանցնի , ծուխդ կու ցնդի ,  
սիրտդ կու սոսկայ : Ե՛լ , ե՛լ խրճիթիդ , մոռցի՛ր ձմեռ  
խաւար , հայրենական հողւոյ հրեղէն վերարկուն ձգէ

վրադ , թող կրակիկդ , և հասարակ գիշերուան խօլա-  
շունչ մըրկին մէջ՝ անկէ սուր ե՛լ թռիր :

Հ. Ղ. Ալիբաև

Քառֆ. — [1] Տերեւի ձայն : — [2] Խիստ մոլի : — [3] Վառա-  
բան (ռաւկորեկն) :

ՀԱՅ ՎԱՐԺԱՊԵՏՆ

Հայը ուր որ լինի , հոն մեծ կամ պզտիկ նախնա-  
կան դպրոցներ հաստատելու կը նկրտի : Սակայն եթէ  
դպրոցի մը ձեղունէն լուսոյ մանանայ կրնայ անձրեւել  
մանկութեան մտքին և սրտին յագուրդ տալու համար՝  
հարկ է որ այդ փրկարար սնունդը անձրեւել տուող  
մը գտնուի :

— Ո՞վ է այդ էակը :

— Վարժապետը :

Վարժապետ մի , բայց Հայը միթէ գիտէ՞ այդ բա-  
ռին զօրութիւնը և նշանակութիւնը . միթէ մեր մէջ  
կա՞ն այնպիսի շուրթեր որք նուիրական սարսուռով մը  
կարենան արտաբերել այդ լուսոյ դայեկին անունը .  
միթէ ունի՞նք այնպիսի ականջներ որք կարենան լսել  
այդ մոգական<sup>1</sup> բառին տիեզերական անբաւ դրդիւնը ,  
որ կը հնչէ լուսաւոր աշխարհներու հորիզոնէն դէպ ի

մթին ազգերու ընկերային անդունդներու յատակը : Միթէ ունի՞նք այնպիսի սիրտեր որք կարենան զգալ և բաղխել յանուն և ի շնորհս այն էակին որու սլաշտօնն է կրթել . միթէ կա՞ն այնպիսի սուրակն<sup>2</sup> գէտեր , որք կարենան տեսնել թէ անիկա է մանկութեան կաղապարը<sup>5</sup> , մարդկութեան առաջնորդը :

Այո՛ , կը պատասխանենք այս հարցումներուն , եթէ ներելի է հաւատալ խօսքերու :

Ո՛չ , կը պատասխանենք . եթէ ներելի է միայն գործքով համոզուիլ :

Վարժապետ , դաստիարակ , ուսուցիչ , խմբագիր , հեղինակ , առեւտրական , տպագիր , ասոնք օտար ազգերու մէջ ընկերային սանդուղին բարձրագոյն աստիճանները գրաւած են , ուրիշ երկիրներու մէջ ազնուապետութիւններու ազնուագոյնը կը ներկայեն : Իսկ Հայոցս մէջ ասոնք ընկերական ստորին կացութիւն մը սենին : Այս ստորին և աննպաստ կացութիւնը չարիք մ'է ազգին , վասն զի իւր հետեւութիւնն է վարժապետներու նուազումը , դպրոցներու քանդումը , և տգիտութեան մնայունութիւնը :

Գեռ շատ հեռի չեն այն օրերը , ուր վարժապետները Պօլսոյ ամիրաներու առջեւ ոտքի վրայ կը կայնէին : Անցեալը եթէ խառնենք , կրնանք մի առ մի յիշել այնպիսի անուններ որոնք կամ յետին չքաւորութեան մէջ մեռած են և կամ հիւանդանոցներու մէջ վերջացուցած են իրենց թշուառ օրերը : Այս օրուան օրս ի՞նչ յարգ և համարում ունի այդ պաշտօնը : Ահա քեզի Հայ Կրօնոս մը՝ որու այցելութիւն կ'ընէ վարժապետ մը : Ասիկայ խնդիր մը առաջարկելու կամ այցելութիւն մ'ընելու համար զարգարուն սրահէ մը

ներս կը մտնէ վեհերոտութեամբ<sup>4</sup> և աչքերը խոնարհելով : Սրահը լի է բազմութեամբ . պերճութեամբ և պաճուճանօք<sup>5</sup> փայլող կիներու և օրիորդներու խումբ մը թիկնաթուռները և բազմոյցները բռնած են : Խեղճը յարգական բարեւ մը կուտայ ամենուն , և առանց հրաւէրի սպասելու աթոռ մը կառնու և կերթայ գրեթէ սրահին դրան քով կամ մօտերը կը նստի : Եթէ սլարդ այցելութիւն մ'է անոր գալուստը , հազիւ հազ իւր որպիսութիւնը կը հարցուի՝ ոչ թէ հիւրերու կողմէն որոնց համար մէկ նայուածքի անգամ արժանի չէ խեղճը , այլ տան տիրոջ կամ տիկնոջ կողմէն : անկէ ետք ընկերութեան մէջ կը մուցուի թշուառը : Կամ եթէ դործի մը համար է իւր այցելութիւնը , կէս ունկընդրութեամբ կը լսուին իւր խօսքերը , սրոնց միավանկ կամ երկավանկ պատասխաններ կը տրուին , անստոյգ խոստումներ կ'ըլլան , և անկէ ետք ալ հարկ կըլլայ վարժապետին միեւնոյն վեհերոտութեամբ հեռանալ սրահէն , վասնզի ինք այն փառաւոր ընկերութեան յարմար մարդ<sup>6</sup> չէ՝ վարժապետ և գուցէ անարժանի ըլլալուն պատճառաւ :

Գ. Զիլիկիւրեան

Քառ. — [1] Կոխարդական : — [2] Սուր աչք ունեցող : — [3] Օրինակ (բռն) : — [4] Վախով : — [5] Աւելորդ զարդ , զարդարանք : — [6] Մարդ :



### ԱՂՔԱՏԻՆ ԸՆՏԱՆԻՔՆ

✦ Ահա աղքատին ընտանիքն: Մի ձեղնայարկի մէջ կը բնակի. ձմեռ է, իւր գլխոյն վրայ մի ձիւնեղէն տանիք կայ և բուքն հազար և մի ծակ ու ծուկ ունի ուստի ելամուտ կ'ընէ ազատ և անպատկառ: Ածուխ չկայ, հաց չկայ, հայրն մի գործաւոր էր աշխատասէր-բայց խիստ է ժամանակն, կը սրկասի գործն: Մազերն օձախօսիւ դիզուած, կեցած է, քարացեալ, և մուր-եալ աչերն սեւեռած կնոջն և զաւակաց վերայ, որք «հաց» կ'աղաղակեն, դարկատիւլ և մաշած, քաղցէն կրծուած ոսկորներ, որոց բերանաբաց կ'սպասէ Մահն, կատաղի և անյագ:

Չաւակաց կրտսերն մի մանկիկ է ստեղծաց<sup>1</sup> մի աղա-զուն<sup>2</sup> տերեւիկ. կու լայ, կը ճչէ, ի զուր սեղմելով իւր մօր ցամքած ծծերն որ կը զլանան իւրեան կենսատու հեղուկն: Կ'անիծէ հայրն իւր բողբոկներն որ սյլ եւս չեն կարող սպրեցնել իրեններն, չգիտեմ ի'նչ կ'զգայ, ի'նչ կը խորհի, մի տարտամ խաւարի մէջ ծփալ կ'ըզ-գայ զանձնն, և այդ խաւարն լի է ուրուականներով որ քստմնելի բաներ կը շնչեն իւր ականջին: Յանկարծ մարած աչերն կը կայծկլտին մի դիւային խնդութեամբ, դուրս կ'ելնէ խցիկէն խեղցեղ. մի քանի վայրկեան յետոյ, երբ գիշերոյն ստուերք սփռուած են Ովկիանին վերայ, մի ճողվիւն<sup>3</sup> կը լսուի ալեաց, ջուրց վերայ մի մարդկային կերպարան կ'երեւի և կը ոռզի<sup>4</sup> երիցս և հուսկ ուրեմն անհետ կը լինի բնաւին, և ջուրն իւր


նախկին հանդարտութիւնն կ'առնու վերստին, թշուառ հայրն սյլ եւս իւր նօթի զաւակաց աղիքներուն դա-լարիւն<sup>5</sup> չզգայ յինքեան, հանգչեցա՛ւ առ յաւէտ:

Եւ կամ, կը դառնայ յիւր տուն և ոճրով գնուած մի հաց կը բերէ իւր որդւոց, բայց ահա ետեւէն կ'եր-կննայ մարդկային անողոք արդարութեան երկաթի ձեռնն, կը խլէ հացն իւր բերնէն, կը բռնէ օձիքէն և կը քարչէ. սեւ պղնձեայ դռներ կը բացուին և կը գոց-ուին իւր վերայ, ծովուն տակ կամ ընկերութեան թխարանի մէջ կամ անդնդոյն, նոյն բան:

«Մնա՛ս բարեաւ, արեւ, մնա՛ք բարեաւ, աստ-ղեր» ինչպէս կ'երգէր Գուրեան: Մի հոգի կը նաւա-բեկի, մի հոգի կ'ընկուզանի<sup>6</sup>, և նորա հետ մի ըն-տանիք: Թուչունք իւրեանց բոյնն դրել էին ոստոց վե-րայ, տապարն սղոցեց զծառն ի բնոյն, կը թռչին թռ-չունք, կ'երթան ի չորս հողմունս, յանձանօթն, ի մութն. և աւա՛ղ, ինչ թակարդներ կան, ի'նչ աստ-ղեր: Եւ մայրն մանկամարդ կ'երթայ ի գերեզման կամ յամօթ, զի քանի՛ք կերթան ամօթոյ տղմին մէջէն ժողվել հացն զոր կը զլանայ իւրեանց Աշխատութիւն կամ Գութ: ✦

#### Ռ. ՊԵՐԱԿԵՐԱՆ

Քառ. — [1] Ծիծ ուտող: — [2] Չորցած: — [3] Ձրի մէջ ինկած բանի մը ձայնը: — [4] Ընկղմիլ: — [5] Ոլորիլ (դէ-դէ-լէ): — [6] Կուլ տալ, ընկղմել:



### ՀԻՒԿՕՅԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Իր վերջին տարեգարձի օրը գուժեր էր Վ. Հիւկօ թէ ա՛լ բան պիտի չը գրէ և թէ այնպէս կզգայ թէ այս տարի իր կենաց վերջին տարին է : Այս խօսքերը տրտմութեամբ լեցուցին այն անհամար անձանց սիրտերն որ իրաւամբ կը հիանան մեծ բանաստեղծին հանձարին վրայ զի միշտ այդպիսի տխուր նախազգացմունք, մանաւանդ երբ բնութեան ընթացքին ալ կը համեմատին, կ'ահաբեկեն զմարդ : Այլ բանաստեղծք մասնաւոր հակամիտութիւն ունին միշտ մտալուտ տեսնելու իրենց վախճանը և իրենց կենաց ընթացքին մէջ քանի մը անգամ կը մեռնին ու նորէն յարութիւն կ'առնեն : Եւ ո՞ գիտէ երբ կը հնչէ առաջին անգամ մահը զգայուն մարդու սրտին մէջ :

Վ. Հիւկօյին համար շատոնց հնչած էր այն, երբ կորայս իր կենաց ընկերն որ իր լաւ օրերուն հազորդ եղած էր և որ ապա իրեն հետ երկար տարիներ աքսորանաց հացն էր կերեր որ թէպէտ միշտ թշուառութեան չոր հացը չէ, այլ դու գիտես, Տանթէ (\*) թէ քանի՛ դառն է անի. այն ժրագլուխ կինը որ և Մայր Կրօնի իր զաւակացն էր ջամբած Խորիսի<sup>1</sup> Բեդէ կերպրելով Իսի լեղէս, որոյ սիրովը ներշնչեալ գրեր էր Հիւկօ իր հոգեւրից բանաստեղծութիւններն որք իր

(\*) Հոչակաւոր բանաստեղծ խտրացի, հեղինակ Երկնային Կասակերգութեան մատենին :

գեղեցկագոյն բանաստեղծութիւններն են : Ու մէյ մ'ալ վերջին անգամ կարծէիր թէ հնչեց մահը իր սրտին մէջ, երբ մին միւսին զինի խլեցան ձեռքէն իր որդիքն որոնց մին արի քաղաքացի և միւսն ալ ներհուն<sup>2</sup> մատենագիր, ու երբ տեսաւ տունն որ պարա՛պ էր մնացեր . . . . : Եւ ահա՛ այսպէս իր ամայութեանն ու վշտացը մէջ ձայնէր ու ոգէր<sup>3</sup> սիրաձայն ոգին,

Անոքիկ եմ ես այրի  
Եւ իմ օրս է տարածամեալ .  
Ի գերեզման գըլի<sup>4</sup> հակի  
Հոգիս թառալ

Այլ նա պիտի սպրի եղեր դեռ եւս բաւական երկար ժամանակ որ հանդիսատես ըլլար իր սեպհական փառքին որուն խնայեց սակայն նախանձը, այս միանգամ եւեթ դրժելով իր պայմանին և սուտ հանելով բանաստեղծին ալ խօսքը որ ըսեր էր « փլանի փառքն հաղ ընդ հաղ<sup>5</sup> — նախանձն այդ արձանին խընայէ ոչ, այլ թէ բազմեալ տեսնէ զայն ի վերայ գերեզմանին սեմոց » : Ու հինգ հարիւր հազար հոգի անցեալ տարի իր պատուհաններուն առջեւ, իր ութսուներորդ տարեդարձը տօնեցին, այնպիսի հանգէս մը կատարելով յանուն ազգին որուն նմանը չէր տեսնուած : Եւ այդ հինգ հարիւր հազար Գաղիացեոց մէջ երկու Հայ ալ կային որ հեռուէն հանդիսատես և սրտով մասնակից եղան սխրալի հանգէսին ու իրրեւ թէ իրենցն ու իրենց ազգինն ըլլար կը գուրգուրային ու կը հիանային տեսնելով և դիտելով երկու խարտեաչ գլուխներու, Երուանդանման թողնեկացը ժանին ու ժօրժին մէջ դուրս ցցուած մեծ ու լուսափայլ գլուխը բանաստեղծին :

Հանդէսը կարծես թէ այն երկու մանկանց համար էր. բազմութեան մէջ ամենքը կըսէին « ահա՛ ժանն ու ժորժ » . մանկութիւնը այնպիսի հրապոյր մ' ունի որ փառաց հրապոյրին ալ կը յաղթէ . խորհրդաւոր բան մը կայ մանկան վրայ որ կը յանկուցանէ , առաջին ճառագայթի մը գեղն ունի նա , որուն առջեւ հիանալով կը հարցնէ մարդ « ուստի՞ կուգայ արդեօք » : Իսկ ժորժ ու ժանին վրայ այն օրը բանաստեղծին ճաճանչն ալ ծագեր էր և ամէնքը գիտէին թէ ո՛րպիսի սիրով կը սիրէ գանոնք Վ. Հիւկօ . իրը չէին այն զաւակունք . ի՞նչ փոյթ . ի՛րն էին հոգւով և խանդակաթ անհուն սիրովն որ ունէր անոնց վրայ :

Երջանիկ իրմէ աւելի անոնք էին այն պահուն և ինք շատոնց ըսած էր թէ ոչ Ուիմպեան վէմ ոչ Տրաշիանու կոթող<sup>6</sup> , այլ թէ միայն թողուն իրեն ժպիտն իր ժանին :

**Գ. Ս. Օսեան**

Բառք. — [1] Մոմով մեղր : — [2] Գիտուն , բանիրուն : — [3] Երգել : — [4] (զըլի) զլտորիլ : — [5] Կամաց կամաց : — [6] Փառաց ու յաղթութեան կոթողներ :



**ՎԼԱՏ ՊԱՏԱՆԻՆ ԵՒ ՅՈՅՍ**

Յուսահատ էի . կեանքը ինձ ոճիր կը թուէր այլ եւս . վնասումը կը ծանրանար հոգւոյս վրայ :

« Մի՛ վհատիր , ո՛վ պատանի , » ասաւ մի մեղմ ճայն մօտաւոր . և մի կաթնաթոյր մատ հեռին , շատ հեռին , մի հրեշտակ ցոյց տուաւ : Դէպ յայն դարձայ մեքենապէս :

Մի խարտեաչ կոյս էր նա . ոսկեղօծ գանգուրներ կը ծածանէին իւր կիճէ՛<sup>1</sup> ուսերուն , որպէս մի գեղեցիկ ստուեր ալեակին վրայ . իւր կապոյտ աչքերուն մէջ կը պատկերուէր երկինք , իբր արծնուած<sup>2</sup> ապակիի վրայ : Իւր կարասի<sup>3</sup> թեւիկները կը թրթռային , կարծես շուտ հասնել կը տենչային . այլ նա յամր յամր կ'ընթանար սպիտակ դժնիկներու՛<sup>4</sup> մէջէ . Մերթ մի ամպի մէջ փաթթուած՝ դէպ յերկին կը սլանար և մերթ կ'իջնէր երկրի վրայ : Ամեն տեղ կը ծաւալէր զուարթութիւն և կեանք . երբ նա մօտէր , գօսացած ոտքը մի ծաղիկ դուրս կը տար , չորցած միջատը մի ճիկ կը հանէր . արեւածաղիկը դէպ յայն կը դարձունէր իւր լայն ճակատը , իբր թէ մի երկրորդ արեւ լինէր նա . թուփերը նորա քայլերուն առջեւ կը հակէին իւրեանց երփներանգ ծաղիկները , որպէս զի Հրեշտակը նոցա վրայ կոխելով անցնի . իսկ նա , վարդից բաժակներու վրայէ ոտոստելով , կակաչներու շքեղ կոնքին մէջ իւր ոտիկները լուալով , դէպ ինձ կը յառաջէր :

Ո՞վ ես դու , բարերա՛ր հրեշտակ , ամեն տեղ կայ-

տիւ կը սիրուես , յարութիւն կու տաս հոգեվարին , կեանք կ'ազդես դիակին :

— Ես Յոյսն եմ , ես եմ որ մարդը իւր խանձարուրին մէջ կ'առնում , թեւերուս վրայ օրրելով կը քնացունեմ զայն , և իմ շունչը կը խառնեմ նորա յետին շունչին հետ : Գիտեմ , դու ալ ինձ պէտք ունիս , ո՛վ պատանեակ , դու ալ վճատած ես , մի մեծ վիշտ գրեց կը մաշեցունէ . այլ աւետիս քեզ , խոցերդ պիտի բուժուին :

\* \* \*

Բառք. — [1] Մարմարին : — [2] Գունաւոր մոմով նկարել : — [3] (խ--է--): — [4] Փուշ :



### ՉԱՒԱԿԱՅ ՊԱՐՏԻՔ ԱՌ ԾՆՈՂՍ

Մանուկ կաթնիկեր , որ թէպէտ դեռ իմացականութիւն չունի , բայց բնագրեցիկ բերմամբ մօր գրկին մէջ առաջին անգամ կ'զգայ և կը ճանչնայ սէրն : Մանուկը , եթէ չեմ սխալիր , մօր միջնորդութեամբ և վկայութեամբ կը ճանչնայ նաեւ իւր հայր . և ահա սոյն ճանաչման մէջ կը ծնի ծնողատիրութեան զգա-

ցումն և որչափ ինքն կ'աճի և կը զարգանայ , պէտք է այնչափ մեծնան իւր սրտին մէջ ծնողատիրութեան պարտիքը :

Եւ ի՞նչ են այս պարտիքները . ահա մի առ մի բացատրեմ քեզ : Բնական և Աստուածային պարտիք է նախ և առաջ ճանչնալ , թէ իւր կենաց և գոյութեան պատճառը՝ իւր ծնողքն են . եթէ չլինէին ծնողք , ինքն այս աշխարհիս վերայ ոչ լոյս պիտի տեսնար , ոչ արեւ , և ոչ մարդ պիտի կոչուէր , և կամ մարդկային ընկերութեան կապ-խառնուեր . այլ պիտի մնար չգոյութեան մէջ անծնունդ և անանուն :

Այո՛ , զաւակաց պարտիքն է ճանաչել զծնողս , և ծնողական ծայրագոյն սէրը չափել պէտք է . թէ չկայ աշխարհիս վերայ ուրիշ ոք , ոչ եղբայր , ոչ քոյր , ոչ բարեկամ , ոչ ազգական և ոչ խի ամուսին . որ զինքն այնչափ գործով սիրէ ու խանդաղատի . անձն՝ անձին և հոգին՝ հոգւոյն փոխան տայ , ինչպէս ծնողք : Ուստի ծնողական սիրոյ այս մեծ իրաւունքը , նոյն փոխադարձ սէրը կը պահանջէ զաւակներէն . զոր սրտի մտօք պէտք է հատուցանեն ու պարտական չի մնան :

Ճանաչել և հպատակիլ պէտք է . ընտանեկան կենաց և առանին փոքրիկ թագաւորութեան մէջ՝ քանի՞ բարձր ու փառաւոր է ծնողաց իշխանութեան աթոռ . թէպէտ և ստրուկ լինին նոքա , աղքատ լինին և իբրև անքաղաքացի՝ շինական խրճիթին մէջ ապրին , դարձեալ միշտ մեծ են ծնողք , որ քողցր և անբռնադատ սիրով կը հրամայեն , որոց կամակատար հնազանդութիւն մատուցանել արժան է , ինչպէս տիեզերք աստուածպետական աթոռին առաջ :

Հանաչել պէտք է նաեւ թէ որդիքները ո՞րչափ երախտապարտ են առ ծնողս, որք ոչ միայն երկանց վիշտերով ծներ են գիրենք, այլ և բազմադիմի չարչարանքներ, տառապանքներ և կարօտութիւններ կրելով՝ պահեր ու դարմաներ են գիրենք. որոց արխտուր և փոխարէն պէտք է հատուցանեն որդիք երբ ծերութիւն կը հասնի ծնողաց վերայ, կամ մերթ եւս տարածամ հիւանդութիւնք և փորձութիւնք կը չըջապատեն գիրենք: Այս դառն տառապանաց մէջ ո՞վ մխիթար պիտի լինի ծնողաց սրտին. եթէ ոչ զաւկըները, որոց անհրաժեշտ պարտականութիւնն է, ամենայն սիրով դարման տանիլ ծնողաց մինչեւ գերեզմանին դուռը, և ձեռքով ի հող դնել նոցա խոնջեալ գլուխ և աշխատեալ անձն:

Խորմեան Հայրիկ



Գ Ի Շ Ե ր

Արեւը մայրը մտաւ. գիշերուան ցօղը գետնին երեսը կը թրջէ. օդը՝ որ ցորեկը չափէ դուրս տաք կ'ընէր՝ հիմա կը պողըշտըկի:

Ծագիկներն իրենց խատուտիկ թերթերը կը գոցեն, գլուխնին կը ծռեն իրենց կոթին վրայ կը կախուին:

Վառեակներն իրենց մօրը թեւին տակ կը քնանան: Թռչուններն երգերնին դադրեցուցեր են, բոյներնին ծառերուն վրայ դրած՝ գլուխնին ալ թեւիկներուն տակը առած կը հանգչին:

Ձայն մը չելլար այն փեթակէն՝ ուր որ մեղուները իժիր<sup>2</sup> կը մտնէին ու կ'ելլէին. իրենք ալ թողուցեր են իրենց աշխատութիւնը, ու ամենն ալ իրեն ընկերին քով մոտէ սենեակներու մէջ կը քնանայ:

Ոչխարները իրենց կահուղ բրդին վրայ պառկեր են. ալ չի լսուիր բլուրներու վրայ իրենց մայելը:

Տղաքն ալ մուցեր են իրենց խաղը. ամենեւին ոտքի ձայն չկայ. ճամբաները մարդ չկայ. դարբինն ալ չզարներ իր կռանը սալին վրայ:

Հիւսան սղոցը ճւթոց մ'ալ չի հաներ. ամեն արած կը քնանան, մարդիկ ալ, անբանք ալ:

Երկինք երկիր մութ պատեր է. գիշե՛ր:

Ո՞վ է որ աս ամեն քնացողներուն վրայ հոգ կը տանի, ու անոնց չկրցած ատենը գիրենք կը պաշտպանէ:

Կայ մէկ աչք մը որ քնանալ չունի, որ առանց արեւու լուսոյ կը տեսնէ. ճամբաւ մէջ իրեն լուսին պէտք չէ, տան մէջ կանթեղի կարօտ չէ. երկնքի վրայ աստղ չի փնտռեր: Աս աչքը ամեն տեղ կը տեսնէ, ամեն մարդ կը հոգայ. աս է Աստուծոյ աչքը, որուն ձեռքը միշտ մեր վրայ է:

Աստուած տուեր է քունը որ յոգնութիւն առնունք. գիշերը մեզի տուեր է՝ որ հանգչինք:

Իրիկունը մայրը մատը բերնին դրած՝ կամաց կամաց քալելով չորս դին կ'երթայ ամեն շնկոց դադրեցընե-

լու, որ չըլլայ թէ իր տղայն անուշ քունէն արթըննայ, անկողնին վարագոյրը կը քաշէ, ճրագն ալ կը վերցընէ, որ աչքին լոյս չգարնէ:

Աստուած ալ ասանկ մեզի համար սեւ վարագոյր մը կը քաշէ. ամեն բան կը խաղաղցընէ, որ իր մեծ ընտանիքը հանդարտ քուն ըլլան:

Հանգիստ քուն եղիք յոգնած աշխատողներ, պզտիկ տղայք, դուք ալ տըզտըզացող միջատներ. Աստուած ձեր վրայ արթուն կեցեր է. իր աչքը միշտ բաց է՝ զձեզ պաշտպանելու համար: Նրբոր մութը քաշուի ու արեւուն ճառագայթներն աչուընուդ զարնեն՝ շնորհակալ եղիք Աստուծոյ որ գիշերը զձեզ պահպանեց: Ծաղիկները բուրեն Աստուծոյ իրենց անուշ հոտը, թռչունները իրենց ընկերը չկանչած՝ անոր շնորհակալութիւն երգեն: Աստուծոյ անունը սրտին մէջ դրած՝ պառկի մարդն ալ, ու ելած ատենը նորէն սկսի փառք տալ:

Հ. Ղ. Ալիբան

Բառք. — [1] Մեղուներուն տունը: — [2] Շարունակ:



Պ Տ Ո Յ Տ

Նրբ գեղեցիկ եղանակն է, երկինք պայծառ, օդ՝ ջինջ և ջեր<sup>1</sup>, ծառերն սըճնուած են տերեւազարդ, մի կանաչ խոտ կը ծածկէ բլուրն, և մարգագետինն դոյնդոյն ծաղիւնք կը կկեն<sup>2</sup>, սաղարւուց<sup>3</sup> մէջէն անոյշ կը շնչէ հովիկն, և խոտոց տակէն մրմնջածայն կը սողսկի վտակն արծաթի, քանի՛ քաղցր է ՊՏՈՅՏ հովտին մէջ, բլրոյն կուշտն կամ ծովուն եզրն: Անարատ հեշտութեամբ լի և օգտաւէտ է միանգամայն այս գրօս. մաքուր օդն կը մաքրէ թոքերն և կը դիւրէ շնչառութիւնն՝ մանաւանդ երբ մարդ դուրս կ'ելնէ մի սենեկէ կամ գործարանէ ուր ժամերով փակուած է մնացել:

Կանաչութիւնն կը պարարէ<sup>4</sup> աչերն, ծաղկանց բոյրն կը դդուէ ունզն, մինչ հովին ու ալեակին մրմունջն կը դիւրէ ախանջներն. ամէն զգայարանքնրէ ներս կը թափանցէ մի սուրբ ու առողջ հեշտութիւն որով կը համակի մարդ, մարմին և հոգի միանգամայն կ'ընդլայնին՝ կը շնչեն մեծ ու ազատ, հոգք կը փարատին կնճռեալ ճակատէն որ կը պարզի, և հաճոյական պատկերներ կը գրաւեն միտքն:

Ո՛վ սրբազան հաճոյք ընութեան, ո՛վ հեշտալի ստուերք խորհրդաւոր անտառաց, ձեր ծոցոյն մէջ ո՛րչափ անդգալի կը սահին ժամերն, և մարդ այդ քաղկազարդ զառկայրից վերայ քանի՞ աշխուժիւ կը փայլէ:

կ'ոստոստէ. ծերն կը կարծէ վերստացած լինել իւր պատանեկան օրերուն աշխոյժն ու կայտիւնն<sup>5</sup>: Պարզել մի գեղջկական սեղան կակուղ խոտոյն վերայ և սազարթեայ հովանւոյն տակ, նստիլ մամուռաչէն բազմոցներու վերայ, դնել միրգն տերեւէ պնակներու մէջ, առնուլ պարզ ճաշն որոյ չտփ երբէք քաղցրահամ չեն թուած համադամք, լսելով՝ իւր շուրջն՝ մանուկներու զուարթ շողփաղփին որ կը խառնուի տերեւոց մէջ պահուրտող թռչնեկին խաղերուն կամ ծովեզեր ալեաց կարկաջին հետ. ետ դառնալ երեկոյին, երբ տակաւ հորիզոնին վերայ կը սրբուին վերջալուսոյ յետին նշոյլք, դալարեօք կամարազարդ ծառուղիէ մի կամ մի մակուկի մէջ խաղաղաջուր ծովուն վերայէն հանդարտընթաց, ի՛նչ զուարճութիւն, և ի՛նչ օր. այդ աւուր կենսաւէտ բոյրն կը տեւէ բոլոր շաբաթն և կը խնկէ ու կը քաղցրացնէ շաբաթական վաստակն:

Բնութեան բանաստեղծութիւնն պէտք է սիրել. նա ամենուս կը խօսի, համեստ դործաւորին որպէս իմաստասիրին և բանաստեղծին. բայց ամենէն խոնարհ գլխոյն մէջ իմաստասիրութիւն և բանաստեղծութիւն կայ և կրնայ կարգաւ բնութեան իմաստներն: Եւ յետոյ, բնութեան ծոցոյն մէջ այդ ձեմոց և պտոյտներու ազդեցութիւնն մարմնոյն վերայ քանի՛ առողջարար է. մանաւանդ երբ չսիրեմք միշտ բազմութեամբ երթալ խռնուիլ միեւնոյն տեղոյ մէջ. միայն ուր որ մի սըրճարան կանգնուած է՝ հոն միայն չէ բնութիւնն գեղեցիկ. ամենուրեք սփռած է նա իւր գեղեցկութիւնքն. շերինք և բլուրք ի՛նչ հովիտներ ունին, ի՛նչ հովանաւոր ծործորներ, անտառք ի՛նչ խորհրդաւոր ու զովստուերներ. պէտք է թափառիլ, դեգերիլ, վազել:

արչաւանք ընել՝ յառաջընթաց արձակելով մանուկներն որ ի մէն մի քայլ ետ պիտի դառնան առ մեզ մի ծաղիկ բերելով զոր քաղել են զմայլմամբ կամ մի թիթեռն<sup>6</sup> շղարշաթեւ որ իւրեանց մատիկներուն մէջ կ'օգորի<sup>7</sup> կամ ցուցնելով մի թռչնիկ որ կ'օրօրի մի ոստոյ ծայրն. և նոր ու ակորթադիր վայրերն՝ զոր պիտի գտնեմք՝ պիտի հաճոյք առթեն մեզ այնպէս որպէս թէ մէն մի Գոլումպոսներ<sup>(\*)</sup> ըլնէինք:

Ռ. Գ. Պերպլեբան

- Բառք. — [1] Զինք եւ ջեր օդ, պայծառ և բարխառն օդ. — [2] գործել (տօ՛ւ-տօ-ւ-տօ): — [3] Կանաչ տերեւ: — [4] Զլացնել, զիրցնել: — [5] Կայտաւր: — [6] (Գե-լե-լե-լե): — [7] Կոտորով կուռիլ:



(\*) ձենովացի մեծահոշակ նաւագնաց, որ 1492ին գտաւ զԱմերիկա. 1506ին մեռաւ ի Սիվիլիա քաղաքին Սպանիոյ չքաւոր և անօր վիճակի մէջ: Ամերիկայի շատ մը գաւառներն ու քաղաքներն ի պատիւ իրեն կոչեցան Գոլումպիա կամ Գոլումպոս:

ԵՐԿՈՒ ԿԻՆԵՐ (\*)

ՂԱՒԱԹԻՈՅ ՍՍԼԱՅՍՏԱԿԷՆ

\* Յիսուսն քայլ անդին կին մը կ'երթար պղտիկ աղջկան մը ձեռքէն բռնած սերտիւ: Ո՛հ, անմիջապէս ձանձցոյ զինքը. մենէ էր, իր արիւնէն կար մեր երակներուն մէջ: Գաւառացի պանդուխտ կին մըն էր, Մշոյ դաշտէն, եթէ չեմ սխալիր: Կարմիր կտաւ մը ծածկած էր ամբողջ դէմքը մինչեւ բերանը. արեւակէզ սյտերը միայն կ'երեւային, ու մանրիկ սեւուկ աչերը, որոց մէջ ցուրտ կորով մը կը տեսնէի ես: Իր հայրենիքին նախընտրէն հագուստը կը կրէր, ասեղնագործ կապոյտ Բզաւի և կարմիր գոգնոց: Մատաղատի ազնիւ մուշ գոյնով վերարկու մը ունէր մինչև ծունգերը, և իր մերկ պղտիկ ոտները կը քաջքըշէին իրենց ետեւէն առնական հաստ կոշիկներ, որոց միոյն մէջ հանգստեամբ կրնային սեղմիլ իր երկու ոտքերն ալ: Իր հասակն հազիւ կը հասնէր մինչեւ մօրը մէջքը, և անգիտակից խանդաղատանքով՝ գլուխը կը խորասուզէր անոր Բզաւի խորերը:

(\*) Սոյն ընտիր գրութեան երկրորդ մասը քաղած ենք, որ հրատարակուած է ի Մասիս Շարձածքերի:

Հաստատ քայլերով կ'ընթանային երկուքն ալ, կամաց կամաց, անուշադիր իրենց շուրջը տիրող ընդհանուր ոգեւորութեան, այդ խաժամուժին մէջ տարօրէն իմն միայնակ: Մայրը սակայն խուզարկու նայուածքներ կը պտտցնէր սալայատակին վրայ, յամառ ուշադրութեամբ, և ահա յանկարծ ծռեցաւ, փայտի մը կտոր առաւ գետնէն և գոգնոցին ծայրը վերցնելով՝ մէջը դրաւ: Քսան քայլ անդին, նորէն ծռեցաւ, չորցած ճիւղ մը առաւ, երկու երեք կտոր ըրաւ և գոգնոցին մէջ սահեցուց: Այսպէս շարունակեց հինգ վեց անգամ: Երբեմն ծռած ատենը, փայտի կտորներէն մին գետին կ'լլնար գոգնոցէն, և այն ատեն պղտիկը, աշխուժիւ թողլով մօրկանը ձեռքը, կը վերցնէր այդ կտորը և գոգնոցին մէջ կը նետէր յաղթական կերպիւ, մօրը աշխատութեանն օգնելու բնագրական եռանդեամբ: Գոգնոցը սակայն չէր լինար. Ղաւաթիոյ սալայատակին վրայ՝ քաղաքակրթութիւնն ամուրթեան դատապարտած է բնութիւնը: Խեղճ կինն անշուշտ հասկցած էր զայս, որովհետեւ հիմա չորցած քակորի<sup>1</sup> կտորներ ալ կը նետէր գոգնոցին մէջ: Եւ անշուշտ եկաւ վայրկեան մը ուր իր տխուր պարէնն ամբողջացած նկատեց, որովհետեւ փոյթկոտ քայլերով սպրդեցաւ կողմակի փողոցի մը մէջ, սերտիւ բռնած միշտ աղջկանը ձեռքէն:

Ո՞ր կ'երթար, Ղաւաթիոյ ո՞ր զագրելի<sup>2</sup> գուհիին<sup>3</sup> խորը, ո՞ր մուշ ու ժահահոտ<sup>4</sup> խանին անկիւնը: Զը տեսայ: Միայն թէ կ'աճապարէր, որպէս զի գիշերը, երբ իր ամուսինը խան դառնար՝ ցերեկուան տաժանելի յոգնութեանը տակ ընկճած ու ոսկորները կտորտած, կ'ինը կարենար տաք կերակուր մը տալ անոր,

Ղալաթիոյ սալայատակին վրայէն ժողուած փայտի կտորներովը : †

ԼԵՆԻՆ ՓԹԱՑԱԿԵԱՆ

Բառք. — [1] (Թէդէտ) : — [2] Զգուելի : — [3] Փողոց : — [4] Հոսած :



ԲԱՐԻՉ ԵՒ ԼՈՆՏՈՆ

Ոչ եւս Բարիզի եղելութիւն մը , այլ գրեթէ անձնական եղելութիւն մը պիտի պատմեմ . և այս իսկ է սր Մանչն անցայ Լոնտոն գնացի , Մանչն անցնիլը վտանգ մ'անցնել է և Լոնտոն երթալը ուրիշ աշխարհ երթալ է : Ինձ մանաւանդ ո'րչափ անախորժ է Ովկիան , ոչ իր դորչագոյն թրիայորդ<sup>1</sup> ալիքները կը սիրեմ , ոչ իր կատաղութիւնը : Ժամանակէ մ'ի վեր մանաւանդ ոչ եւս կը հասկնամ Վ . Հիւկոն երբ կըսէ .

Ըզդաւնուծիւն մոռնամ սրտիս երբ մեծուծիւն կը տեսնեմ  
Անոր համար անս և հոս ծովուն զրացի եկել եմ :

Եւ ոչ ուրիշ քերթողի մը հետ դառն ալիքներէն քաղցրութիւն կ'ակնկալեմ իմ աւուրց համար : Զէ' . Վիրգիլիոսի հետ ա'լ մի միայն ըդիտիւն Զուրց կը սիրեմ և Միլտոնի ըդիտիւն Զուրս անչրեւաց . և չեմ Պայրն (\*)

(\*) Հոչակաւոր անզղիացի բանածտեղժ :

որ ըսեմ Ովկիանոսի ալիքներուն , Եւ ոչ ոչայ Ովկիան , այլ զէ'որ է որսէ զիս : Ովկիանոսն՝ որուն այս ջրանցքը նեղուածք կուգայ իրեն և որ ստամբակեալ<sup>2</sup> երկու եղերաց դէմ ձայն կուտայ իւր անդնդոց որ իրենց բուրր եղեւն ու ալիք դուրս հանեն : Այլ Ովկիանոսին ալիքներէն ալ կազատի մարդ և ահա գնացի ի Լոնտոն ու դարձայ : Լոնտոն որ ինք միայն տէրութեան մը չափ մեծ է և բազմամարդ : Բարիզ երկու միլիոն բնակիչ ունի , Լոնտոն չորս միլիոն : Եւ ո'րչափ տարբեր են երկու քաղաքները , Բարիզ աշխարհի քաղաքն է , Լոնտոն աշխարհի ոստանն է , Բարիզ սիրելի , Լոնտոն պատկառելի . Բարիզի յատկանիշն է վայելչութիւն , Լոնտոնին մեծվայելչութիւնն է . Բարիզ ցնծուն և արթուն , Լոնտոն գործօն և խոհուն : Բարիզ ամեն բանի ծաղրածու , Լոնտոն ամեն բանի ակնածու . Բարիզ բազում այն է որ թեթեւ ու անզգաստ , Լոնտոն միշտ ծանր ու զգաստ . Բարիզ այսօր ձեռներէց , վաղը ձեռնթափ , Լոնտոն անյողդո'ղդ ձեռնարկու , Բարիզ հաւասարութեան քաղաք , Լոնտոն ազատութեան քաղաք , Բարիզ միշտ կը խլրտի , Լոնտոն երբեմն կը շարժի :

Բարիզի մէջ փողոցները կ'ապրին մարդիկ , Լոնտոնի մէջ տուները կ'ապրին . Բարիզ եկեղեցի երթալն ամօթ կը համարուի , Լոնտոն եկեղեցի չերթալն ամօթ կը համարուի : Ընտանի և կրօնք , ահա' երկու մեծ բան որոնցմով անկարելի է որ մարդ մը առաքինի չըլլայ , որոնցմով անկարելի է որ ազգ մը մեծ չըլլայ : Աշխարհի մէջ կէտ մըն է այս կղզին . այլ է' երբեմն որ այդ կէտը աշխարհի կը հրամայէ , ինչպէս Պօքս (\*) ըսաւ օր

(\*) Անզղիացի հոչակաւոր քաղաքագէտ :

մը Նաբոլէոն Մծին: Եթէ Թիէռի(\*) պատմութիւնը քովս ունենայի՝ բառ առ բառ կ'օրինակէի հոս այս հետաքրքրական խօսակցութիւնը Գաղղիոյ աշխարհակալ կայսեր և Բիթի(\*\*) ասոյեան այն մեծ անգղիացւոյն մէջ, ուր յանկարծ Ալպիոնի(\*\*\*) զաւկին ամբարտաւանութիւնը կ'արթնայ: Ամբարտաւանութիւն. ի՞նչ շուտ կը հանէ մարդ գրչէն այսպիսի բառեր հետեւելով ընդհանուր կարծեաց հոսանքին: Անգղիացին կը զգայ ինքզինքը, բայց ամբարտաւան չէ. ինչ որ ամբարտաւանութիւն կը թուի իր վրայ, շատ անգամ ամէկոտութիւն է: Կարծես թէ դեռ խոսքն ան մը ունին այս մարդիկ որ կը խափին:

Բարեկամիս մէկը կըսէր թէ քաղաքակրթեալ վայրենիներ են և այս ալ թերեւս իրենց մեծութեան քաղտնիքներէն մէկն է:

Այլ ի բաց առեալ այս մասնաւորութիւնը, իրենց ընդհանուր բնաւորութեանը մէջ կըսեն թէ ոչ ոք անգղիացի լրտի մը չափ գիտէ մեծարել դիմացինը, քաղցր ու քաղաքավար ըլլալ: Որչափ ալ մարդ ընկերհաշտական գաղափարներով տոգորուած ըլլայ, անկարելի է որ հիացմամբ կանգ չառնէ անգղիացի ազնուականի մ'առջեւ: Եւ ի՞նչպէս մեծ չ'զգայ մարդ զինքը և մեծութեան կնիքը չկրէ վրան երբ որդի ի հօրէ վեց կամ ութ հարիւր տարուան նախահայրներու զաւակն

(\*) Գաղղիացի նշանաւոր քաղաքագէտ և պատմաբան հեղինակ «Պատմութիւն Գաղղիոյ յեղափոխութեան» և այլ մատենից:

(\*\*) Անգղիացի մեծահռչակ քաղաքագէտ:

(\*\*\*) Մեծին Բրիտանիոյ հին անունը:

է, ամենն ալ տանուտեարք, ամենուն ալ քաղաքը՝ Լոնտոն: Այս իմաստով պիտի ըլլայ որ մեր նախնիք որ Ոստանիկ բառը կը գործածէին ընդհանրապէս, Հօրորդի կըսեն եղեր ազնուական մարդու, ինչպէս կարդացած եմ կարծեմ Խորենացւոյն մէջ:

Մարդ մը երբ այս երկիրը կը տեսնայ ու իր բնակիչները կը ճանչնայ, մէկէն կ'ըսէ ինքնիրեն, «Ո՛ւր էր թէ մնային միշտ ասանկ»: Առաջին անգամ Լօնտոն գալուս այս եղաւ իմ տպաւորութիւնս. անկէ ի վեր տասն անգամ նորէն եկայ, միշտ տպաւորութիւնս նոյն մնաց:

Բայց եթէ Անգղիացիքն ու իրենց բարոյականը կը սիրեմ, այլ չ'եմ սիրեր իրենց ճայրոտ<sup>3</sup> երկինքն ու բալուտ<sup>4</sup> և թօնուտ<sup>5</sup> մթնոլորտը: Հազիւ հազ այս մէկ քանի ամսուան մէջ երբեմն կը ցրուին մառախուղք և թոյլ կուտան նշուլիցն արեգական փայլիլ Լօնտոնի մշտականաչ մարմանդներուն վրայ որք այն հազուադէպ ժամերուն կարծես թէ կը խայտան խարտիչագեղ սպիտակափայլ անկուհեաց խոշոր քայլերուն ներքեւ: Այս մէկ քանի ամիսը դղեակները կը պարպուին և Լօնտոն կը լեցուին:

Հեռուէն ու մօտէն ով որ կրնայ Լօնտոն կուգայ ուր ընկերական ընթացքը կը սկսի արտաքոյ կարգի փայլով մը փայլիլ: Հացկերոյթք ու երեկոյթք իրարու կը յաջորդեն, ու ցորեկներն ալ պարտէզներու մէջ կը շարունակեն տօնք և հանդէսք: Բաց է ազգային Խորհրդարանը. բաց են բոլոր թատրոնները: Այլ Խորհրդարանին սեմին վրայ կանդ առնենք. չըլլայ գահավէժ դատողութիւնք, երբ ունկնդիր ըլլանք մանա-

ւանդ Իրլանտայի վիճարանութեանց, դան աւրեն մեր այնքան գեղեցիկ տպաւորութիւնները կամ ուրիշ վիճարանութիւնները մեզ հրապուրեն քաղաքական կարգի խնդրոց: — Թատրոն մտնենք ուր ահա պիտի երգէ Բաթթին, քաջալար երգիչը, « Բօլընդ Կառտըն » ի սոխակը:

Ո՛վ ազգ մեծ, շոայլ ի ծափահարութիւն, շոայլ ի վարձատրութիւն. երբ տալ ուզէ՝ քիչ տալ չ՛գիտէ, լիբրուռն կուտայ ու կարծես թէ չը յագենար տալով: Հո՛ն պէտք էր ըլլալ և լսել ու տեսնել: Քառորդ մը անընդհատ տեղացին՝ փունջք, տրցակք<sup>6</sup>, կողովներ, պսակներ, դափնիներ, տաւիղք և քնար, թագ և ապարօշ, և փողոջուկք<sup>7</sup> և քայռ<sup>8</sup> և մանեակ և ուրիշ չը գիտեմ՝ քանի տեսակ բան, դրասանգ, ծաղիկ և պտուղ — և արկղեր ու գզրոցներ, ո՞ գիտէ ի՛նչ — և դարձեալ ծաղիկ, դարձեալ դափնիք — ու նոր փունջեր, նոր պսակներ, վերջը չեկաւ: Կարծես այս մարդիկը և այն լեյտէք (տիկնայք), որ սիրտերնին ի ձեռին ունին և ձեռքերնին քսակնին, կըսէին աննման երգողին:

« Երկու ամիսէ ի վեր զմայլեցուցիր մեզ, վերացուցիր, յափշտակեցիր, հոգւոյդ բոլոր յուզմունքն և սրտիդ վայնասունը թափեցիր, մրմունջ կամ աղաղակ, ի հոսանս երկնանուագ դաշնակութեանց, թրթռացընելով մեր սիրտերն և մեր գգայութիւններն ողողելով յալիս վէտ ի վէտ հիանալի ձայնիդ որուն փոխ տուած էին թռչուններն՝ իրենց դայլայլիկը, առաւօտն իւր պայծառութիւնը, իրիկունն՝ իւր նուաղումներն, և է՛զի Ովկիանոսն՝ իւր մռնչիւնը, երկինք՝ իր սահանաց

ձայնը և ամպրոպք<sup>9</sup> իրենց շանթը — ա՛ռ փոխարէն որքան որ կրնաս:

Եւ եթէ չամչնային աւելի պիտի տային:

**Գ. Ս. Օսեան**

**Քառ. —** [1] Մթնցած: — [2] Ապստամբիլ, գլուխ բաշել: — [3] Մթին: — [4] Մշուշապատ: — [5] Խոնաւ, անձրեւոտ: — [6] Փունջ: — [7] Կանանց մագի զարդ: — [8] Կանանց վրզին ոսկի կամ անդամանդեայ զարդ, պրօշ: — [9] Փոթորիկ:

**ՊԱՆԴԻՏԻՆ ՄԱՆԸ**

Քնարին ամէն թելերուն վրայ երգուեցաւ, այո՛, պանդխտին մահը, բանաստեղծը իւր հանձարը՝ կորովը և երեւակայութեան բոլոր ուժգնութիւնը թափեց ի հանդէս ածելու տխուր տեսարանին կատարեալ իսկութիւնը: Սակայն այս ամէնը, խոստովանելով հանդերձ թէ հրաշակերտք են լեզուի և ճաշակի, շա՛տ և շա՛տ հեռի են տխուր իրականութենէ, որոց մի պարզ և դէմ յանդիման տեսին աւելի վսեմ և աւելի աղէ-խարչ<sup>1</sup> է քան զամենայն քերթածս և նկարագիրս:

Հարցո՛ւր քահանային , հարցո՛ւր բժշկին . նոքա միայն գիտեն թէ ի՛նչ է պանդխտին հիւանդութիւնը և մահը :

Մի՛ հարցներ թէ ուստի՛ և ո՛վ է այդ կտրիճը , այդ թիկնեայ՝<sup>2</sup> քաջալանջ՝ հսկայ և գանգրահեր՝<sup>5</sup> երիտասարդը որ յախտ մահու ջերեալ կը տառապի : Մի՛ վերցներ վարագոյրին այդ սոսկալի խորշը որոյ ետին մի քան զմի ազիոզորմ տեսարաններ և քստմնելի պատկերներ թաքուցեալ կան , անծանօթ մեզ , այլ որ իբրեւ արհաւիրք՝<sup>4</sup> անըջականք՝<sup>5</sup> , անդուլ և անդադար նկարուելով հրատապ երեւակայութեան մ՛առջեւ , վէրս ի վերայ վիրաց և տանջանս ի վերայ տանջանաց կը յաւելուն տառապեալ ախտաժետին՝<sup>6</sup> : Ի զուր թօշնեալ ձեռքերով հրեւ՛ վանել կը ջանայ այս ուրուականները , ի զուր աչքերը կը խփէ և խռովեալ գլուխն այսր անդր կը տատանէ . նոքա ևս առաւել ուժգին կը յարձակին և , դեռ ի կեանս , մահու անհնարին դառնութիւնը կը բազմապատկեն : Թալկացեալ դիմաց վրայ երեւցած հանելի ջղացութիւնք , բռնի հտպտանք<sup>7</sup> և զայրագին կծկումներ<sup>8</sup> բաւականէն աւելի կը մատնեն խռովեալ հոգւոյ այն ներքին և գերագոյն յուզմունքն յորոց ի զուր խոյս տալ կը ճգնի թշուառ պանդուխտը :

Մերթ կը գոռայ , կ'աղմկի , կ'ալեկոծի , յոյս և յայնկոյս կը դառնայ , և մերթ՝ լքեալ և պարտասեալ ի բռնութենէ մարտի , կը նուաղի՝ կ'սպառի՝ գրեթէ կ'անշնչանայ : Ոգետա՛նջ պատերազմ :

Փոխանակ լեզուի՛ որ այլ եւս կը զլանայ իւր ծառայութիւնը , աչօք օգնութիւն կը հայցէ , ողորմ և

ցաւագին հայեցուածս այսր անդր տարուերելով : Մայրենի գիրկը կ'երազէ թերեւս , կամ սիրեցեալ էակի մը խանդաղատալիր գգուանքն կամ կարեկցութեան աջ մ'ուստեք որ կորզէ ճողպրէ զինքն այն անյատակ անդուռէն որոյ եգերքն հասեալ կայ :

Խուժք մի պանդխտաց , սենեկակից , հայրենակից և թերեւս ազգակից , իւր շուրջը բոլորած կ'սպասարկեն : Մին իւր կարի համեստ քսակը կը բանայ , մին իւր օթոցը կը մերկանայ որպէս զի լաւ եւս ծածկուի հիւանդը . մին իւր բարձէն կը զրկուի , միւսն իւր սաւանէն , մին բժշկի կը վազէ , միւսը դեղերը կը հոգայ . այսպէս իւրաքանչիւր ոք գործունեայ դեր մ'ստանձնած կը ճգնին . շոս է անկեղծ սէրը . անկեղակարծ բարեկամութիւնը , ճշմարիտ գութը՝ գսրոջը և կարեկցութիւնը : Անտրիտուր՝<sup>9</sup> վաստակ , զի չիք հատուցանել զփոխարէնն . վտանգաւոր ծառայութիւն , զի մեծ է հաւանականութիւն մերձեցողաց իսկ նովին ախտի վարակելու : Այլ սոքա անփոյթ ու անվեհեր կը մխին . ոչ ոք զանձնէ կը խորհի , այլ ընկերին օգտակար լինել կը փութան : Պանծալի տիպա՛րք անձնանուիրութեան :

Եւ սակայն ի՛նչ կը զօրեն դժնդակ ախտին բազմադիմի պահանջմանց առջեւ :

Մաքուր օդ , լուսալիր և ընդարձակ սենեակ , հանգիստ և անաղարտ անկողին , մաքուր վերմակ , մաքուր սաւան , մաքուր իրեղէնք , մաքուր ամենայն ինչ և յամենայնի մաքրութիւն : Այս է պիտոյից նախնադոյնն և էականը : Ո՛ւր և ո՛րպիսի հանգամանաց մէջ կը գլուտուի սակայն մեր թշուառը : — Խա՛նի մը զանխուլ<sup>10</sup> և

խաւարչտին խորշերէն միոյն մէջ զետեղուած կայ մի խուզ<sup>11</sup> ուր ի յաւխտենից երբէք թափանցած չեն ճառագայթք արփենւոյն . ուր փոխանակ օդային հոսանաց՝ նեխութեան և ապականութեան ժահահոսութիւն համասփիւ կը տիրէ . ուր մի քանի պանդուխտ հայրենակցաց սեփական աղքատիկ կահք և կարասիք և սնօթք մի զմիով կուտակեալ, հազիւ նրբուղի մը կը ձգեն անցուդարձի . ուր սարդի ոստայնք<sup>12</sup> աստ անդ շոսյալբար բազմապատկուելով, կէս մ'առաստողէն դրասանդ<sup>13</sup> կազմած կը կախուին, կէս մը խորշերը՝ անկիւնները կը լեցնեն, կէս մը պատուհանի մը հինաւուրց՝ ժանգոտած երկաթներն իրարու հետ հիւսուածով կը կապեն . ուր, վերջապէս, ամենայն ինչ մութ և թախծալից, մահաբոյր և մահահրաւէր է : Եւ այս մթնոլորտին մէջ և այնպիսի ծածկոյթներու տակ ուր քրտինք, ազգի ազգի զազրութիւնք, և բիւրաւոր թռչականաց դարչատեսիլ դիակունք այնպիսի նողկալի նկար մը դրոշմած են որ հէք ախտացելոյն հպել մատչելն իսկ ծայրագոյն զոհողութիւն կ'ենթադրէ . այս պայմանաց մէջ ապաքինիլ և ապրիլ կը յուսայ խեղճ պանդուխտը :

Արհեստին բոլոր ճարտարութիւնը, գիտութեան բոլոր հայթայթանքը, գթութեան՝ կարեկցութեան՝ մարդասիրութեան բովանդակ զոհողութիւնն խալառ տրուած են իրեն, բայց ի զո՛ւր : Պէտք է որ ընկճի :

Արդարեւ փոքր մի եւս և ահա շիջաւ առկայ ծեալ պատրոյզն . շիջաւ ընդ նմա և բախտ և արեւ ամբողջ մի ընտանեաց որոց թերեւս միակ նեցուկ և ապաւէնն էր Կարօ :

Վերջին և տխուր մի պարտք ևս կը մնայ վշտաբեկ հայրենակցաց : Ամբողջել զհէքն ընդ օտար հողով և ընդ օտար աստեղօք : Ոչ շիրիմ, ոչ տապան, ոչ հանդէս, ոչ փայլ, այլ և ոչ կեղծ արտասուք և ոչ արուեստակեալ արարողութիւնք :

Մի խշտեկի<sup>14</sup> վրայ, գրգլեակի<sup>15</sup> մ'ի ծածկոյթ, դէպ յարեւելս ուղղուած է անցորդը . մոմ մ' ի սնարից<sup>16</sup> կուսէ կը վառի աղօտափայլ, խեցեայ սկաւառակի մը մէջ քանի մը խուսկ կը բուրէ յանոտից<sup>17</sup> և մի քանի ծանօթք և նժդեհակից արտասուածոր կը հեծեն : Անկեղծ և վշտարուզիս արասսուք :

Այս վերջին հանդէսն եւ վերջին սփոփանքն է թշուառին : Ոչ ոք կը կոտկածէր իւր գոյութենէն, ոչ ոք գիտցաւ իւր մահը :

Էր պանդուխտն եւ չէ :

**Յ. Թիրեախեան**

Քառք. — [1] Աղիբը կտրող, — [2] (-ռ-ււ), — [3] Գուռգ մագով, — [4] Երեւակայութեան ստիւումը, — [5] Երազի մէջ տեսած բան, — [6] Ախտաւոր, — [7] Խեղկատակութիւն, — [8] Կծկիւր, — [9] Անփոխարէն, — [10] Անյայտ, — [11] Հիւզ կամ խցիկ, — [12] Մամուկ, — [13] Զարդ, — [14] (Ե-Յ-Ե), — [15] Գրքրած հին հագուստ, — [16] Գլխու կողմը, — [17] Ոտքին կողմը :




Մ Ա Ր Դ Ն

Ամենայն ինչ ի մարդն, արտաքինն անգամ, կը ցուցընէ անոր առաւելութիւնն ուրիշ բոլոր շնչաւորաց վրայ: Մարդն է որ կը կենայ և կը գնայ կանգուն և ուղղորդ<sup>1</sup>, իշխանութեան ձեւ է այս: Ունի գլուխ որ կը նայի ի վեր կոյս, փառաւոր կերպարան՝ ուր դրօշմուած է մեծութիւն. դէմք՝ ուր նկարուած է պատկեր հոգւոյն, բոլոր մարմինն հայելի է նորա բնութեան առաւելութեանը, և երկնային իմն հուր կը լուսաւորէ անոր երեսին վրայ ամէն ծիր<sup>2</sup> և խորշ: Պատկառելի կեցուած, հզօր և պերճ<sup>3</sup> գնացք կը ցուցընեն ազնուականութիւն և աւագութիւն<sup>4</sup>. մարմնոյն հեռաւոր ծայրովը միայն կից է երկրի, բարձուէն կը նայի ի գետին և կ'արհամարհէ: Բազուկներուն վրայ չէ որ կը յենու մարմնոյն ծանրութիւնը, ձեռքը չեն շօշափեր հողը, և ոչ ստէպլ շիմամբ ընդ գետին կը փապարին<sup>5</sup> մինչեւ կորուսանել շօշափման նուրբ ազդումները որ մեծագոյն առաւելութիւնք են մարդուն: Բազուկը և ձեռքը տրուած են մանաւանդ ի պէտս ազնուագոյն գործոց, այն է՝ կատարել կամաց հրամանները, հեռացնել արգելներ, չթողուլ որ ընդհարմունք կամ հարուածք վնասեն մարմնոյն, բռնել և առնուլ ինչ որ հաճոյական է, և տալ վայելել զայնս միւս գգայնոց<sup>6</sup>:

Թարգմ.  
Ա. Մ. Գարագաւան

Բառք. — [1] Շիտակ. — [2] Շրջան. — [3] Փառաւոր. — [4] Մեծութիւն. — [5] Ծակ բանալ. — [6] Զգայութիւնք:



Ը Ն Տ Ա Ն Ի Ք

Հայ պատանի, երբ յաշխարհ եկիր զո՞վ տեսար քու շուրջն առաջին անգամ. ո՞յց ձեռներ խնամ տարին քո տկար մարմնոյն վերայ և կենաց ասպարիզին մէջ առաջնորդեցին քո առաջին քայլից. — քո մօր և հօր. ո՞յք եղան քո մանկական խաղուց առաջին ընկերքն և ո՞յց հետ մրմնջեցիր նախկին երգերն կենացդ առաւօտին — քո եղբարց և քերց:

Ո՛հ, ընտանի՛ք, աստուածայի՛ն հաստատութիւն, ուր ամէն ինչ նախախնամութիւն, անձնուիրութիւն, սէր և գորով է:

Ո՛րպիսի հզօր կապեր այնոքիկ որ կը միացնեն մայրն՝ իւր զաւկին, հայրն՝ իւր որդւոյն, եղբայրն, իւր եղբօր, քոյրն՝ իւր հարազատին, կինն իւր ամուսնոյն հետ. ի՞նչ է նոյն իսկ մահն այս կապերուն ուժոյն առջեւ, որոց բնութիւն ինքն յօրինած է հանգոյցն<sup>1</sup> սերտ: Ամենէն դիւցազնային առաքինութեանց աղբիւրն է ընտանիքն:

Երբ հայրն, յերեկոյին, կը դառնայ իւր աշխատանքէ և վար կը դնէ օրուան բեռն, զի՛ քաղցր է նմա կարել համբուրել մի քանի խարտեաշ գլուխներ որ կը շարուն իւր բոլորտիքն, կ'զգայ թէ այդ պզտիկ էակներ անհրաժեշտ են իւր կեանքի, թէ առանց նոցա կարի ծանրակիր կը լինէր իւր բեռն, եւ թէ երբ չ'տեսներ իւրեան ապրիլն վերստին այդ նորաբոյս կեանքերու մէջ՝ կարի տխուր պիտի լինէր իւր ըն-

Թացքն ի գերեզման: Հաւալուսն<sup>2</sup> իւր կող կը ձեղքէ տալու համար արիւնն ի ջամբ<sup>3</sup> իւր ձագուց, եւ տեսնուեցան հայրեր որ չվարանեցան բանալ իւրեանց երակներ՝ զի հաց հայթայթեն<sup>4</sup> իւրեանց նօթի զաւակաց:

Եւ ի՛նչ աւելի բնական քան սէրն որդւոց առ ծընողս, նոքա՛ իւրեանց տուին կեանքն. ոսկր են նոցա ոսկրէն եւ մարմին նոցա մարմնէն, նոցա բնոյն վերայ փթթած<sup>5</sup> ծաղիկներ են, յորմէ ծծած են կամ կը ծծեն իւրեանց հիւթ եւ սնունդ: Նոցա սիրոյն մթնոլորտին մէջ աճեցան, եւ անտի արտաքս ի՛նչ մթութիւն եւ ի՛նչ ցուրտ: Ի՛նչ զարմանք որ Յուլիա Ալլուլինա մեռնի իւր հօր դիական վերայ զոր չկարաց փրկել, եւ Պլինիոս Վեսուլի հրատեղաց կայծականց ու մոխրներուն մէջէն դուրս բերէ շալակած իւր մայր ծերունի: Ո՞ր յիշողութենէ կը ջնջի իսպառ հօր եւ մօր յիշատակն. երբ անցնին նոքա յերկրէ՝ թողլով զմեզ որբ իւրեանց գրկէ. տարիներու թանձրացեալ մշուշին մէջէն կերեւին միշտ սիրածպիտ՝ այն նուիրական դէմքերն, եւ ամենէն անզգայ սիրտն կը խանդաղատի ի լուր աղօթոյն զոր մայրն իւրեան սովրեցուց:

Ռ. Յ. Պերպրեան

Բառք. — [1] Կապ: — [2] Թռչուն ջրային և ցամաքային: — [3] Ի կերակուր: — [4] ձարել: — [5] Բացուած:



Ա Ս Տ Ո Ւ Ա Մ

Մի է Աստուած, հաստիչ<sup>1</sup> և խնամող արեգերաց, ամենազօր և անհաս: Արեգակն չէ Աստուած, բայց կրնայ համարուիլ Աստուծոյ յատկագոյն պատկերը: Անոր պայծառութիւնը կը լուսաւորէ զաշխարհ, ջերմութիւնը կուտայ կենդանութիւն երկրի արդեանց<sup>2</sup>: Զարմանանք անոր վրայ իբրեւ արարածոյ որով կամեցաւ Աստուած ցուցնել իւր կարողութիւնը, բայց չմատուցանեմք նմա պաշտօն: Նմա միայն որ է նոյն ինքն իմաստութիւն և բարութիւն՝ կը վայելին երկրպագութիւն, գոհութիւն և գովեստ: Ըրաւ գերկինս իւր ձեռամբ, և սահմանեց ատեղաց զնացքը իւր մատուցներով: Տուաւ ծովու սահման ընդ որ չկրնար անցնիլ նա, և բռնութիւնք հողմոց կ'իջնեն ակնարկութեամբ կամաց նորա: Կը սարսէ գերկիր և կը դողացունէ ազգերը, երբ կ'արձակէ իւր որոտումը: Աքանջելի է իւր բոլոր ձանապարհաց մէջ, և անոր իմաստութիւնն այնչափ առաւել է քան զմերն, որչափ անոր անսահման զօրութիւնն ի վեր է քան զտկարութիւն մեր: Անոր անբաւ զօրութիւնը կը փայլի իւր բոլոր գործերուն մէջ: Ազբիւր է առատութեան և կեդրոն կատարելութեան: Երջանկութիւն յաստիս<sup>3</sup>, ինչպէս նաեւ ի հանդերձելումն, կը կայանայ ի կատարեալ միաբանութեան

մեր կամաց նորայոյն<sup>4</sup> հետ, և ուրիշ ամէն բարիք են  
զազրիազրիուն<sup>5</sup> և խաբուսիկ<sup>6</sup> :

Թարգմ.

**Ա. Մ. Փարսագեան**

Բառք. — [1] Ստեղծող, — [2] Բերք, — [3] Աշխարհի վրայ, —  
[4] Անոր (կամայքը) հետ, — [5] Խախուտ, — [6] Խարոյ :



**ԽԱՉ ՕԳՆԵԱ՝ ԻՆՁ**

(Նուէր ծնողասէր մանկանց)

Օրորանիս մտ նստած՝

Մայրըս անոյշ երգելով

Ինձ շատ անգամ քուն էր արած՝

Խաչանըչան կընքելով :

Աջն ու խաչը քեզ պահապան՝

Անթիւ անգամ կրկնել էր,

Խաչն իւր սիրոյն միշտ ասպատան՝

Ամեն ժամում կանչել էր :

Երբոր թոթով լեզուս բացաւ,

Խաչի դասըն աւանդեց .

Խաչ օգնեա՛ ինչ, կըրկնի՛ր ասաց

Գըթոտ սիրով պատուիրեց .

Քանի՛ տարի էս սիրուն դասն

Ես շարունակ կրկնեցի .

Մօրս հետը ժամ գընացի՝

Խաչելութիւն սիրեցի :

Ուխտատեղի թէ մատուռներ

Ուր որ ես ուխտ գնացի ,

Համբուրեցի ես խաչքարեր ,

Խաչ օգնեա՛ ինչ, կրկնեցի :

Երբոր փոքր ինչ ես մեծացայ

Մայրըս տուաւ քերական ,

Խաչ օգնեա՛ ինչ, կըրկնի՛ր, ասաց .

Խաչն է ուսման օգնական :

Խաչն օգնական ինձ կանչելով՝

Այրուբենէն ըսկըսայ .

Ամեն դասում միշտ կրկնելով՝

Շուտով կարդալ սովորեցայ :

Քերականն աւարտեցի

Յետոյ մըտայ վարժարան ,

Եօթը տարի ես կարդացի ,

Ուսմունք առի զանազան :

Քանի՛ քանի՛ շարադրածներ

Որ ես ինձէն գրեցի ,

Դեռ չ'սկսած՝ ճակատներըն

Խաչ օգնեա՛ ինչ, դրոշմեցի :

Աստուածաշունչ՝ Աւետարան

Որչափ սիրով կարդացի ,

Այնքան խաչին սիրոյ նըչան՝

Սըրտիս մէջը ըզգացի :

Զգացի որ խաչի ճառըն

Մեծ ուսմունք է մարդկութեան ,

Մեր փրկութեան դրօշն է նա  
 Ճրջմարտութեան սուրբ նշան :  
 Զգացի որ նախատանքով  
 Գողգոթայում տընկուեցաւ ,  
 Բայց և յետոյ անհուն փառքով՝  
 Գլմբէթներում փայլեցաւ :  
 Զգացի որ խաչեալն Աստուած  
 Սիրոյ համար խաչ շարկեց  
 Մարդկանց սիրով խաչը գըրկած՝  
 Խաչ վեր առնուլ քարոզեց :  
 Զգացի որ խաչ կայ պատրաստ  
 Ամէն մարդու առաջին ,  
 Ով կը ցանկայ լինիլ զգաստ  
 Գընալ ըզհետ՝ մեր փըրկչին :  
 Զգացի որ ես էլ ունիմ  
 Իմ յատուկ խաչն աշխարհքում ,  
 Որ անարտունջ պիտի տանեմ  
 Սիրով ամեն դիպուածքում :  
 Խաչ կայ մարդուն իր կըրքերից՝<sup>2</sup>  
 Խաչ ամեն տեղ , ամեն ժամ ,  
 Խաչ կայ անքուն ոտխներից ,  
 Դաւ , հալածանք յարածամ :  
 Խաչ կայ կենաց աղէտներից՝  
 Խաչ դըժուարին , ծանրատար :  
 Խաչ կայ անմիտ տըգէտներից՝  
 Իմաստասէր հանճարին  
 Խաչ կայ աշխարհ պաշտողներից՝  
 Աշխարհի հետ մըրցողին :  
 Խաչ կայ անշարժ թոյլ՝ վատերից՝  
 Յառաջտողէմ ձըգտողին ,

Խաչ կայ մուար կարծիքներից՝  
 Ճրջմարտասէր դիւցազին :  
 Խաչ կայ նենգժոտ՝ խարդախներից՝  
 Պարզ և ուղիղ սրտերին ,  
 Խաչ կայ ըստրուկ ոգիներից  
 Պարտք իրաւունք խընդրողին :  
 Զգացի որ , որ էսքան խաչերն  
 Էն խաչի մօտ ոչինչ եւ ,  
 Որ մարդասէր գըթոտ Տէրըն  
 Բարձաւ իւր ուսն հեզօրէն  
 Նա է սիրոյ անհուն նշան ,  
 Խաչեալըն Սէր գլխովին .  
 Սիրտանաց մեծ ապաստան ,  
 Սիրով իր խաչ բարձողին :  
 Զգացի որ Փրկչի խաչն էր  
 Որ օգնական ինձ կոչեց  
 Երբոր մայրըս , հեզ , որդեսէր ,  
 Խաչ շինեալ էն , դաս տուեց :  
 Քանի՛ քանի՛ նեղութիւններ  
 Որ իմ հանգէպ դուրս եկան ,  
 Միտքըս բերի մօրըս պատուէր  
 Կոչեցի խաչըն օգնական :  
 Քանի՛ քանի՛ հեշտութիւններ  
 Որ ես ինձէն գըրկեցի ,  
 Թափեցի յորդ արտասուքներ  
 Խաչ շինեալ էն , գոչեցի :  
 Վիշտ ու վըտանգ փարատեցան ,  
 Զգացի մեծ ըստիմանք .  
 Քուք փոթորիկ կուտակեցան ,  
 Անցի մէջէն անվրտանգ :

Օրհնուի՛ քո գերեզմանը ,  
 Որդեխնամ մայր գըթոտ ,  
 Որ դու խաչի փըրկարար դասն  
 Ուսուցիր ինձ համառօտ :  
 Թէ որ մանուկ թարմ հասակէս  
 Չազդէիր ինձ խաչին սէր ,  
 Ի՞նչպէս պիտի լինէի ես  
 Մըրըրկաց մէջ անվեհեր :  
 Թէ որ խաչի անյաղթ ոյժը  
 Ինձ յարածամ չըսփոփէր ,  
 Ի՞նչպէս պիտի տանէի ես՝  
 Սուտ , անիրաւ զըրկանքներ :  
 Մայր իմ , դասըդ չեմ մոռանալ  
 Քանի որ ես կենդան եմ ,  
 Նեղութեանց մէջ չեմ թուլանալ  
 Խաչն ինձ պարծանք կանուանեմ :  
 Ուրախութեամբ ես կը տանեմ  
 Ամեն զրկանք , ամեն խաչ  
 Քանի՛ սիրով ես կը տեսնեմ  
 Փրկիչն ՚ի խաչ բարձրացած :

Մեկխոսեցեկ Եպիս. Մուրաշեանց (Գ. Մ.)

Բառք. [1] Ետեւէն : — [2] Կրքերէն (Ռուսանայոց հոլովմամբ բացատրական) : — [3] Տկար , մեղի : — [4] Խարերայ :

ՍԻՐԵՅԷՔ ՉՄԻՄԵԱՆՍ

Վարդակարմիր Գողգոթային վեհ դագաթ  
 Միշտ փայլիլող սիրոյ անչէ՛ջ ճառագայթ ,  
 Դեռ կըսպասե՞ս թափել սըրտից քու սըլաք ,  
 Զո՞վ կը հըսկես , վի՞հ և անդո՛ւնդ թէ կըմախք .  
 Որ սև ժայռից մէջ մարեցաւ այն բեկ բեկ՝  
 Բարբառն վըսեմ թէ՛ « ըզմիմեանս սիրեցէ՛ք » :

Ծածկէ ամպով կարմիր կողերդ , Գողգոթայ .  
 Եւ թող խայտան ցաւոտ ոսկերք սև Յուդայ :  
 Ժանդոտ ու դուռ՝ թուրերն առին կարմիր փայլ ,  
 Նոր կըրօնին հետ արեան ուղիսք առին քայլ .  
 Թընդանօթին առջի բոմբիւնն՝ խեղդեց սէգ  
 Զքաղցր հագագ թէ՛ « ըզմիմեանս սիրեցէ՛ք » :

Մարդազոհով Վատիկանի մըխացին  
 Ծխնելըյգըր՝ , կամարքը « փա՛ռք » գոռացին ,  
 Փոխ-Քրիստոսք խաչն ըրին դաստակ՝ կացինի՛  
 Սեւ դըրօշ մը ատելութեան արիւնի ,  
 Դարուց մոխրէն կամ ամպերէն յուսայ հէք  
 Զըրկեալն լըսել թէ՛ « ըզմիմեանս սիրեցէ՛ք » :

Տընանկին դամբանը կանհետի ոտնակոխ ,  
 Տընակին մէջ մարի առկայծ՝ կանթեղն հող  
 Այն մութին մէջ նօթի տըղեկք կը հեծեն  
 Դըղեակըն խրախ մինչեւ լոյս ջահք կը հիւժեն .  
 Հարուստին կառք ժխորով՝ կանցնի սըրբաբաւ  
 Հէգին դագաղն իւր գերեզմանն լուռ իջաւ :

Գեթսեմանին իջնող հրեշտակն դալիահար՝  
Որ գեղ՝ ծաղիկ՝ արցունք ու փառք չը ճանչնար՝  
Նորա ցուրա գողն աղքատը սոսկ կ'ըստփոփի ,  
Ճոխն և տընանկ պատրանքին մէջ կ'ըլլան մի ,  
Կայծակնաթեւ թէ մըռընչեն մըրրիկներ  
Թէ « Սիրեցէ՛ք զիրար », հէգն հոս չե՛ն սիրեր :

Պ. Գուրեան

Գառֆ. — [1] Նուաղեալ : — [2] Բնացած : — [3] Ձայն : —  
[4] Ծխանք : — [5] Թամ : — [6] Նուաղեալ : — [7] Մեծ աղմուկ :

Զ Ե Փ Ի Ի Ռ

Գու փափկաթեւ մանկիկ զեփիւռ  
Աղբերց վրայէն լուսակարկաջ  
Անուշ հոտով ծաղկանց ըստիւռ  
Ի՞նչպէս թռչիւս ինձ ընդ առաջ ,  
Ու խունկ և զով ընծայելով  
Զիս ողջունես հեզիկ շնչով :

Ո՛հ կը սիրեմ ըզքեզ հողմիկ  
Երբ դու փութաս ինձի գալու :  
Ի պար ի թռիչ ի սոյլ՝ մեղմիկ  
Այրած ճակտիս իմ այցելու ,  
Ծաղիկ հողուոյս քեւ զովացած  
Բացուի ի լոյս ախորժ կենաց :

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ  
Լուր տա՛ր հովտին ու ծործորին՝<sup>2</sup>  
Ու անտառաց բարձրադիտակ ,  
Ուր երամով՝ սոխակք թառին ,  
Թէ մտերիմն իւրեանց եկաւ  
Բիւր ըզմայլմանց յիշատակաւ :

Ո՛հ կորսըւած իմ հաճոյքներ ,  
Հոս վերստին գտնեմ զձեզ ,  
Ծառոց շքքով էք ծածկըւեր  
Ու փըրփըրով առուակին հեզ ,  
Ահա կայտուէք ի յայս ծըմակ՝<sup>4</sup>  
Ի յայս թըփուտ հովանոցակ :

Հոս դառն հողեր մէկիկ մէկիկ  
Ճակտէս ի բաց հեռանային  
Ու փունջք ժամուց դեղապարիկ  
Սիրտս թեթեւ օրորէին ,  
Եւ բնութիւն մայր օրդեսէր  
Քնքուշ գրկաց մէջ զիս գգուէր :

Հոս ձեմէին երեկոյեան  
Ի զով ըստուեր , պար մի կուսից .  
Մազերն հովուն բազմաբուրեան՝<sup>5</sup>  
Սիրտք ընծայուած հեշտ վայելից :  
Շող լուսնակին , կոյսն ու ծաղիկ  
Զիրար շոյեն սիրատարփիկ՝<sup>6</sup>

Մըտերմութիւն , Սէր կրակ ու բոց  
Ի՛նչ անուշ էք յայս տեսարան ,  
Ուր բիւր դալարք ձեզ հանգստոց  
Ու անհուն դաշտեր զրօսարան ,  
Մըտերմութիւն , ինձ երանի ,  
Թէ հոս ծոցէդ հողիս թռանի :

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւս  
 Աղբերց վրայէն քաղցրակարկաչ,  
 Անուշ հոտով ծաղկանց ըսփիւս  
 Թըռի՛ր թըռի՛ր ինձ ընդառաջ,  
 Ու խունկ և զով ընծայելով  
 Պարէ չորս դիւս հեզիկ շնչով:

Մ. Պէտրաբուս

Բառք. — [1] Սուլելով: — [2] Չոր: — [3] Խուսք, բազմու-  
 թիւն: — [4] Շուք տեղ՝ վերանց մէջ, ձոր: — [5] Տեսակ տեսակ հոտ  
 ունեցող: — [6] Սրտանց, սիրով:



ՄԱՆԿԻԿ ԵՒ ԱՐՏՈՒՏԻԿ

Դարանամուտ կամ վաղուց ես լըռիկ,  
 Եւ ոչ դիւրով քեզ բերի ձեռք հիմիկ.  
 Պէտք է երգես իմ սիրուն արտուտիկ<sup>1</sup>,  
 Որ դու տաս սըրտիս զուարթ քու դայլայլիկ:  
 Մի՛ դողար ի տես վանդակիս անել,  
 Ծաղկօք եմ պատած ես անոր թեւեր.  
 Դու քեզ մարգերու կըրնաս մէջ կարծեւ,  
 Երգէ՛ ինձի հետ, թըռչնիկ սիրաւէր:  
 Երբ գայ նոր գարուն բընութեան նոր ոյժ,  
 Եւ մեզի պայծառ օրերու տայ յոյս,

Գողարիկ<sup>2</sup> մարմանդին<sup>3</sup> մէջէն ձայնդ անոյշ՝  
 Զամբիծ քու սիրոյդ կը տօնէ զխընջոյս:  
 Այլ իմ քովս այժմիկ ընդէ՛ր կաս լըռած,  
 Մինչ ես ձայնովս եմ քեզ աղերսարկու,  
 Ա՛հ, գուցէ ես քու ձայնիկ չեմ լըսած,  
 Թող ես փորձ փորձեմ, օ՛ն երգէ՛ և դու:

Վախ, այսքան աղերս չը գըտին շընորհ,  
 Եւ դու կաս մընաս միշտ խուլ ու պապանձ.  
 Արդ թըռի՛ր գընա՛, հաւիկդ ապաշնորհ,  
 Զ՛ուզեմ քեզ ընել գերի իմ կամաց:  
 Բայց խիտ հովանեաց տակ մէյ մ՛որ նետուիս,  
 Ա՛ն երգերդ խկոյն ու հեշտ զուարթիքդ.  
 Զի անտառներու տեսնեմ պէտք ունիս:

Ն. Ռուսինա

Բառք. — [1] Թռչուն ինչ: — [2] Կակուղիկ: — [3] (Ե-լ-):

ԻՄ ՄԱՅԸ

Եթէ տըժգոյն մահու հրեշտակ  
 Անհուն ժպտով մ՛իջնէ իմ դէմ.  
 Շոգիանան ցաւքս ու հոգիս,  
 Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Եթէ սընարըս՝ իմ տիպար<sup>1</sup>  
Մոմ մը վըտիտ<sup>2</sup> ու մահադէմ  
Ո՛հ , նըշուլէ ցուրտ ճառագայթ ,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ :

Եթէ ճակտովս արտօսրազօծ  
Զիս պատանի մէջ ցուրտ դերդ<sup>3</sup> վէմ  
Փաթթեն , դընեն սեւ դագաղը ,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ :

Եթէ հնչէ տխուր կոչնակ՝  
Թրթրուն ծիծաղն մահու դժխեմ<sup>4</sup> ,  
Դագաղս առնէ իւր յամըր քայլ ,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ :

Եթէ մարդիկն այն մահերգակ՝  
Որք սեւ ունին և խոժոռ դէմ՝  
Համասըփուեն խուսկ և աղօթք ,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ :

Թէ յարգարեն իմ հողակոյտ ,  
Եւ հեծեծմամբ ու սըգալէն  
Իմ սիրելիքը բաժնըւին ,  
Գիտցէք որ դեռ կենդանի եմ :

Իսկ աննըչան եթէ մընայ  
Երկրի մէկ խորչն հողակոյտն իմ ,  
Եւ յիշատակս ալ թառամի ,  
Ա՛հ , այն ատեն ես կը մեռնիմ :

Պ. Գուրեան

ԱՌ ԱՌԱՒՕՏ



Այո՛ , ըզքեզ սիրեցի , ո՛վ առաւօտ ,  
Որպէս ոչ ոք բան մը սիրած է բընաւ ,  
Դու հոսեցեր հոգւոյս մէջ լոյս անաղօտ  
Եւ նշոյլ անբաւ :

Անեղծ , անկեղծ սիրոյ պայծառ դու պատկեր ,  
Անսահման սէր արկիր ի սիրտ իմ նուաղ<sup>1</sup> .  
Ընտրեցի զքեզ ինձ բարեկամ և ընկեր .  
Ո՛վ ժպիտ խաղաղ :

Քեզ հետ յարեան և շուրջ զինեւ խոնեցան  
Հաւուց երգեր , յուսոյ աւաչք<sup>2</sup> , ժըպիտ , բոյր ,  
Փարատեցան մըռայլ<sup>3</sup> , խաւար ցիր և ցան ,  
Գիշերն անհամբոյր :

Բոսորավառ<sup>4</sup> դուստրըն ես դու տըւընջեան .  
Վարդ հեր ունիս , վարդ աչուըններ , վարդ թեւեր ,  
Արդարութեան սուրբ անձն ես դու սիրական .  
Քեզ կարդամ հրաւէր :

Հրաւէր կարդամ քեզ , երբ անուրջ<sup>5</sup> տրտմագին  
Սեաւ թեւերով անարիս վերեւ սաւառնի ,  
Եւ խորհրդով զայ չարչարել իմ հոգին  
Մի մութ ապառնի :

Ատելութեան՝ սեաւ նախանձ ու բիւր զոհեր՝  
Ոյց դառնութեամբ էր համակուած սիրտն արդէն ,  
Երբ ճաճանչէ քո գլուխ ժպտուն , լուսահեր ,  
Ներեն ու՛ աղօթեն :

Քառ. — [1] Օրինակ : [2] Մանրիկ , նիհար : — [3] Պէս : —  
[4] Ժանտ , գէշ :  

---

Զի ճառագայթ քո նոցա միտքն ողողէ  
Եւ իմանան թէ չարեր կան յաշխարհի ,  
Թէ փուշ , դժնիկ<sup>5</sup> կան , բայց արեգ ներող է  
Եւ ընդ բնաւս վառի :

Ծագէ ուրեմն , ո՛վ առաւօտ , ծագէ միշտ ,  
Յորչափ կաթեա մեր սրտերուն քաղցրութիւն ,  
Ծագէ ցորչափ կակղես ցողով քո զմեր վիշտ ,  
Ծագէ , ո՛ր Զուարթուն : ✚

Յ. Սերեան

Բառք. — [1] Մարմրած : — [2] Զայն : — [3] ՄՅուծիւն : —  
[4] Կարմրագոյն : — [5] Երագ : — [6] Փուշ ինչ :



ՎԵՐՁԻՆ ՀԱՌԱՉԱՆՔ

✚ Խոնաւն առւօտին  
Եւ ցողն երկընքին  
Կը ցողէ իմ վրայ ,  
Անտառաց վրայ :  
Խորհուրդ է պատեր  
Զանտառը համբուն .  
Սեաւ խորհուրդ պատեր ,  
Զիմ միտս օրն ի բուն :  
Ա՛հ , ի՞նչ ընեմ որ  
Իմ սիրտս է թափուր  
Երբ բնութիւն համայն  
Կը պճնի հարսի նման :

Քան զտարիքս աւելի  
Բախտին ձեռքն երկաթի  
Ծանրացաւ , ո՛հ , իմ վրաս  
Ի վերայ սիրեւեացս :

Դուք վայրե՛ր սրբազան  
Դու խորա՛ն բնութեան  
Յամէն քայլ իմ կեանքիս  
Վկա՛յ եղաք դուք բաղդիս :

Զի ձեր ծոց ես հեղի  
Այս տաս ամ լ՛աւելի ,  
Կսկիծներս ու արտասուք  
Որ խառնէք ի ձեր սուգ :

Այլ ձեր սուգ վաղ կանցնի ,  
Ապա սիւգ<sup>1</sup> գարնայնի  
Կը՛բերէ ձեզ նորէն  
Զեր խինդն ու զուարթ դէմ :

Իսկ մարդուն յոր խեթիւ<sup>2</sup>  
Նայեցաւ երկինք՝ տիւ  
Զ՛աջորդեր գիշերին ,  
Եւ գարուն աշունին :

Իբր ի վայր անջրդի  
Կը քընանայ , յաշխարհի ,  
Որպէս մարդ մոլորած  
Ի բաւիղդ<sup>3</sup> անտառաց :

Մտայոյզ թափառի ,  
Յամեն դի զարնըվի ,  
Առ խարխափ մինչեւ որ  
Զարնէ իր վերջին օր :

Եւ, ախտո՛ս ո՛վ գիտէ  
Յետ մահուան ալ գուցէ  
Բարեկամ և ոչ մի  
Թայցէ զվայրն ուր հանգչի:

Ա՛հ, շիթն՝ որ տերեւէդ  
Երկընքին ցողին հետ  
Ել կաթէ ի գետին  
Ըրփռեալ գօս՝ տերեւին

Ես զայն շիթ կը խնդրեմ  
Բարեկամ աչքերէն  
Երբ փակվի գերեզման  
Անբերրի՛ կեանքիս վրան

Եւ ընդհատ հառաչանք  
Ձոր մայրիկն հերարձակ  
Կարձակէ ի լռութեան  
Էոր և մութ զիշերուան

Եւ տանեացն հայրենի  
Արձագանք սիրելի  
Որ դեռ շա՛տ տարիներ  
Ձիմ անունն զհետ կըրկնէր: ❖

Գ. Ս. Օսեան

Քառ. — [1] Մեզմ հով: — [2] Խեթիւ Ասյիլ, ծուռ նայիլ: —  
[3] Լաբիրինթոս: — [4] Կաթիլ: — [5] Ձորցած:



ՔՈՅՐՆ ՄԵՌԵԱԼ

« Միակ քոյրս էր — կ'ըսէր կոյսըն ողբագին —,  
Միակ եղբայրն զոր ինձ տուած էր երկին.  
Նա հինգ ամօք երթցադոյն քան զիս էր,  
Եւ երբ մեր մայր շատ վաղ մեռաւ թուալ յեթեր  
Անհայր արդէն, նա ինձ եղաւ հայր ու մայր,  
Ո՛հ, իւր պէպէտէն էի ոյր վրայ գուրգուրայր:  
« Նա դեռ տըղայ, ընդունելով այն պաշտօն  
Ձոր տայր իւրեան մեր արխուր բախտ, լուրջ՝ զգօն  
էր և խոհուն, և համատի ընկերներ  
Թեթեւաքայլ երբ կուգային զայն տանել  
Ի պար ի պտոյտ, « ո՛հ, կ'ըսէր նա, քո՛յրս հապա »,  
Եւ կը ծռէր կրկին գըլուխն ի վերայ  
Մի գոգնոցի կամ գլխարկի զոր շինէր  
Ինձի համար, որ խաղայի առընթեր,  
Երբ արամեցնէր զիս մի աղէա մանկային,  
Իսկոյն իւր գոգ կը վազէի լալագին,  
Եւ իւր համբոյրք կը ջնջէին իմ արցունք,  
Եւ ժպիտն անդրէն դառնայր գտնէր զիմ աչկունք:  
« Երեկոյին նա կը կցէր զիմ ձեռներ,  
Ծուռըր դնէի իւր քովիկը աղօթկեր՝.  
Թոթովելով բառերն իրեն աղօթքին  
Եւ իրեն հետ նայելով հոն ուր էին,  
Կ'ըսէր, մայրիկն ու հայրիկը՝ Է ամենուն  
Հայրը՝ Աստուած և մանաւանդ որբերուն:  
Երբ քունն աչերս առնոյր, այլ բարձ չուզէի  
Բաց իւր ծունդէն, և առւօտուն զարթնուի

Իւր համբուրով : » Այսպէս անցին տարիներ :  
 Մի ամուսին ընտրեց ում զիւր տուաւ սէր .  
 Տխուր իւր պէս , թէպէտ բնաւից տայր ծիծաղ :  
 Եւ գրաւական իւրեանց սիրոյն մի չքնաղ  
 Դատրիկ եկաւ ծաղկել յիւրեանց մթին բուն ,  
 Այլ չէր յոգնած ճակատագիրն ապառուս .  
 Մեռա՛ւ իւր ոյր , և միայնակ մընաց ինք  
 Հիւանդագին և սրտահար , որբ մ'ի գիրկ .  
 — Մահու համբոյր մի նմա տուած էր Հիմէն<sup>2</sup> , —  
 Յամառ հազ մի ոգին քաղեր իւր կըրծէն :  
 Հուսկ անկողին ինկաւ ուստի այլ չէլաւ .  
 Տառապեցա՛ւ արտասուելով վաղազրաւ  
 Իւր մանկութիւն , և սուղ միջոցն ուր կարծեր  
 Էր թէ ահա բախտին ճակատ կը ժպտէր :  
 Իւր առաջին ամաց վիշտը ե՛ս էի ,  
 Իւր հուսկ ժամուց տանջանքն եղաւ խելացի  
 Անմեղ աղջիկն՝ որ ճահային կըսէր , « Ե՛լ .  
 « Շատ պառկեցար շատոնց զիս գիրկդ չես առել .  
 « Ես , ա՛լ խելօք կը կենամ , զիս չե՞ս սիրեր » :  
 Ապրդեցաւ արցունք մի գոց աչերէն ,  
 Մինչ իւր հոգին խուսափեր էր շրթներէն :  
 Ա՛հ , չէր ուզած մեռնիլ առանց տեսնելու  
 Ձիս հուսկ նուագ և գրկելու , — զի երկու  
 Օրէ հետէ քովը չէի — և հոգին՝  
 Մերձ ի թռանել՝ բանտարկեր էր ի ծոցին :  
 « Ո՛հ , պարոն , դեռ երեսնամեայ չէր իմ քոյր ,  
 Արդ աշխարհն ինձ անապատ մ'է լրի թափուր .  
 Երբորդ անգամ , ա՛խ , որբացայ , ի՞նչպէս արդ  
 Ապրիմ հապա , յայն քաղցր անուանց զորոնք մարդ  
 Կուտայ այնըց ոյց քով ծընի և կ'ապրի ,  
 Եւ ոյք այսպէս մասունքն են իւր սրտեկի ,

Լոկ ոյր անուեն ինձ ներուած էր երկինքէն .  
 Եւ արդ և զայն կը խըլէ բախտ իմ շրթնէն .  
 Մերկ ծառ մի եմ երկրի վերայ , հողմն երբոր  
 Փըչէ ուժգին , կը կքէ զիս կորակոր ,  
 Եւ չունիմ զոք առնթեր ինձ յոր յենում .  
 Իսկ որքն , աւա՛ղ , ճա՛գ ոյր մրրիկ աւրեց բոյն .  
 Եւ կարտասուէր , կարկեալ կայի իւր խորին  
 Սուգի առջեւ , և յուզեալ էր իմ հոգին ,  
 Ո՛հ , ի՞նչ սփոփ կարէի տալ եղկելոյն .  
 Ե՛ս ալ զգացած էի պարասն այն անհուն  
 Ձոր մահ ի մեզ թողու , չափա՛ծ անդընդին  
 Մութ խորութիւնն որ կը կլնէ մեր սրտին  
 Հատորները , և յոր՝ ապուլ՝ յառեմք մեր  
 Չորցած աչեր , հարցանելով ի զուր « է՞ր » :  
 « Լա՛ց » գոչեցի . լա՛մք , այո , լա՛մք . մահացուք  
 Չունին այլ ոյժ բայց թէ հառաչք՝ արտասուք ,  
 Երբ անծանօթն այն զորութիւն զոր կ'ըզգամք  
 Ի մեր վերայ և զոր սակայն չիմանամք ,  
 Կը զարնէ մեզ . ի՞մ կարող եմք , — բայց եթէ  
 Արտասուելոյ որպէս մանուկ մի առնէ .  
 Լա՛մք և նրմա փառք տամք զի մեզ արցունքի  
 Գէթ չզըլացաւ շնորհն , ու ցօղ ետ սըրտի » :

Ռ. Յ. Պերպերեան

Քառ. — [1] Աղօթող : — [2] Դիր հարսանեաց :



Գ Ա Ր Ո Ւ Ն


Ո՛հ ի՛նչ անոյշ և ի՛նչպէս զով  
Առաւօտուց փշես հովիկ ,  
Ծաղկանց վերայ գուրգուրալով  
Եւ մազերուն կուսին փափկիկ ,  
Բայց չես հովիկ իմ  
Գընա՛ , անցի՛ր սըրտէս ՚ի բաց :

Ո՛հ , ի՛նչ աղու՛ և սրտագին  
Ծառոց մէջէն երգես թռչնիկ ,  
Սիրոյ ժամերն ՚ի յանտառին  
Ըզմայլեցան ի քո ձայնիկ .  
Բայց չես թռչնիկ իմ  
Գընա՛ , երգէ՛ սըրտէս ՚ի բաց :

Ո՛հ , ի՛նչ մրմունջ հանես վըտակ  
Ականակիտ՝ և հանդարտիկ ,  
Քու հայելոյդ մէջ անապակ  
Նային զիրենք վարդն ու աղջիկ .  
Բայց չես վըտակ իմ  
Գընա՛ , հոսէ՛ սըրտէս ՚ի բաց :

Մ. Պէ՛ւիկրաւեան՝

Բառք. — [1] Բաղր : — [2] Փայլուն :



Մ Ն Ա Ս Բ Ա Ր Ե Ա ՚ Ի

Մընաս բարեաւ , որդեակ սիրուն ,  
Քու հօրդ միակ ըսիտիանք .

Ճակատագիրն այնպէս վճռեաց  
Ձի նորա լաստ յարածուփ՝

Յաշխարհիս ծով ՚ի աղայ տիոց  
Միայնութեամբ տատանի :

Ջերկար ուղին հատեալ երթայ  
Նաւահանգիստն յանձանօթ .

Եւ ո՛ր գիտէ՛ ո՞ր մըրըրկաց  
Մընան նմա սպառնալիք ,

Յորոց ըզքեզ զերծ պահպանել  
Եղեն սրտին իւր մաղթանք :

Յարդ շատ եղեւ օտար աստեղց  
Եւ ՚ի ներքոյ և յափունս

Նորա նաւուն յեցեալ՝ ՚ի կողս՝  
Տարուբերեալ շրջեցար ,

Լըքեալ երբեմն հեշտալի դէմս ,  
Եւ զընկերաց քաղցր բարբառ :

Իսկ մինչ յայժմուս գողտր զաւակաց  
Կայտուն ըզքեւ թախչք ոտից

Եւ քաղցրաձայն մըրմունջը՝ մարի՛կ ,  
Մայրի՛կ գոչեն անդադար ,

Թող ըզպապիկն զի երթիցէ, յոր վայր իցէ  
Նախախնամին հրաման:

Տոբ. Յ. Եիսուսեան (Ծերեկց)

Բառք. — [1] Ալէկոծեալ: -- [2] Կռթնիլ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՆ

Մանկո՛ւնք, դարձուցէ՛ք մի քիչ աչերնիդ  
Գէպ յայս մարդն, ահա, որ՝ լուռ, անքըթիթ<sup>1</sup>,  
Երկնից կը նայի և կը սքանչանայ:  
— Բանաստե՛ղծ մ'է նա:

Եթէ իւր նայուածքն հանգչին մի վայրիկ  
Վերայ ձեր ճակտին անմեղ ու քաղրիկ,  
Թո՛ղ ձենէ մէն մի իւր գլուխը բանայ,  
— Բանաստե՛ղծ մ'է նա:

Իւր հագուստն, աւա՛ղ, չէ՛ ճաշակալի,  
Բաճկոնն՝ այնքան հին է որ կը փայլի.  
Մանկո՛ւնք, մի՛ խնդաք դուք անոր վերայ,  
— Բանաստե՛ղծ մ'է նա:

Իւր անշուք խշտեակն է տանեաց մօտիկ,  
Զմրան ցուրտ քամին անդ փըչէ սաստիկ.

Բայց անդ՝ աւելի՛ երկնից մերձենայ.  
— Բանաստե՛ղծ մ'է նա:

Յաճախ չը գտներ՝ սեւ կամ ըսպիտակ  
Մի պատառ հացիկ իւր ատամանց տակ.  
Յայնժամ քերթուածով<sup>2</sup> մ'եւեթ կշտանայ:  
— Բանաստե՛ղծ մ'է նա:

Շըքեղ բընութիւն, թռչունք, ծաղկունք, սէր,  
Գիշերոյ խաւարն և այգուն լոյսեր,  
Ամէնն՝ իւր երգոց մէջ պատկերանայ,  
— Բանաստե՛ղծ մ'է նա:

Երբ փոթորկատանջ հերօք, քիթն ծովուն  
Կ'երթայ, չ'գիտեր ո՞ւր, քայլիւք թափառուն  
Ամէն ոք կըսէ. « Յիմար մ'ալ ահա՛: »  
— Բանաստե՛ղծ մ'է նա:

Գիտէ՛ առանց վիշտ ըզգալու բնաւ,  
Թէ՛ մի օր՝ իւր կեանքն, ո՛վ բաղդ անիրաւ,  
'ի հիւանդանոց պիտի վերջանայ.  
— Բանաստե՛ղծ մ'է նա:

Այլ երբ մահ՝ զոր նա կոչէ անձկապէս՝  
Գայ իւր թեւօք զայն բառնալ յաշխարհէս,  
Պիտ՝ երկինք բացուին առաջի նորա,  
— Բանաստե՛ղծ մ'է նա:

(Կորնէ Տանգուռ)

Աղեֆ. Գ. Փանոսեան

Բառք. — [1] Անշարժ: -- [2] Բանաստեղծական յօրինուած:

Ա Ս Տ ՈՒ Ա Ծ

Մայրիկ , նայէ՛ , ի՛նչպէս սիրուն  
 են այս ծաղիկներ :  
 Կարմիր , ճերմակ և սուկեգոյն ,  
 Գաշտն է լեփ լեցուն :  
 Ի՞նչ ալ անոյշ հոտ ունին , մա՛յր ,  
 Սիրեմ ես զանոնք ,  
 Մին է զմրուխտ<sup>1</sup> , միւսը գոհար ,  
 Գոյն ունին վառվառ<sup>2</sup> :  
 Մա՛յր , ո՞վ արդեօք զանոնք ըրաւ .  
 Ո՞վ ցանեց այսպէս :  
 — Աստուա՛ծ , տըղաս , նա որ տըլաւ  
 Մեզ բարիք անրաւ :  
 Մայրիկ , նայէ՛ , ի՛նչպէս աղուոր  
 են այս թռչուններ ,  
 Ունին փափուկ թեւ գունաւոր ,  
 Հանդերձ փառաւոր :  
 Ճիւղէ ՚ի ճիւղ կը թռչըտին ,  
 Անտառն է բռներ  
 Իրենց ճիւղ ճիւղ , ու երբ կամին՝  
 Կը թեւեն յերկին :  
 Մա՛յր , ո՞վ արդեօք զանոնք ըրաւ  
 Այսպէս գեղեցիկ :  
 Աստուա՛ծ , տըղաս , նա՛ որ տըլաւ  
 Մեզ բարիք անրաւ :  
 Մայրի՛կ , նայէ՛ , ի՛նչպէս պայծառ  
 են այս աստղիկներ .

Կը փայլփլին յերկնից կամար ,  
 Ու են անհամար :  
 Մին քան զմիւսն է լուսագեղ ,  
 Եւ մթութեան մէջ  
 Իբրեւ մէյմէկ վառին կանթեղ ,  
 Քանի՛ են չքեղ :  
 Մա՛յր , ո՞վ արդեք զանոնք ըրաւ .  
 Ո՞վ վառեց այսպէս :  
 Աստուա՛ծ , տըղաս , նա որ տըլաւ  
 Մեզ բարիք անրաւ :

Ռ. Յ. Պէպլեան

Քառ. — [1] (2:—4:—7) Պանկագին բար : — [2] Փայլիլուն :

Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս

Վարդեր ու վարդեր  
 Թերթ ի թերթ փըթթեր ,  
 Ի կապոյտ եթեր  
 Զիւնափայլ ամպեր՝  
 Քայլերուդ առջեւ  
 Սըփուելով թեթեւ  
 Քեզ բընութեան հետ՝  
 Յայս ժամ հեզաւէտ<sup>1</sup>  
 Մընան մեծայոյս ,  
 Ո՞վ քաղցր Արշալոյս : —

Ահա շող ի շող  
 Շուշանաց ի քող,  
 Զիւր ոսկենըշոյլ  
 Վարսեր հոյլ ի հոյլ<sup>2</sup>  
 Ծուփ ի ծուփ իսփիւռ,  
 Թողլով ի զեփիւռ,  
 Եւ մարգըրտայեռ  
 Պարգելով թեւեր՝  
 Նազի Արշալոյս,  
 Երկընքի այն կոյս:

Ահա վառ ի վառ  
 Ճակատուն գոհար  
 Եւ բըբերն անուշ  
 Բըթթելով<sup>3</sup> քընքուշ,  
 Զերկին և զերկիր  
 Գըրկէ սիրալիր  
 Շըրթներուն իւր վարդ  
 Ի ժըմիտ<sup>4</sup> զըւարթ  
 Ծաղկանց թոյր ի թոյր<sup>5</sup>  
 Հեշտից ցօղէ բոյր:

Ահա սոյլ ի սոյլ  
 Թըռչնեկացըն բոյլ<sup>6</sup>  
 Ճըռուողեն ընդ բոյս,  
 Ողջոյն Արշալոյս,  
 Ողջոյն որ զմըռայլ  
 Փոխարկես ի փայլ,  
 Ու զտըխուր երկիր  
 Գործես ցընծալիր,  
 Ոհ, յէից ողջոյն,  
 Արշալոյս, ողջոյն:

Քեզ ամեն ոք տայ  
 Զիւր ձօն նախընծայ.  
 Քեզ՝ ըզսըրբագոյն  
 Քեզ՝ ըզփափկագոյն,  
 Քեզ՝ ամպ, սիւք, վըտակ,  
 Ծաղկունք և սոխակ,  
 Ամէնք տան քեզ գով՝  
 Հալին քո սիրով,  
 Ո՛վ երկնային կոյս  
 Սիրո՛ւն Արշալոյս:

Ո՛հ, դու որ այսպէս  
 Մեր սիրտն ըզնայլես  
 Մեր բըբերն աղօտ  
 Մի՛ թողուր կարօտ,  
 Եերբ գերեզմանին  
 Յաղճամուղ<sup>7</sup> փակվին.  
 Այլ զանուշ քո լոյս  
 Եւ աչաց ոգւոյս  
 Շողջողա՛ ի յոյս,  
 Կուսա՛ն Արշալոյս:

Խ. Ա. Բ. Նար. Պէյ

Բառք. — [1] Հեզ, — [2] Բագմուծեամբ, — [3] Աչք բանալ գոցել, — [4] Ժպիտ, — [5] Գոյնզգոյն, — [6] Խուճբ, — [7] Մուծ խաւար:



ԱՐՏՈՅՏ ԵՒ ԽԱՅՏԻՏ՝

✦ Առտըւանց կանուխ բոյներնին թողած  
 Արտոյտն ու Խայտիտ մէկ ընկեր եղած ,  
 Արեւուն պայծառ ճառագայթից մէջ  
 Երնէին զուարթ հազար ելեւէջ .  
 Չայներնին թողած կ'երգէին հանդարտ  
 Ինչուան որ հասան մէկ դաշտ մը պարարտ :  
 Ափսո՛ս խեղճերուն , հազիւ թէ իջան՝  
 Որտորդին լարած որոգայթն ընկան .  
 Որ բըռնեց դըրաւ մէյմէկ զատ վանդակ ,  
 Դիմացէ դիմաց կախեց պատին տակ :  
 Արտոյտը կատղած ի՞նչ ընելն չիյտէր ,  
 Ըրածն ալ բոլոր պարապը կ'ելնէր :  
 Թէպէտ խեղճ խայտիտն ալ շատ նեղացաւ ,  
 Բայց ուրիշ ճարակ չըլլալն իմացաւ ,  
 Ըսկըսաւ ուտել , խմել ու երգել  
 Եւ վանդակին մէջ վեր վար ցատքըռտել :  
 Արտուտին սիրտն այս բանըս չէր քաշեր ,  
 « Ես ըզբեզ , ըսաւ , խենդ չէի կարծեր  
 Ասանկ նեղութեան մէջ ի՞նչպէս կ'երգես ,  
 Ի՞նչպէս չես ճաթիր աս անիծած տեղս » .  
 Ըսաւ ու զարկաւ գլուխը վանդակին ,  
 Մահը հեռու չէր , փըռուեցաւ գետին :

« Ափսո՛ս քու խելքիդ , խայտիտը կանչեց ,  
 Թէ որ առաւօտանց երգածներուս պէս ,  
 Հիմա ալ մէկտեղ ճայնըդ ճըզէիր  
 Թէ համբերութեամբ հիմա կ'ապրէիր  
 Եւ թէ՛ աւելի լաւ ժամանակուան  
 Յոյսըդ կըրնայիր պահել ինձ նրման » : ✦

Թարգմ.

Գ. Արեւիկա. Հիւսիսագետ

Բ Ա ժ Ի Ն Ք

Քանի մը վարպետ  
 Վաճառականներ  
 Սիրով միմեանց հետ  
 Գործ էին բըռներ ,  
 Լաւ աշխատեցան  
 Քրտինք թափեցին ,  
 Լաւ ալ շահեցան  
 Մեծ փող դիզեցին :

Ատենն եկաւ , պէտք էր հաշիւ տեսնէին ,  
 Եղած վաստակը մէջերնին բաժնէին ,  
 Բայց ո՞ւր գտնեմ ես ընկերներ այնպիսի  
 Որ բաժնուին առանց կըռուոյ վիճմունքի :  
 Այն պարոններն ալ վէ ճմը հանեցին  
 Որ ծայր ճոթ չունէր , կանչն<sup>1</sup> էր ահազին :

Եւ ահա դըրսէն  
 Զայներ կը լըսեն :  
 « Մարդիկ , դուրս ելէք ,  
 Եըրա՛կ կայ , կըրա՛կ .  
 Շո՛ւտ ըրէք , փախէ՛ք ,  
 Մընաք նէ կորա՛ք » :

Պարոններուն մէկը կանչեց ,  
 « Ելէ՛ք տեսնեմք ի՛նչ կայ , ի՛նչ »  
 Միւսն անդիէն աղաղակեց ,

« Առաջ սա իմ հազար ոսկիս տըւէք ինձ » :  
 Մէկն ալ կըսէր , « Սըկէ հունա չեմ երթար ,  
 Երկու հազար է առնելիքս . իմացա՞ր » :  
 Անդին ուրիշ մը կանչւըռտէր « Զէ՛ , չըլար » :  
 « Հաշիւն անանկ չէ՛ » : « Ի՞նչ կըսես՝ պէ աղբար » :

Խեղճ մարդիկը մոռցեր էին  
 Որ բըռընկեր է տըներնին ,

Այնպէս իրենց կըռուին էին ըզբաղած  
 Որ մուխն եկաւ խըղդեց ամէնքն ալ յանկարծ ,  
 Իսկոյն կրակն ալ հասաւ պաշարեց ,  
 Ապրանք ու Տէրերն էրեց առչորեց<sup>2</sup> :

Աս առակն ալ դու չ՛կարդաս առանց խըրատ առնելու ,  
 Շատ մեծամեծ գործերու մէջ վընասն ինչէ՛ն գոյանայ  
 Երբ փոխանակ հասարակաց փորձանքին դէմ կենալու  
 Ամէն մարդ իր շահուն համար հին ու նոր կռիւ կը բանայ :

Գ. Արեւայիս . Այվագեան

Քառ. — [1] Պոռալ , — [2] Այրել :

Դ Դ Ո Ւ Մ

Լըսէ եզրայր , Թէ դըդմենին  
 Ի՞նչ խօսեցաւ օր մը ինքնին .  
 Է՞ր ինչո՞ւ մարդիկ ամէն  
 Անխելքին դըդում ըսին :  
 Է՛հ , ուրեմն՝ ըսել է  
 Թէ դըդումն անխելք է .  
 Քննենք , անխելքն ո՞վ է , ե՞ս եմ ,  
 Թէ մարդիկ են , օ՛ն հաստատեմ :  
 Նայէ մէկ մը տեսակ տեսակ  
 Սա մեծ խմբին ճըմերուկաց .  
 Նայէ մէկ մ՛ալ մարդկանց խելքի  
 Որ ըրեր է դոքա յարդի :

Գէթ մէկ օգուտ իրենց ունի՞ն ,  
Թող ինձ ցոյց տան , եթէ ունին .

Հիմակ շատ լաւ

Միտքըս ինկաւ :

Քեզ զովութիւն մարդկանց ամէն  
Կուտան եղեր ամրան ատեն

Թէ լոկ այդ է

Այդ ալ բա՞ն է :

Բայց իմ օգուտ համրեմ այժմէն ,

Ամէն տեսակ անուշեղէն

Ու կերակուր ես կը լինիմ ,

Թող որ ամէն տեղ կը բուսնիմ .

Եւ ձմերուկէ դիմացկուն եմ

Էւել համեղ , խոշոր ալ եմ :

Քիչ մը դըդու՞մ հոս կանկ առաւ .

Թերեւս զուր կը մեղադրեմ ,

Մարդիկներուն սանկ նանկ կըսեմ ,

Կարելի է տեղս է պատճառ ,

Որ ինձ նոքա պատիւ չեն տար :

Դար ու վեր տեղ մը բուսած

Միս մինակ հոս եմ մընացած

Եթէ երթամ

Ու միանամ

Խառնըւիմ մէջ ձմերուկներին .

Գուցէ մարդիկ ինձ ալ նային

Փորձեմ

Տեսնեմ

Ըսաւ , բրդաւ իր արմատէն

Գըլտոր մըլտոր դէպ վար դարէն

Գալով մըտաւ զէտեղեցաւ

Բայց ինչ վախճան հոն ունեցաւ .

Դըդմին երես նայող չեղաւ

Հոն լըխկեցաւ ոչընչացաւ :

Վ. Կ. Ս. Միմասեան

ՄՈՒԿ ԵՒ ԿՈՎ

Կարդացողի մը տուն մեծցած

Հին գըրքերու կողեր կըրծած ,

Չընչին Մըկնիկ մը կար հըպարտ ,

Որ երթալով օր մ'արտէ արտ ,

Կը տեսնէ կով մը ծանրաքայլ .

« Ա՞ն է եղեր , կըսէ , ժուռ գալ ,

Ինչուան որ դու մէկ մը շարժիս՝

Ճամբուդ կէսը կը տեսնես զիս .

Սորվէ , սորվէ , կով բարեկամ ,

Թէպէտ պըզտիկ ես կ'երեւամ ,

Բայց տես ի՞նչպէս շուտով շուտով

Կ'երթամ կուգամ ամէն ճամբով .

Մեծութենէն բան չելլեր , չէ՛ ,

Ճարպիկ եղիր , ինձի նայէ՛ » :

Մէկ մ'ալ կատուն որ պահուրտեր

Ու կը դիտէր յարմար ատեն՝

Յատկեց վըրան , ցըցուց իրեն

Ի՞նչ աննըման են մէկմէկու  
Զընչին մըկան չափն ու կովու :  
Դուք ալ պարծենկոտ իմաստակը  
Փորձով չափերնիդ կ'իմանաք :

Գ. Աբեեպիս. Հիւրմուգեան



ԷՇ ԴԺԳՈՂ

Շատ խորհեցան թռչունք բոլոր  
Թէ զո՞վ կ'արգեն տէր թագաւոր  
Ոյր ձայնն լինի շատ խոշորկեկ  
Բարձրէն ձայն տալ գիշեր ցերեկ :  
Վերջապէս ընտրեցին  
Ագաւախին սեւածին :

Իչուկ աղբարն այս որ լսեց ,  
Զարմանքն առաւ « օհօ՛ » ձայնեց ,  
Աստուած վկայ կերդնում կրկին  
Եթէ թռչունք ըզեղ ունին  
Զի թագաւոր լինելու համար  
Եթէ խոշոր ձայնի պէտք կար  
Քան զիս հզօր ձայնեղ ո՞վ կար :  
Յիմար թռչունք , թէ չինէիք  
Ի բարձր տեղ ինձ վրանիկ

Պիտի տեսնէիք թէ ի՞նչպէս ես  
Որոտ կը ձգեմ ահեղապէս :  
Ի սաստիկ ահ ու սարսափ  
Աչխարհի առ հասարակ » :  
Խեղճ իչուկ խելք չէր ըներ :  
— Խելք ունէ՞ր —  
Թէ թռչուններու իշխելու համար  
Թեւերու էլ անհրաժեշտ պէտք կար

Վ.Խն. Վ. Տ. Միմասեան



ԶՐԱՂԱՆԻ ՊԱԼԱՍԸ

Տեսա՞ր բընաւ զայն հրաշակերտ  
Որ ըսպիտակ կ'անդրադառնայ  
Ծովուն յալիս կապուտաների  
Որ կը փշրին ավանց վըրայ :  
Հոն Քարրարա (\*) և Մարմարիս (\*\*)  
Եւ ծովազեղ Պրոպոնդիտեանք  
Յըզէն նաւօք կըճեայ լերինս  
Ուր կը յենուն այն ապարանք :

(\*) Քաղաք Իտալիոյ , անուանի իւր մարմարիտնի հանքով : —  
(\*\*) Կղզի ի Մարմարա :

Հարիւրաւոր դարուց շիրմէն  
Արթննալով ոգիք ազգաց՝  
Իրենց գանձերը թափեր են  
Մէջ լուսարձակ այն սրբահաց :

Նաւք պաստառալի մինչ ի կայմ  
Անոր շուքին տակ ընկղմեալ ,  
Այն տեսիլէն յակճիւրջս կան՝  
Արեւելեան անուրջ կարծեալ :

Քան գիտնիական և Դորացի՝  
Քան ըզԳոթաց ձեւս նորանշան՝  
Պարսն Արաբին հոն կը կըցի  
Հայ հանձարոյ (\*) մը ի հրաման :

Ոլորտահիւս լուսանցից քով  
Ի վեր թռչին սիւնք մարմարոյ  
Կը մոլորի լոյս արեւուն  
Բիւր զարդերուն մէջ մանուածոյ՝  
Կապոյտ ծովուն ալեաց մէջտեղ ,  
Անմահական ժողիտ մ'է այն ,  
Եւ ամօթով է երկնագեղ  
Կասդիլիացւոյն իսկ Ալհամայրան (\*\*):

Եւ աստեղաց ի լոյս աղօտ  
Երբ ուրուագիծն իւր օղեղէն  
Կը նկարուի երկնից յոլորտ  
Շուրջ պարփակեալ անտառներէն :  
Կարծես այգ վէմք հոգիանան  
Եւ ի լուսթեան գիշերային

(\*) Այսինքն վսեմ . Յակոբ Պէյի Պալեան :  
(\*\*) Մաւրիտանական պալատ ի Սպանիա :

Դաշնակաւոր երգ կը դառնան  
Զոր երազոտ լըսէ հոգին :

Տեսա՞ր բընաւ զայն հրաշակերտ  
Որ ըսպիտակ կ'անդրադառնայ  
Ծովուն յալիս կապուտաներկ  
Որ կը փշրին ափանց վերայ :

Ո՛չ կիճ է նա , ո՛չ հող՝ ո՛չ վէմ ,  
Այլ մեծազօր Հայ հանձարին  
Մըտածութիւն մըն է վըսեմ  
Հոն տարրեղէն հադած մարմին :

Թ. ԹԷՐԳԵԱՆԸ

Թառֆ. — [1] Ապշիլ , գմայիլ : — [2] Ոլրած :



### Ա Ղ Ջ Ի Կ Ն Մ Ո Ւ Ր Ա Յ Ի Կ

Յուրտ սառուցիկ իրիկուն մ'էր ձրմերան ,  
Զիւն էր ծածկած գիւղին ուղիքըն համայն ,  
Զիւն կը նստէր ամեն ուրեք , վերայ տանց ,  
Զիւն հոս , ձիւն հոն , ո՛չ ոք փողոցն , ո՛չ մի անձ :

Եւ վաղահաս մութին յաղթող վառ ջահեր ,  
 Ոյց շողն ոսկի՝ փեղկերն ի դուրս կը սահէր ,  
 Զիւնին գըծած սըգապատար սլատկերն այն  
 Ոսկեգօծել նըկըրտէին ընդունայն :  
 Եւ հիւսիսի հողմ՝ բունաշունչ կը սուրար ,  
 Հիւզակն ու ծառ առնել տանիլ հետն աւար :  
 Բայց յապարանս ճոխին խինդ էր ամենայն ,  
 Ժպտէր տիկինն , վառէր ճակատ տանուտեառն ,  
 Եւ մերձաւորք և բարեկամք բերկրալից ,  
 Դըրսի գոռմանց , բնութեան ողբոց ունկնախի՛ց :  
 Բնութիւն սակայն ճոխ ի սլատկերս իւր է յար .  
 Ո՛հ , թէ միայն բուք մըւընչէր անդադար .  
 Այդ տխրագին իրիկունան մէջ հէք մի կոյս  
 Անպատասպար ընդդէմ ցուրտին և անյոյս՝  
 Դունէ ի դուռ հիւանդ մօրկանըն ի սէր  
 Տխրամբմունջ ձայնիւ ողբեր կը հիւսէր :  
 Ո՞վ կը լըսէ նրմա , « Աղջիկ մ'աներե՛ս » ,  
 Ըսին շատեր , և շատեր ալ , ո՛հ , ինչպէս  
 Յաւած սրտին վէրքն ուղեցին արիւննել .  
 Ճոխին բերան ի լուտանս է անարգել :  
 Կ'անցնէր նա միշտ , ամօթն ի դէմս , արտօսը յաչ ,  
 Եւ կը յուսար գտնել իրեն օգնող աջ .  
 Կ'անցնէր նա միշտ , և մուրրած էր արդէն ,  
 Յուրտ հոգն ինչպէս սուրար , դառնար , գար նորէն .  
 Բայց նա գիտէր գոնէ թէ ուր իրեն անկ  
 Երթալ , բաղխիլ , յո՛ր աւերակս առնուլ կանգ :

Անցաւ կէս ժամ , ժամ մի անցաւ , և դեռ նա  
 Ողբայ , հեծէ , քարերէն հաց կը մուրայ ,  
 Եւ ուժասպառ կ'ընկնի ահա տան մ'առջեւ ,  
 Գլուխն ի դրան , ձեռքն ի յերեր , սիրտն ի հեւ ,  
 Որպէս ի մայր կամ ի խնդիր օգնութեան .  
 Բայց թէ մարդիկ չ'օգնեն , երկինք պատրաստ կան .  
 Հո՛ն հէքն այդպէս անպատասպար և անօք ,  
 Այդպէս նետուած ցուրտին բուքին անողք ,  
 Մընաց երկար , և հոգն դադարած էր յայնժամ ,  
 Զը խըռովել թերեւս խաղաղ քուն մ'այնքան :  
 Ըզրօսասէրք՝ որ քամահէն ձիւն ու սառ ,  
 Եւ բուռն հողմաց դէմ կուրծք մ'ունին հաստ պատուար :  
 Անկից անցան գիշերն , դառնալ յիւրեանց տուն ,  
 Եւ տեսան հէքն խաղաղութեանըն ի քո՛ւն . . . .  
 Զորքն ի զորք , զոր մարդկութիւն կը խըրկէր  
 Անգութ մարդուն զոհըն ի հող ամփոփել :

Ե. Տէվլէքեան

ՍՐԲՈՒՇԻ ՄԱՐԱՊԵՏ

Անմահ էս , ո՞վ դու կին ,  
 Քեզ բիւր երանի ,  
 Դագաղիդ մէջ հանգչէ  
 Իբրեւ յօրանի :

Մըրա՛փէ , քունդ անուշ ,  
 Մանկունք խուռներամ  
 Թող կապեն վեհ ճակտիդ  
 Պըսակ անթառամ ,  
 Եւ թող վարդ թափթըփեն  
 Հրեշտակներ գոթիդ :  
 Լուսոյ մէջ ընկղմի  
 Մաքրափայլ հոգիդ :  
 Ո՛հ , թէ ինձ ալ տրուեր  
 Քընարս լարէի  
 Ներբողեան հիւսելու  
 Քեզ , ո՛վ Սրբուհի .  
 Եւ սակայն ես ոչ սիրտ  
 Եւ ոչ երգ ունիմ .  
 Եւ մատանցս անհըլու  
 Լըռէ քընարն իմ .  
 Քայց ի՛նչ փոյթ թէ գեղջուկ  
 Քընարս է լըռեր  
 Կողբայ քեզ կին ուամիկ  
 Թող լըսեն դարեր :  
 Ժամուն կոչնակները ,  
 Ինչո՞ւ կը չալեն ,  
 Ինչո՞ւ խասգեղ կուգան  
 Որբերը լայեն .  
 Փրկիչի տըղաքներ ,  
 Ի՞նչ սուգ էք մըտեր ,  
 Ինչո՞ւ իրար կանցնին  
 Վարդապետ , տէրտէր :  
 Մէկդի կեցէք քիչ մը  
 Թողէք ներս մտնեմ ,

Ի՞նչ կայ , ո՞վ է մեռեր  
 Աչքովըս տեսեմ .  
 Հիմա խելքիս կուգայ .  
 Ի՛նչ Մարապե՞տն է .  
 Մի՛ , ո՛վ Ժամկոչ , ճաղը  
 Վեր մ՛առներ գետնէ :  
 Չէ՛ , չեմ թողուր որ զինք  
 Տանին մեր թաղէն ,  
 Չեմ թողուր որ ամբիծ  
 Սրբուհիս թաղեն :  
 Ե՛լ , Սրբուհի , ա՛ղջիկ  
 Ե՛լ , աչքերդ բաց .  
 Ա՛խ , դուն քուն ես , գիտեմ ,  
 Թարթիչներդ խըփած .  
 Ե՛լ , մի՛ թողուր որբերդ  
 Անտէր անտէրունջ  
 Նայէ՛ ի՛նտոր չորս դիդ  
 Կուլան անմրուունչ :  
 Է՛յ վախ , որո՞ւ կըսեմ ,  
 Թըռեր է հոգին  
 Չեռքերը խաչածեւ  
 Մալեր են կուրծքին —  
 Լացըս ի՞նչ խեր կընէ ,  
 Պարսպ աշխատանք .  
 Նոր հարսի քօղքի պէս ,  
 Առեր է պատանք  
 Ես եմ որ ցից զարկի  
 Խող կտրած պառաւ ,  
 Մահը զիս հոս թողուց  
 Էկաւ քեզ տարաւ :  
 Խե՛ղճ կընիկ ո՞ւր գացիր

Պէտք էր որ հիմակ  
 Քուկին չորս դիդ ցաթեր  
 Արեւ արեգակ :  
 Պէտք էր որ աչքըդ բաց  
 Փառքըդ տեսնայիր .  
 Աշխարքէն կշտացած  
 Սեւ խող մըտնայիր .  
 Զըսիր , շատ կանուխ է  
 Ապրիլ կուզեմ ես :  
 Կեցիր , ո՛վ մահ , մեղք է  
 Զատուիլ որբերէս :  
 Անուշ դառնուկ վիզըդ  
 Տուիր խաղաղիկ ,  
 Ճըղակոտոր եղար  
 Անթառամ ծաղիկ :

Մ. Յովհաննէսեան



# Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

ԱՌ ԱՐԺ. ՅՈՎԶ. ԱԻԱԳ ՔԱԶԱՆԱՅ ՄԿՐԵԱՆ

Որդեկորոյս Հայր

Գարնան զուարթաբեր առաւօտ է , Ծաղկազարդի տօն էր . մինչդեռ աշխարհ կը ծաղկազարդէր , քո ծաղիկդ խամրեցաւ , ո՛հ , և մինչ մանկտին ձիթաստանեայց լերան վրայ Ովսաննայ կ'երգէր , մինչ եկեղեցին կը հրճուէր , դու Յակոբիկդ կու լսաւ և ինձ գոյժ կուտաս , որ իբրեւ զՀայրդ կը սիրէի գինքն , և ո՛վ չէր սիրէր այդ աննման Հայ զաւակդ , որ իւր ամեն ազնիւ ձիրքերով սիրելի եղած էր ամենուն : Եւ գիտեմ , դու անհնարին կը վշտակրիս և կը խռովիս թէ ինչո՞ւ համար չուտ խամրեցաւ նորաբոյս գարնան ծաղիկդ : Դու կը հաւատաս՞ , Հայր , թէ ծառերու և ծաղիկներու զարդարիչ մշակը՝ երկնից նախախնամութիւնն է . և նա է որ մահկանացուաց աշխարհէն կը տեղափոխէ անմահութեան աշխարհին և դրախտին մէջ կը տնկէ . ու ո՛վ կարող է կամ իրաւունք ունի նախախնամողին ձեռք բռնել , որ իսկապէս ծաղիկներուն դարմանիչ տէրն է :

Մի քանի օր առաջ զՅակոբիկդ տեսայ , օրահասին մօտ էր , նա գիտես թէ կուուէր իւր անձին դէմ և երկնից դէմ կը սգորէր . հոգին ներքուստ կը հեծէր ,

չրթունքները կախկախեցնուի կը պաղատէր. «Տէ՛ր իմ, կ'ատէր, դեռ մատաղ մանուկ եմ, նոր եկայ աշխարհը, թող որ տեսնամ թէ ի՞նչ կայ. ես լոյս կը սիրեմ, առաքինութեան ասպարէզ նոր մտեր եմ, ի բոլոր սրտէ՛ յառաջդիմութիւն կը սիրեմ. ո՛հ, մրցանակս մնաց, թոյլ տուր ապրիմ, նպատակիս հասնիմ, մրցանակս առնում և ապա մեռնիմ»: Յառաջդիմութեան սիրահար Յակովբ, ա՛հ, մինչեւ քու տագնապիլ և մահուն օրը գիր սիրեցիր, ու գրիչ սիրեցիր և յառաջդիմութեան կարօտով մեռար: Յակովբին գրիչը՝ ձեռք տուէք, այնպէս գրէք ի գերեզման. թո՛ղ երթայ Նրկնից դպրութեան մառանը, հրեշտակներու հետ պարապի, երգէ ու գրէ:

Հա՛յր, կաղաչեմ, Հայրիկէն ողջոյն տուր Յակովբիդ, ես չեմ կարող ժամանել և չեմ հանդուրժել նորա դագաղը տեսնալ: Համբուրէ՛ այն պայծառ ճակատը, որ յառաջդիմութեան նշան կուտար և մահուան ժանտ ձեռք եղծեց զայն: Համբուրէ՛ այն գրասէր աչերը որ ընթերցմանէն լուսանուաղեր էր. և գիտեմ թէ քանի՛ անձկութեամբ կ'սպասէր, որ իւր վատակաւոր մատանց երկասիրութիւնը (\*) տեսնայ և այնպէս մեռնի և միթէ՛ ուխտե՞ր էր, Հայոց մանկուոյն ընծայ մը տալ և մնաս բարով ասել:

Սորա համար, հա՛յր, քո վիշտն անկշիռ է և ո՞վ կարո՞չ գքեզ և քո ցաւերդ սփոփել:

Այլ մխիթարեա՛ց, մխիթարեա՛ց, դու Քահանայ Տեառն ես, Քահանայ ես Քրիստոսի եկեղեցւոյն, անմահութիւն և արքայութիւն կը քարոզես, ձեր մեծ

(\*) Նախաշախտի գիտութեանց և արուեստից:

կոչումն է, որ սգաւորները մխիթարես: Ուստի գնա՛ սեղանւոյն առաջ զոր կը պաշտես դու, քու ձեռներդ վերամբարձ տարածէ՛, լի հաւատով գոչէ՛ Ոսկերերանին վերօրհնութիւնը:

«Փա՛ռք քեզ, Աստուած, փա՛ռք քեզ, յաղագս ամենայնի»: Դարձի՛ր ի տուն, սփոփէ՛ Յակովբին սգամեռ մայրիկը, որ քան գքեզ առաւել կ'աղէկիցի՞ և կը մորմոքի. զի մայր է, և մօր գորովն անհուն է:

Վշտակից ձեզ  
Խորմեան Հայրիկ

1876 Մարտ 28

Քառ. — [1] Կնքասցնել, — [2] Սիրտը երիւ, կսկծալ:

ԱՌ ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Հա՛յր Շնորհափայլ

Ես գաւառին մէջ ծնաք որ այդքան շատ ունիք եռանդ և աւիւն<sup>1</sup>, և այն որչափ բան գիտէք հայութեան վերաբերեալ: Կը շրջիք կը շրջիք ու միշտ նոր բան մը կը գտնէք, նոր համ մը կ'առնուք, նոր հոտ մը կը բուրէք:

Ձեր զրկած գիրքն է իրաւցնէ՛ համով հոտով լիք համն անուշակ՝ Արտամետու խնձորին փափուկ կաթ-

նորակ , հոտն անուշահոտ ; ուռցուն , գաղձուն , ձի-  
թեւեղյն :

Ձեր ոճին մէջ Հայոց կուսակցական դարերու մո-  
գութիւնն ու դիւթութիւնը<sup>2</sup> կայ , ձեր զգացումներն  
ու մտածութիւնը՝ քրիստոնէական դարերուն սրբու-  
թիւնն ու կուսութիւնն ունին :

Գլխացող առուններէն , խոնաւ հողերէն , թուփին  
ու տերեւին մէջ սուսափող հովէն կը քաղէք արտօսը  
ու հառաչ — մնջիկ աղանւոյն աղու մրմունջներն .  
աղու Եղիշեսյ նախանձընդդէմ պայքարաւ :

Դուք ոչ իբրեւ բնագէտ ու բնալոյծ կը պտըտիք  
ու կը դատէք ծառն ու քարը , հողն ու ջուրը , դուք  
հոգի կը տեսնէք ամեն բանի մէջ . և եթէ բան մը հո-  
գի չունի՝ դուք հոգի կուտաք անոր :

**Գ. Ս. Օսեան**

Բառք. — [1] Եռանդ : — [2] Հմայութիւն , կախարհութիւն :



ԱՌ ԳԵՐԱՊՍՏԻ ԱԻԱԳ ՔԱՅԱՆԱՅ Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐԵԱՆ

Տէր Հայր ,

Ձեր շնորհալի դատեր Համապիւռին հիւանդու-  
թեան , մահուան և թաղման օրերուն գտնուեցայ առ  
Ձեզ , բայց գիտնալով ձեր առաքինութիւնը , Ձեր ար-  
դէն վշտակրութեան վարժութիւնը , և Ձեր խաչակիր

պաշտօնին հետ՝ կեանքի ճախորդութեանց , ցաւոց ,  
չարեաց և չարչարանաց առջեւ կուռ արիութիւնդ ,  
որոց կը տանիս քրիստոնէաբար և օրինակելի համբե-  
րութեամբ , ի՞նչ կրնայի խօսիլ ձեզ :

Դուք Աւետարանը գիտէք , Աստուածաշնչէն ներ-  
շնչեալ էք , յաւիտենական կենաց բանին աշակերտ , և  
աշխարհի յաղթող զօրագլխոյն կամաւորն ու պաշտօն-  
եայն էք . սիրտ ունիք , միտք ունիք , հոգի կը կրէք ,  
կ'ուսուցանէք , կը հաւատաք , կը դիտաք և կը մխիթա-  
րէք :

Նւ , ինչպէս առատ էք դուք Ձեր բարեկրօնու-  
թեամբ այդքան առաքինութեանց մէջը , նոյնքան ա-  
ռաւելութեամբ կը փոխարինուիք նաեւ ամէն առաքի-  
նասէր դասերէ . ամէն անգամ երբ պատճառ ունեցած  
էք լալու , հազարաւոր ականոցիք իրենց արտօսքներ  
խառներ են ձեր լացին , հազարաւոր սրտեր վշտակցած  
են Ձեր վշտակիր սրտին :

Կարեկցութիւն՝ սիրտիանք մ'է ցաւ ունեցողին , և  
բարեկամին արտօսնքը սպեղանի է խոցեալ հոգի-  
ներու :

Կ'ըսեն թէ կղերն անկարեկից է , մանաւանդ կու-  
սակրօն կամ ամուրի կղերը : Սո՛ւա է : Միթէ քարէ՞ն  
ծնած է նա : Ո՞չ ապաքէն մօր մը ստինքէն սնած է ,  
անոր արիւնն ու կաթն կեանք տուած են իրեն . քոյ-  
րերու և եղբայրներու խանդաղատանքը տեսած է . իր  
տանն ու դրկիցին , բարեկամաց ու ազգականաց բերկ-  
րանքն ու ցաւերը կրած է . մանաւանդ երբ ժողովըր-  
դեան մէջ ապրած ոք է , ծնողէ մ'աւելի ընդարձակ  
և խոր կ'զգայ նա ցաւն ու վիշտը :

Ես մանուկ էի , և , երբ մեր այգեստանեայց նորա-  
տունկ խաղողոյ որթերը կը յօտէին , կաթիլ կաթիլ  
զուլալ ջուր կը կաթէր կտրած որթէն . մայրս կ'ըսէր  
թէ « Այս որթին մայրը , խաղողին կոճղն է կուլայ ,  
անոր արտասունքն է որ կը թափի , իր տղան կտրելուն  
համար : » Երբէք չեմ մոռնար այս գթասարտութեան  
քնքոյչ բարոյականը . միշտ կը յիշեմ այս գորովական  
մայրական դասն , երբ կը տեսնեմ հօր մը և մօր մը  
աչքի առջեւ ինկած իրենց զաւկին դիակը :

Միթէ այդ որթի փայտէ աւելի անզգայ է կրօնա-  
ւորի մը սիրտ . ոչ , ոչ , Տէր Հայր , սրտին երկու վի-  
ճակ կայ , երբ յանհունս կը զգածուի զգայուն սիրտ  
մը , կամ չափազանց փղծկելով կ'արտասուէ ու ցաւա-  
գին ողբեր կ'արտասանէ , կամ իր կսկծանաց խորագոյն  
ծւկին մէջ կ'ընկղմի , աչքերը կը ցամքին , լեզուն կ'ըն-  
դարմանայ , և զգայնութիւնը կը հեղձնու : Բայց ան-  
զգայ լինել անհաւատալի է : Ես ի Քեզ նայելով , այս  
վերջին վիճակն ունէի , դեռ այսօր կցկտուր քանի մը  
տող աւասիկ կը գրեմ Համասփիւռիդ յիշատակին , չը  
հանդուրժելով խօսիլ ձեզ բերան առ բերան , այլ  
սրտէ ի սիրտ , ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ մխի-  
թարութիւնը մաղթելով թախճագին ծնողական Ձեր  
սրտի խաչակիր Տէրաէրիդ , և խաչաչարչար Տիրուհւոյդ :

**Գ. Վ. Մուանճեանց**

Գուգիլունճուր , 1884 Յուլիս 2

ԱՌ ԳԵՐ . Տ . ԽՈՐԷՆ ՆԱՐ-ՊԵՅ ՍՐԲԱԶԱՆ

Գերայասիւ Տէր ,

Այն հանճարի և եղբայրսիրութեան արտափայլում-  
ները՝ ճակտի և սրտի ճառագայթներու այն շքեղ  
միացումը որով կը սաւառնիք , կը գրդեն զիս Ձեր  
Սրբազնութեան դիմել . Ձեզ՝ յորում տնանկին՝ հաց և  
դիակին՝ կայծ տալու կազմ հոգի մը կը վառի . Աս-  
տուծոյ տաճարի բուրվառ մը , անդնդոց մէջ կանգուն  
լսալտեր մ'է այն :

Գերազատիւ Տէր , Դուք Քրիստոսի ճառագայթը և  
միանգամայն հանճարի թեւն ունիք . կոյր մը չէ Ձեզ  
դիմողն , որ աչերը բանաք , այլ մէկն որ ճակտին վրայ  
սեւ ամպ մ'ունի . հիւզի մը հառաչն է այն , հոն ուր  
վառարանն ամայի է և սիրտը կը մխայ , հոն ուր  
կեանքը կը լռէ և քնարը կը հեծկտայ :

Շատ անգամ հանճարի փոթորկին մէջ խարխուլ  
հիւզի մը տախտակն կը տարուբերի լոկ . երբ այն փո-  
թորիկը կը դադրի աղետալի վերջալուսի մը մէջ վայրի  
ծառէ չոր տերեւ մը կ'լյնայ . այն տախտակը անյու-  
շութեան հողակոյտը յարդարող ցուրտ թի մ'էր , և  
այն տերեւը դուցէ համաստեղութենէն ինկնող աստղի  
մը շուքը :

Ի՛նչ , ի՛նչ հանճարներ հիւզին այն քասոսային սեմին  
վրայ խամրեցան կամ մարեցան : Հասարակաց գերեզ-  
մաննոցներուն մէջ հողակոյտներ կան , որոնք հրա-  
բուղիսներ պիտի ըլլային . բայց կայծը սրտի թանձր  
խաւարի մէջ առանց երբէք հրահրելու թաղուած է .

հանձարը վճին մէջ գանկ մը եղաւ առանց մարդկու-  
թեան եթերին մէջ գիտաւոր մ'ըլլալու :

Ես ալ այս սեմին վրայ ժամանակէ մ'ի վեր կը դող-  
դողամ կամ կը սլլլամ առանց հանձար մ'ըլլալու ,  
այլ մարդկային յեղափոխական հրաբուխին բոլորտիքը  
դեգերող արիւնած աչք մը , որ անոր կայծերը կ'ընդ-  
նշմարէ՝ իւր յօշոտած զոհին արեան կայլակներն դի-  
տող վագրի մը սլէս . ես կ'ուզեմ այն յեղափոխական  
հրաբուխէն՝ այն սիրոյ հնոցէն՝ այն մարդկութեան  
արշալուսէն՝ Գողգոթայէն ձգտիլ մինչեւ այն քառսը՝  
այն դօս արմատը՝ այն մարդկութեան վերջալոյսի  
տժգոյն հորիզոնը՝ հիւզը :

Ա՛լ բաւ հողէ կանթեղի մը հետ հսկեցի առանձինն ,  
ալ բա՛ւ սրտիս կայծերովը աստղերուն հետ ընդհարե-  
ցայ անձայն , ալ բաւ քրտանց՝ ճակտիս վրայ սառիլը  
զգացի . կը նետեմ ոտքս ահա դուրս այն նսեմ սեմէն  
և նախ ձեզ՝ սիրոյ պաշտօնէիդ կը դիմեմ :

Ձեր Սրբազնութիւնը նշանաւոր առթիւ մը համա-  
կրական տեսակցութեան մը պատիւը ինձ տալէ զատ  
երջանկութիւն մ'ալ ներշնչած է որ կը նմանի խղբուկ  
սրտի մը արձագանք մը տալու . ասի խոստում (\*) մ'է  
որուն քաղցր պահանջումը պատեհ առթի մը վերապա-  
հած էի . ահա առիթը ինձ կը ներկայի :

Ներեցէք , Գերապատիւ Տէր , այն հրաբուխի սրտին  
որ Ձեր վսեմ քնարին շուրջը կը դեգերի և կը պատ-  
րաստուի Ձեր սրտին մէջ շաղ մը և շիթ մը թափել :

(\*) Գեր . Նար . Պէյ Սրբազան իր հեղինակութիւններն հրատարակելու  
խոստում ըրած էր : Դուրեան զայդ խոստում կ'ակնարկէ :

Ընդունեցէք , կ'աղաչեմ , Գերապատիւ Հայր , իմ  
կանխայայտ և ամենախորին մեծարանացս հաւատին :

Պ. Դուրեան

22 Յունվար 1871



ԱՌ ԱՁՆՈՒԱՇՈՒՔ ՏՕՔԹ . ԹԻՐԵԱՔԵԱՆ ԷՖԷՆՏԻ

Ազնիւ Տէր ,

Խորին հաճութեամբ կարդացի Արեւելքի նախորդ  
թուով հրատարակեալ Ձեր ուշագրաւ մի յօդուածն  
վերաբերմամբ Այբբենարանի , և ներեցէք ինձ որպէս  
զի հրապարակաւ յայտնեմ ձեզ իմ ջերմագին գոհու-  
նակութիւնն առ այն , և այս առթիւ , նաեւ վասն Ձեր  
տքնութեանցն , զոր այնքան խնամով կը նուիրէք կըր-  
թական խնդրոյն , զոհելով Ձեր թանկագին ժամերը :

Ձեր համեստութիւնն վերաւորելու երկիւղն եթէ  
չզգայի , պիտի փութայի շատ բան գրել և թուել Ձեր  
անզուգական ծառայութիւններն , որ գուցէ բազմաց  
անձանօթ են . բայց Դուք , ազնիւ Բարեկամ , քաջ դի-  
տեմ , թէ կը ծառայէք ոչ թէ փայլելու , այլ Ձեր ազ-  
գասիրական սլարտականութիւններն եւեթ կատարելու  
համար , յորում է Ձեր ճշմարիտ փառքն ու արժանիք :

Արդարեւ չիք ինչ այնքան հաճելի , քան զկա-  
տարուն մն սլարտականութեան , ոյր քաղցրութիւնը կ'ըզ-  
գան ճշմարիտ սկզբունքի ծառայող պարկեշտ և անչա-  
հախնդիր անձինք . և անոնց որ ի փոխարէն կ'ընդու-

նին չարանախանձներու բարբառնջանքն և չհասկցող ու չգնահատողներու նախատինքը, չեն հասնիր, վասն զի իրական արժանիքը ոչ իւրիք կը նսեմանայ, և ճշմարիտ ծառայութիւնը կ'օրհնուի ապագայէն:

Երանի՛ այնմ, որ վասն ապագայի կը նախատուի ներկային մէջ:

Ինչո՞ւ զարմանալ. միթէ ամեն մեծ մարդոց համար այսպէս չէ՞ եղած. բայց նոքա յաղթած են իրենց արհամարհանօքը, որ յատկանիչ է մեծ մարդոց:

Այս պէտք է լինի կանոն այն ամեն ազգային գործիչներու, որ կը ծառայեն ոչ թէ փառք մուրալու, այլ կատարեալ անշահախնդրութեամբ և անձնուիրութեամբ իւրեանց ճշմարիտ ազգասիրական պարտականութիւնը կատարելու համար, և յաջողած են:

Այս պայմանաւ գործեցին և յաջողեցան Սովետաց Խնամող և Ուլնիոյ հրկիզելոց Նպաստամատոյց մեղրու ջան Յանձնաժողովք, Կեդր. Վարժարանի Խնամակալու թիւն, Բերայի Թաղ. Համախմբութիւն, և կը գործեն ու փառաւորապէս կը յաջողին Արմաշու Գպրեվանուց համակրելի Խնամակալութիւնն, և Ազգ. հիւանդանոցի Ազգային Բարեբար Հոգաբարձութիւնը, ինչպէս կը գործէք նաեւ Դուք, աղնիւ Բարեկամ, առանց բնաւ կարեւորութիւն տալու անարժէք դիտողութեանց, ոյց նպատակն է նախանձ և գժուձ շահեր:

Յարատեւեցէք ուրեմն, վասն զի հասկացողներու և գնահատողներու համակրանքը կատարեալ է:

Մ. Գաբամանեան

Ազնիւ Վահան,

Ստացայ, սիրուն նամակիդ հետ, մտացդ երախայրիքն, ՄՐՄՈՒՆՔԻ, զոր ի լոյս հանած ես գեղեցիկ ճաշակաւ: Շնորհակալ եմ այն աղնուական զգացմանց համար որովք համեմած ես երախտագիտութիւնդ առ դաստիարակն քո: Ա՛յնքան ուրախ եմ քո այս մտաւոր գործունէութեանդ վրայ որքան եմ միշտ ի լուր կամ ի տես Հայկական Կրթարանի յիսուն և վեց ուսումնաւարտից օրըստօրէական յաջողութեանց յիւրօքանչիւր ասպարիզի: Նւ քան զայս ի՞նչ մեծ մխիթարութիւն ինձ՝ տեսանել զիմ սանունս տակաւ պատուաբեր հանդիսանալ իւրեանց վարժարանի յիշատակին, լինելով օգտակար անդամ մեր բազմակարօտ ազգին:

Աշխատութիւնդ կարդացի ծայր ի ծայր, և ահա ինչ որ տեսայ ես ի նմա. բարի սիրտ, ազնիւ ոգի և օրինակելի խոնարհամտութիւն՝ նորափետուր հանձարոյ մը թեւոց տակ ի հանդէս բերուած: Նթէ՛ ըստ լեզուի և եթէ՛ ըստ տաղաչափական կանոնոց յաջողութիւնդ զոր կը տեսնեմ՝ ճշմարիտ խօսելով՝ անակնկալ էր ինձ. եռանդն որ կ'արժարծի ի քեզ՝ վստահ եմ թէ պիտի առաջնորդէ քեզ ի մեծամեծ յաջողութիւնս:

Խնամքն զոր տարած ես Հայերէն լեզուի զոր « կը խօսէին մեր նախահարք », որպէս կը գրես, գովելի է յոյժ: Գեղեցիկ լեզուաւ, մաքուր հարազատ հայերէնիւ գեղեցիկագոյն կը լինին գրուածք: Առաւելագոյն խնամ տար ուրեմն մեր չքնաղ լեզուին՝ յառաջիկայ գործոցդ մէջ, որք տարակոյս չունիմ թէ պատուաւոր տեղի մը

պիտի նշանակեն քեզ ի շարս Հայ դպրութեան ակա-  
նաւոր աշխատաւորաց: Դպրութեանց ազնուագոյն ճիւ-  
ղին զհետ լինելով՝ ցոյց տուած ես այս առաջին յաջո-  
ղութեամբդ քո փայլուն ապագայն, ընդ որ ուրախ  
պիտի լինի քո հայրն, և պիտի բերկրիմ ես յանհունս:

Ողջագուրելով զքեզ լի համակրութեամբ,  
Մնամ քեզ միշտ բարեացակամ

Յ. Գուրգէն

3 Փետր. 1890  
յՕրթաբէոյ

ԱՌ Պ. ԱՆԴՐԱՆԻԿ ԹՕՉԱՅՃԵԱՆ

Ազնիւ Անդրանիկ,

Շնորհակալ եմ քեզմէ: Վսեմ թուղթդ, իբրեւ  
ապագային հորիզոնէն ծագած մի զուարթ ճառագայթ,  
իմ մռայլամած ճակատս լուսաւորեց, և խօսքդ՝ անոյշ  
և սրտաբուզիս՝ տրտմալուռ հոգւոյս խորշերուն մէջ  
ապրդեցան իբրեւ մի բարբառ երկնային մխիթարութեան:

Մինչ իմ շուրջ զատամուռս կը կրճէ խաւար, մինչ  
տգիտութիւն կը հալածէ զիս, և կը խածնէ զիս ապե-  
րախտութիւն, օ՛ճ գրութան, քու սիրտդ կու գաս ըն-  
ծայել ինձ, քա՛ղցր ապաւէն:

Սիրոց պատկերն ես որ կը ժպտիս ինձ, երբ կը խո-  
ժուի ինձ ատելութիւն սեւադէմ. և մինչ անցեալն՝  
կոյր և տգէտ՝ մագիլ կը նետէ յիս, դու, ապագային  
ներկայացուցիչ, բարեկամական ձեռն մի կը կարկառես  
առ իս:

Շնորհակալ եմ քեզմէ:

Մեծ հոգի մ'ես ամէն վսեմութիւններով կազմեալ:  
Ամէն մեծ գաղափար, ամէն մեծ զգացում մուտ ունին  
հոգւոյդ մէջ, ինչպէս մեծ տաճարի մի մէջ ամեն ճա-  
ճանչք երկնից:

Հոգիներ կան զորս Արարիչն կը յօրինէ մասնաւոր  
մի տարիմամբ և նպատակաւ, և զորս գոգցես չեւ  
արձակած յերկիր՝ կը սիրէ առ իւր պահել յերկինս  
անդ առ ժամանակ մի, իբր զմայլած յիւր ձեռակերտն:  
Աստի՛ այն երկնային ճաճանչն որ թուի թրթռալ այդ-  
օրինակ արարածոց ճակատուց վերայ. աստի՛ այն հզօր  
տիպն տեսլական գեղեցիկութեան զոր յինքեանս տա-  
նին այդ հոգիք. աստի՛ դարձեալ այն յափշտակու-  
թիւնն անբացատրելի որով նոցա աչկունք՝ անտարբեր  
երկրայնոց՝ յար յերկինս պլուցեալ կան խոհալից:

Այս հոգիներէն ես դու

Միտքդ արծուի մի է նորապիտուր որ արդէն կը խո-  
յանայ, սիրտդ՝ վարդ մի նորարողբոջ որ արդէն իւր  
բուրմամբն կ'օծէ զայերս:

Կը սիրեմ զքեզ. յաճախ զմայլած եմ քո վերայ,  
երբ դիտած եմ պատանեկան միտքդ վաղահա՛ս ծանր  
ու խորին խոհիւք, երբ մատաղ հոգւոյդ հրաթեւ սը-  
լացքն եմ դիտած ի գեղեցիկն, ի բարձրագոյնն, յե-  
թեր, յանհունն... Անդունդք կը յանկուցանեն զքեզ,  
անսահմանութիւնն կը յափշտակէ զքեզ: Պատանեկան  
անամպ ճակատուդ ետեւ արդէն իսկ փիլիսոփայի մի  
մտածութիւնք կը յուզին: Մուսայից փաղաքշեալ զա-  
ւակ, նոքա իւրեանց քնարն տղայական ձեռացդ յանձ-  
նեցին իբրու խաղալիկ:

Երջանիկ և հպարտ եմ որ բախտն ունեցած եմ նը-


պատեւելու մի այդպիսի հոգւոյ փթթման , մի այդպիսի հանձարոյ նախկին թռչանաց : Մի գեղեցիկ ու մսիթարիչ տեսարան է դաստիարակին համար տեսնել թեւածիլ զիւրեւ , ազատ օդոյ՝ լուսոյ՝ միջոցին մէջ՝ հանձարոյ նորաթեւ թիթեռանց որոց օգնած է խորտակելու զիւրեանց պատեանն :

Եւ երբ կը տեսնէ թէ կոյս , անբիծ և նոր հոգիներու խորոց մէջ յիշատակ մ'ունի , երբ այլք կը մոռնան զինքն , կը մսիթարի մարդոց խստասրտութեան , ապերախտութեան վերայ , և աչքն յապագայն՝ կը շարունակէ քայլել , ցորչափ իւր ոտից վէրայ ուժոյ մի մնացորդ կը գտնէ :

Թուղթդ պիտի պահեմ անկորուստ իբրեւ կենաց անապատին մէջ փթթած մի երկնաբոյր ծաղիկ : Օրհնեա՛լ ինիս դու :

Ռ. Յ. Պէրպլեբան

1876 Օգոստոս



ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՏՈՔԹԷՕՐ ՏԻԳՐԱՆ ԷՖ. ՓԷՇՏԻՄԱԼՃԵԱՆ

Ազնուաշուք Տէր

Երկասիրութիւնդ ախորժանօք կարգացի . գրել ընտրած նիւթիդ վրայ հմտութիւնդ կատարեալ է : Աշխատութեանդ վրայ խօսիլն ամենուն ըրածն և ընելիքը կրկնել է , այսինքն է հիւսել դրուատիք վասն գիտնական գործոյդ օգտակարութեան , ոճոյն գեղեցկութեան , բացատրութեանց ճշդութեան և ճոխութեան , և այլն :

Յոյժ ուրախ եմ և գոհ ոչ միայն վասն ներհուն հմտութեանդ՝ որով կը փայլի երկդ , ոչ միայն վասն ազգասիրական եռանդիդ՝ որով մայրական լեզուդ կը ճոխացնես , յաւելլով հին և նոր արհեստակցացդ , զոր օրինակ՝ Մսիթարայ , Ամիր Տօվլէթայ և այլն , Ռեսթէնի և աննման Մանկատածութիւնը գրող հանձարի և բարութեան անձնաւորութիւնն եղող սիրելի անձին (\*) և միւս մեր մանկութեան օրերու բժշկին (\*\*) որ « Արհեստ Երկարակեցութեան » գրած է , և ձեզ ժամանակակից ընտիր առողջարանութիւնները՝ և օգտակար հրահանգիչ յօդուածներ գրող ազգային բժշկաց գործերու վրայ քու գեղեցիկ երկասիրութիւնդ՝ որ է « Պատմութիւն Մարդկային Պատուաստի » , և որ մաքուր հայերէնով յստակութեամբ և պիտուական ծանօթութեամբք ևն , շատերու գրուածներն կը գերազանցէ : Ուրախ և գոհ եմ ոչ միայն ասոնց համար՝ այլ և վասն այն բարոյական աւաւելութեանց որովք լի է գրուածդ . զորօրինակ՝ մարդկային ազգը համաճարակ հիւանդութենէ ազատողին անունը և կեանքը պատմած ատենդ՝ գեղեցիկ տեսութեամբք երախտագէտ լինելու ազդու դասեր կուտաս . և ահա այս բանը քրիստոնէական՝ բարոյական՝ և մարդկային քաղցր պարտաւորութիւն մ'է՝ շնորհապարտ լինել բարիք ընողներուն , որով բարերարք կը քաջալերուին և կը շատնան :

Այս և ասոնց նման տեսութեանցդ և խրատուցդ համար իմ գոհութիւնս յայանելով՝ կը փութամ մեծ շնորհակալութիւններ նուիրել քեզ՝ սիրելի Տօքթէօր , վասն փութոյն՝ զոր ունեցած էք Ձեր գրքին մէջ :

(\*) Վսեմ . Սէրվիչէն էֆէնտի :

(\*\*) Տօքթէօր Փոփովիչ :

ԿՍԻ

ԿՍԻ

ԿՍԻ

մարմնոց առողջութիւնը քարոզած ատեն՝ շմուռնալով նաեւ հոգւոյն քաջառողջութիւնը: Գո՛ւ, Տօքթէօր, Եգուարդ ձենըրի, պատուաստի հեղինակին՝ մարդկային ազգի մեծ բարերարին և մեծ հանձարին իբրեւ զարմացող՝ զայն ազգիդ ծանօթացուցած ատեն, չես մոռնար յիշել թէ՛ այդ մեծ գիտունը՝ իմաստասէրը՝ բնութեան-գաղտնեաց հետազօտիչն՝ բնութեան գիրքը ծայրէ ի ծայր պրպտողն՝ գրքիդ կանխաբանած կենաց պայքարի արի ըմբիշն, անհուն դժուարութեանց, չարայաջող նախանձու ատելութեանց քննութեանց դէմ համբերող շահատակը « բարեպաշտ էր » միանգամայն՝ և անշահասէր, և այլն, և թէ շարունակ Սուրբ Գրոց ընթերցմամբ կը պարտպէր, և Նիւթընի նման կըսէր թէ՛ գիրքերու մէջ առաջին և ընտրելագոյն գիրքը Աստուածաշունչն է, ուր կը սովորէր անշուշտ նաեւ գիտուն և կատարեալ լինելու կանոններն, ուր կը սովորէր մեծ համբերատարութիւն առ ի ստանալ զամենայն՝ մանաւանդ զօգի և զկեանս, կը սովորէր խոնարհութիւն, որով միայն կարող կը լինէր Աստուծոյ արքայութեան՝ ինչպէս նաեւ իմաստութեան և գիտութեանց թափանցել իբր մանուկ, զոր Քրիստոս Տէրն կացոյց ի միջի: ուր կը սովորէր յանձնապատասխան և կամակոր չլինիլ: ուր կը սովորէր յանձնապատասխան և կամակոր չլինիլ, խոնարհիլ և ծունր դնել արարածոց Արարչին անհուն իմաստութեան առջեւ:

Գրքիդ մէջ կարդացի. « ձենըր մեռած ատեն Լօնտոնի արքայական ընկերութեան մի յիշատակագիր ներկայեց թռչնոց չուելուն վերայ. ձենըրի զգայուն հոգին՝ կըսէ Պուսքէ, զարմացմամբ սիրահարեցաւ նոյնքան սքանչելեաց առաջ, և նորա Մուսան մի օրհնութիւն երգեց ի-փառս Արարչին. և յիրաւի մարդ-

կային իմացականութիւնն տակաւին չէ կարողացած մեկնել թռչնոց պարբերական չուն:

Ո՞վ կարող է ըսել մեզ, թէ ո՞ւտի կը գայ նոցա այդ փափաքն կանոնաւորապէս ամեն տարի, և կը մղէ զայնս մի կլիմայէ միւսն, որ անշուշտ աւելի յարմար և աւելի նպաստաւոր է նոցա պահպանութեան: Ի՞նչպէս նոքա ճանաչել են այն հեռաւոր երկիրներն որոց շատերն տեսած իսկ չեն. ո՞վ նոցա ճանապարհը ցոյց է տուել: Ո՞վ է ուսուցել դէպ ի այն կողմ ուղղուիլ. ի՞նչպէս գիտեն թռչունք, որ ծովերէ անցնելու կարողութիւնն ունին: Ի՞նչ բան իրենց կանխապէս կիմացընէ, թէ եղանակն և կլիման միևնոյնը չէ ամեն ժամանակ և ամեն կողմ: Գո՛նէ թէ սպասէին որ ցուրտն սկսի ազդել իրենց վրայ, և սալա մեկնէին, եղելութիւնն այնքան հրաշալի պէտք չէր երեւիլ: Բայց չէ, ամեն տարի գրեթէ միևնոյն տարեդարձի օրն թռչուններն կը միանան առանց խորհրդակցած լինելու՝ իբր թէ իրենց հեռանալն կարգի դնելու համար: Ծընողք իրենց ձագերը կը հաւաքեն, ընտանիքներն իրարու կը մօտենան, և մի քանի փորձերէ ետեւ՝ իբրեւ թէ իրենց ոյժերը չափէին՝ և եթէ օդը նպաստաւոր չէ, մի քանի օր սպասելէ վերջը՝ տարածութեան մէջ կը գահավիժին, և ծովերէն կանցնին տարին երկու անգամ, մերթ Ափրիկէ գնալու և մերթ Ափրիկէէն դառնալու համար»: (Պուսքէ)

Եւ ո՞ գիտէ, ձենըր՝ զոր կ'ըսէք թէ շատ առոյգ էր իր վերջին ժամանակներն իսկ, եթէ յանկարծամահ չլինէր, թերեւս թռչնոց չուէն մարդկային հոգւոց չուոյն անցնէր, և այն խորախորհուրդ և զգայուն հոգին հոգեկան աշխարհին և հոգւոյն յատկութեանց

վրայ մեզ դասեր՝ խրատներ և խորհրդածութիւններ թողոյր, եթէ երբէք թողած չէ, որոց մեք տեղեակ չլինիմք:

Եդուարդ ձենըրի հոգին ունեցող անձինք անշուշտ կը մտածեն և կ'աշխատին, մարմինը համաճարակ հիււանդութիւններէ ազատելու հնարք որոնած ատեննին՝ հոգիներն ալ համաճարակ ապականութիւններէ ազատելու ջանալ:

ձենըրի պէս գիտնական և բարերար անձանց դործերուն մէջ մարմինը և հոգին մրանգամայն իրենց կենաց անդորրութիւնը, դեղն ու դարմանը կը գտնեն:

Օրհնեալ լինին, և շատ ապրին ամեն անոնք, որ բըժիշկ՝ գիտուն և այլն լինելով, միտքերը լուսաւորած՝ և մարմինը բուժած ատեն, չեն թողուր որ հոգիներն տարակուսանաց և յուսահատութեան անդնդոց մէջ գահավիժին: Բնութեան տարերաց ուսանողն անյատակ ծովու վրայ նաւովի մը պէս մրրիկներէ և փոթորիկներէ, խոչ խութերէ և ամեն վտանգներէ ազատ և ապահով մնալու համար կողմնացոյցը չթողուր, և յուսատու սահացոյց և անդնդոց լուսատու Աստղը՝ աչաց և հոգւոյն տեսութենէն չհեռացներ. տարերաց ուսանողն տարերաց մէջ անդնդասոյց կորսուելու չէ:

Սիրելի Տօքթէօր, և ահա դու մի ես ի նոցանէ, որ մատնանիշ կընեն զայն « Որ և ի ծովու ետ մեզ շաւիղ զգուշաւոր » Սաղմոս:

Հօրամոյն բնաւորութեամբ օժտեալ դու հարազատ որդի, ինչպէս դու օրհնութեամբ յիշատակուելու արժանի հօր որդին ես, այսպէս պարկեշտ ուսանողն բնութեան ոչ յանձնադատտան և ոչ կամակոր գիտունը, բարեպաշտ բնադէտը և այլն, այլ երկնաւոր Հօր խմաս-

տութեան լուսոյ ճառագայթն և որդին է անտարակոյս. լուսոյ աղբիւրը մի է, անայլայլելի և անբաժանելի է. այդ անսպառ աղբերէն կ'ելնէ հոգին, որ անդնդոց վրայ սաւառնելով կը տածէ, և լոյս իմաստութեան կը ծագի ճառագայթարձակ, որ խորերը լուսով կողողէ, և զգոյցն ի դոյ ածելով՝ զանձանօթս ի յայտ կը բերէ:

Քու պատուական գիրքդ ոչ միայն ձենըրի, այլ զայն պանծացնող Տիգրանին՝ և Տիգրանին զայդ դատարակութիւնը տուող սիրելի հօր յիշատակին արձանն է յաւերժական:

Օրհնեալ լեր դու և նմաններդ:

Աղօթարար

Ներսէս Պսեփ. Վարժապետեան

1884 Յունիս 10 Օրծագիւղ



Ազգ. — Հաւաքածոյիս մէջ սխալմամբ մոռցուած է դնել Ն. Անդրէասեան յարգելի ուսուցչին ստորագրութիւնն՝ իւր մի բանի թարգմանութեանց ներքեւ:

Առ հայ մայրեր	3	Զաւակաց պարտիք առ	106
Յիսուս ի Բեթելայ սար	5	Ճոռոք	108
Հօրը տուհը	7	Գիշեր	111
Զատիկ	9	Պառլոս	114
Զանգակն	13	Երկու կիներ	116
Մայրական սէր	14	Բարիկ և Լօնտոն	121
Պանդխտին կեանքը	16	Պանդխտին մահը	126
Ստեղծումն մարդոյ	18	Մարդն	127
Հայ օրիորդ մի	20	Ընտանիք	129
Վիսպատ	22	Աստուած	130
[Թեանց	23	Խաչ օգնեա՛ ինձ	135
Ունայնու թիւն ունայնու-	25	Սերեցէք զմիմեանս	136
Բանաստեղծութիւն	27	Զեփիւռ	138
Հայ գրագէտն	30	Մանկիկ և արտուտիկ	139
Լուզակ	33	Իմ մահը	141
Խաւարումն	36	Առ առաւօտ	142
Զկնորսին կինը	38	Վերջին հառաչանք	145
Գլխասիրտ գողը	41	Քոյրն մեռեալ	148
Ֆիւթէն		Գարուն	149
Ի յիշատակ սիրեցեալ մօրս	44	Մնաս բարեա՛ւ	150
Տիկին Ն. Վահանի	46	Բանաստեղծն	152
Շուետացի լուղորդք	49	Աստուած	153
Ողբ ի վերայ բարեկամին	52	Արշալոյս	156
Յառաջ, յառաջ	54	Արաղոյս և Խոյտիտ	157
Խօսք Վսեմ. Գ. Օտեանի	56	Բաժինք	159
Յիշատակ	57	Դդուճ	161
Զախող դէպք մը	59	Մուկ և կով	162
Իւկոլիին որդիներն	63	Էջ դժգոհ	163
Սահակ Պարթեւ	64	Զբաղանի պալատը	165
Տառապանք	72	Աղջիկն մուրացիկ	167
Վարժապետին աղջիկը	74	Սրբուհի մարապետ	
Կինն կրօնասէր	75		
Գամբանական	79		
Մեր եկեղեցեաց մէջ	81		
Ռեմիէն յերուսաղէմ	83		
Ս. Յարութեան Տաճարը	87	Առ Յովհ. քհնյ. Մկրեան	171
Շնորհալույն դերեզմանը	90	» Գարեգին Եպիսկոպոս	173
Փոքրիկ առուն	91	Սրուանձտեանց	174
Ծովիկ	93	» Յով. քհնյ. Մկրեան	177
Վերջալոյս	95	» Ս. Խորէն Նար-Պէյ	179
Զմեռն	97	» Վ. Ֆ. Մարկեան	181
Հայ վարժապետն	100	» Անդրնկ. Թօհաֆճեան	182
Աղբատին ընտանիքն	102	» Տօք. Տիգրան ֆէշտիմալ-	184
Հեւկոյի սարեգարձը	105	ճեան	
Վ. հաստ պատանին և Յոյս			

Ն Ա Մ Ա Վ Ն Ե Ր

3437-3439

«Ազգային գրադարան»



NL0061950

«Ազգային գրադարան»



NL0061949

«Ազգային գրադարան»



NL0061948

